

7-83

946-64

Printed in Turkey

~~188~~

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

ԱՇԽԱՏԱՆՑՈՒԹՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԿՐԻ

ԸՍՏ

ՆՈՐՈԳ ԿԱՐԳԵՅ ՏԻՐՈՒԹՅԱՆՅ


ԱՇԽԱՏԱՄԻԲԵԱԼ

Ի Հ. ՊՕԳՂՈՍԻ ՅՈՎՆԱՆՆԵԱՆՅ

Ի ՄԻԹԻԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷ

1222

9230-57



Ի ՎՆՆԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԻԹԻԱՐԵԱՆՅ

1835 . ՌՄՁԳ

2004

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Լ շխարհը՝ կամ երկիրը մարդուս ժամանակաւոր տունն է. անոր ամէն մէկ մասերը ու դիերը աս տունին զանազան կողմերը ու դատիկոնները (տալէրը) են: Մարդիկ աս զանազան մասերուն մէյմէկ կտորին մէջը՝ ինչպէս մէկ տունին մէջը զանազան տնվորներ՝ կրքնակին: Ինչ ամօթ, ինչ մենծ տգիտութիւն ու անհոգութիւն կրսեպվէր աս տունին մէջը բնակող զանազան տնվորներուն (Ֆախլանէրան) մինակ իրենց նստած տեղը ճանչնալ, ու տունին մէկալ մասերը մէյմը տեսնելու ու ճանչնալու ետեւէ չըլլալ. անոր մէկալ բնակիչներուն վրայ՝ որոնց հետ ամէն ժամանակ կրքնակին՝ ծանօթութիւն մը չունենալ. ու անանկով իրենց բնակութեան տեղը ու իրենց մօտիկ եղող անձինքներուն ինչ ըլլալը չիգիտնալ: Ասոր պէս մենծ ամօթ է մարդուս ժամանակ ու դիւրութիւն ունենալ՝ ու չիքննել չիգիտնալ՝ թէ աս մենծ տունին՝ սյսինքն երկրին՝ ուր ինքը կրքնակի՛ զանազան դիերը ինչ հանգամանք՝ ինչ

ընակիչ ու ինչ վայելչութիւններ ունին, մանաւանդ երբոր իր եղած կողմը՝ դատիկոնը ու խուցը նստելով կրնայ աս ծանօթութիւնները ունենալու:

Ահա աս դիժար ու անկարելի երևցած բանը մեզի հեշտ ու կարելի կընէ Աշխարհագրութիւնը՝ կամ Աշխարհագրութիւնը, որուն մէջը՝ ինտոր հայկի մը մէջ՝ մեր տունը տեղը նստելով՝ կրնայինք կըտեսնենք աշխարհին զանազան մասերը ու դիերը, ամէն մէկ մասին մասնաւոր տեղերը, ամէն մէկ տեղւոյն մէջը եղած բերքերը, վայելչութիւնները, բնակիչները, ու անոնց գործքերը, սովորութիւնները, կրօնքը՝ կամ հաւատքը, արհեստները, գիտութիւնները, և այլն: Ասանկով քիչ ժամանակի մէջ ու առանց աշխատանքի՝ առանց ծախքի կըտեսնենք ու իբր թէ կըպըտըտինք աս մենծ տունին՝ այսինքն մեր երկրին ամէն դիերը:

Աշխարհիս մէջը քիչ մարդ կըգտնուի՝ որ չուզենայ ասանկ ծանօթութիւններ ունենալու, ինչու որ մարդ ինչ տեսակ կեանքի ու վիճակի մէջ ըլլայ՝ աս ծանօթութիւնները իրեն շահ մը կրնեն, ուսումնասէր մարդուն անուանի քաղքըներուն, ուսումնարաններուն ու ասոնց նման տեղերուն վրայ տեղեկութիւններ տալով: Վաճառականին՝ զանազան տեղերուն ու քաղքըներուն առուտուրը՝ ու անոնց մէջը ըլլող ապրանքները խմացընելով, կենցաղակիրթ՝ կամ կըթասէր

մարդուն՝ անուանի քաղքըներուն մէջը ըլլող կենցաղօգուտ ու կրթութեան տեղերը ծանօթ ընելով. ազգասէր մարդուն՝ զանազան ազգերու իրենց ազգը պայծառացընելու ու յառաջ տանելու համար դտած հասարակաց օգտին շահաւէտ միջոցները ցըցընելով. աստուածասէր ու կրօնասէր մարդուն՝ աստուածպաշտութիւնը ծաղկեցընելու համար ամէն դի եղած ժամերը, վանքերը ու բարեպաշտ ընկերութիւնները պատմելով. իսկ ուսանողներուն ու համբալիններուն աս ամէն բաներէն ՚ի զատ իրենց եղած տեղը՝ իրենց հայրենիքին մէջը ըլլող բնական ու քաղաքական գիտնալու բաները առջնին դնելով:

Աս ծանօթութիւնները մարդուս կրթութեանը չէ թէ միայն շատ օգտակար՝ հապա շատ հարկաւոր ըլլալուն՝ կրտսաններ որ ամէն կրթասէր ազգ իր մէջը կը ծաղկեցընէ ու կըտարածէ աշխարհագրական հմտութիւնները, ու հիմակվան ատենս դպրատուններու մէջ սորվելու ուսմունքներուն մէկը աշխարհագրութիւնը եղած է: Տղաք պզտիկուց կըսորվին երկրիս հանգամանքը, բնակչացը որպիսութիւնը, սովորութիւնները, և այլն. ու ասանկով իրենց երկրածանօթութեան ու երկրագիտութեան հիմը տղայութեան ատենը կըդնեն, որ ետքը իրենց շատ մենծ օգուտներու պատճառ կըլլայ: Անրդս երկրիս վրայ տեղ մը հաստատ չիկրնար

կենալ . երբեմն ինքը մինակ՝ երբեմն իր ընտանեացը հետ մէկ տեղէն մէկալ տեղ կերթայ՝ իր բնակութիւնը կրփոխէ . անոր համար շատ աղէկ բան է որ յառաջուց ամէն տեղերուն վրայ զանազան տեղեկութիւններ ունենայ, որ կարենայ իր երթալու ու կենալու տեղը որոշել ու հեռուանց ճանշնալ : Ասկից 'ի զատ զանազան ազգաց պատմութիւնները հաստատ սորվելու համար շատ հարկաւոր է աշխարհագրութիւնը : Ասոր համար իմաստունները աշխարհագրութիւնը ընդհանուր պատմութեան օգնիչ գիտութիւն կրկոշեն :

Արդ՝ աս հարկաւոր օգուտները մեր ազգին մէջը տեսնելու համար շարագրեցինք աս Համառօտ Աշխարհագրութիւնը իբր դասագիրք մը երկրագիտութեան վրայ, որ համբակներուն երկրիս վրայ գիտնալու հարկաւոր բաները, անոր գլխաւոր մասերը, ամէն մէկ տէրութիւնները ու անոնց հանգամանքը ու երևելի տեղերը կը սորվեցընէ, ան ալ ըստ հիմակվան նոր ծանօթութեանց ու կարգաց զանազան տէրութիւններու : Թէ որ համբակ մը աղէկ միտք կառնէ ինչ որ աս համառօտ աշխարհագրութեան մէջը կայ՝ կրնայ երկրիս ամէն դիերուն տեղեակ ըլլալ, ու անկից մենձ օգուտ գտնելով՝ իր սրտին մէջը փափագ կրծնանի ասանկ բաներու վրայ ալ աւելի ծանօթութիւններ ունենալ . ու անով կամ աւելի բան գիտցողներուն ու աշխարք պտը-

Ե Շ Խ Է Ր Հ Ե Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Տ Գ Ն Յ Ե Ի Է Ն Դ Ե Լ Ո Ի

Ե Գ Ը Ն Ը Կ Ը

Ամէն գիտութիւն՝ ինչչափ դժուար ըլլայ՝ երբոր աղէկ ճամբով ու եղանակով կը սորվեցվի ուսանողներուն՝ շատ կը դիւրիննայ ու քիչ ատենվան մէջը կը սորվուի. նոյնպէս ամէն գիտութիւն՝ ինչչափ որ հեշտ ըլլայ՝ երբոր աղէկ ոճով ու եղանակով չի սորվեցվիր համբալներուն՝ շատ կը դիժարնայ ու սորվողներուն միտքը շիմտներ։ Եւ չիտարհագրութիւնը հեշտ ու զուարճալի գիտութիւն մը ըլլալուն՝ ուսուցիչներուն ու ուսանողներուն ամենեւին դժուարութիւն մը չիտար՝ միայն թէ աղէկ կարգով ու եղանակով սորվուի։ Ու ասիկա կը ըլլայ՝ թէ որ աս ետեւի կանոնները կը պահանջուին։

Վասն ուսումնական՝ կամ մաթէմատիգական աշխարհագրութեան մէջը պէտք է նայի ուսուցիչը որ՝ ինչչափ կրնայ՝ կարճառօտ ծանօթութիւններ տայ համբալներուն։ Ինչու որ չափաբերութիւնը՝ որ է մաթէ-

մաթիգան՝ մասնաւոր գիտութիւն ըլլալուն՝ ու մաթէ-
մաթիգական աշխարհագրութիւնը աստղաբաշխութեան
մէկ մասը ըլլալուն՝ համբալինները ամէն բանը աղէկ՝ կամ
հիմնովին չեն հասկընար, ինչպէս որ ան գիտութիւնը
չխորվին : Անոր համար պէտք չէ որ համբալիններէն ա-
սոր վրայ երկայն ու կատարեալ ծանօթութիւն պա-
հանջէ :

Արրորդ՝ բնական՝ կամ ֆիզիգական աշխարհա-
գրութեան վրայ պէտք է աւելի ընդարձակ ու երկայն
ծանօթութիւններ տալ համբալիններուն, զի ասոնք զիւ-
րաւ հասկանալի ու զուարճալի ըլլալնուն՝ սորվողները
շուտով միտք կառնեն գլխաւոր ու հարկաւոր գիտե-
լիքները . մանաւանդ որ շատ բանը իրենք համբալինե-
րը՝ թէ որ ասանկ բաներու սէր ու փոյթ ունին՝ կրնան
փորձով ու քննելով տեսնել, ու գիրքէն սորվածնին
մտվընուն մէջը աղէկ հաստատել :

Արրորդ՝ քաղաքական աշխարհագրութեան՝ կամ
երկրի զանազան մասերու վրայ դաս տալու ու խօսելու
ատենը պէտք է նայիլ ամէն բանէն առաջ՝ որ սոր-
վողները ամէն մէկ տէրութեան՝ կամ երկրի մասին սահ-
մանները աղէկ միտք առնեն գիտնան, որ երբոր աշ-
խարհացոյցներուն վրայ տեղ մը փնտռելու ըլլան՝
շուտ մը գտնան : Ատքը պէտք է իրենց առջին դնել
ու միտք առնել տալ ամէն մէկ երկրին կամ տէրու-

Թեան գետինին բնական հանգամանքը, գլխաւոր լեռներուն ու գետերուն, անունները, և այլն, գլխաւոր բերքերը, մանաւանդ ան բերքերը՝ որ տեղւոյ մը յատուկ են: Սենք աս բաներուն վրայ այնպէս կարծ խօսքով գրեցինք՝ որ համբակները զանոնք շատ հեշտ կրնան բերան առնել, ու անով ամէն բանը իրենց միտքը աղէկ կըմնայ: Ալ շարժապետը աս բանիս մէջը կրնայ օգնել իրենց՝ ան բաներուն վրայ իրենց աւելի տեղեկութիւններ տալով, որոնք ինքը կամ ուրիշ ընդարձակ աշխարհագրութիւններէն՝ կամ իր անձնական ծանօթութիւններէն գիտէ:

Ամէն մէկ քաղաքին ու մասնաւոր տեղերուն վրայ խօսված ատենը իրենց բնակչաց թիւը, առուտուրի մէջ երևելի ըլլալը, ու իրենց մէջ բարեպաշտական, ուսումնական ու կենցաղօգուտ տեղերը պէտք է բերան առնել տալ՝ աս ալ աւելի ամէն մէկ երկրին մայրաքաղաքներուն ու երևելի տեղերուն մէջը: Հոս ալ վարժապետը պիտի ջանայ իր աշակերտներուն ճոխ տեղեկութիւններ տալու ամէն մէկ քաղաքներուն ու տեղերուն վրայ որ աս գիրքին մէջը յիշված են: Սակ չիյիշված տեղերն ալ՝ որոնց վրայ գիտնալու արժանի ծանօթութիւններ կըգտնուվին՝ պէտք է որ մասնաւորապէս աւանդէ համբակներուն, որով անոնց

աւելի զուարճալի կը լլայ աշխարհագրութիւն սորվելը, ու սորվածնին միտվընին կըմնայ:

Ըս բաներուս մէջը շատ օգնութիւն ու դիւրութիւն կըգտնէ ուսուցիչը, ինչպէս նաև համբալը ու ամէն աշխարհագրութիւն կարգացողը՝ թէ որ իր աչքին առջին միշտ աշխարհացոյց մը ունենայ, ուր կարենայ գտնալու տեսնելու ան տեղը, որուն վրայ կըխօսվի: Աշխարհացոյցը կենդանագիր պատկերի նման է, ու ինչպէս որ մարդու մը կերպարանքին ու ուրիշ արտաքին հանգամանացը վրայ խօսելէդ ետև՝ կամ խօսած ատենըդ՝ թէ որ իրեն պատկերը լսողներուն կըցուցունես՝ ըսածներդ աւելի աղէկ կիմանան ու անոր կերպարանքը իրենց միտքը աւելի կըտպաւորվի, ասանկ ալ աշխարհացոյցներուն վրայ երկրի զանազան կտորներուն որ դի՛ որ կլիմայի տակ ու որ երկիրներու սահմանակիցը լլալը յայտնի ու հեշտ կիմանանք ու աչվըներնուս առջևը կըտեսնենք:

Հիմայ աս կարճառօտ յառաջաբանը լըմընցընել ուղեւում կը յուսանք՝ որ բարեմիտ ընթերցողը թէ որ մէկ քանի անուանի տեղեր ու քաղաքներ ու մէկ քանի կարևոր ծանօթութիւններ աս մեր համառօտ աշխարհագրութեան մէջը չիգտներ նէ՛ մեզի չիմեղադրեր՝ մտածելով որ ընդարձակ բազմահատոր աշխարհագրութիւն-

ներուն մէջն ալ մարդ ամէն տեղւոյն վրայ ամէն ծանօ-
 թութիւնները չիկրնար տալու, ինչպիսի աւելի ասանկ
 փոքր միահատոր գիրքի մը մէջ : (Իւր Լստուած մե-
 ղի ժամանակ, դիւրութիւն ու միջոցներ կուտայ՝ գուցե
 իր ատենին քիչ մը աւելի ընդարձակ աշխարհագրու-
 թիւն ալ գուրս կըհաննէք՝ ի վայելումն ազգիս հայոց :

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Բնդհանուր Օճանթուծիւն

Ուսումնական, Բնական ու Քաղաքական

Աշխարհագրութեան :

1.

Աշխարհագրութեան ինչ իւրաքանչեւ, ու ժանի՝
իւրաքանչեւ :

Աշխարհագրութեան կամ Արեւագրութեան կըսորվեցընէ մեզի մեր երկրին ինչ ու ինտոր ըլլալը, ու անոր վրայ եղած բաները : Ու իրեք կըբաժնըվի Ուսումնական կամ Հաճութեամբ (Մեթոդիկական), Բնական (Ֆիզիկական) ու Քաղաքական :

Ուսումնական աշխարհագրութիւնը՝ երկրին ձևին, մեծութեանը, շարժմանը, պէսպէս չափմանցը ու ասոնց նման հանդամանացը վրայ կըխօսի :

Բնական աշխարհագրութիւնը՝ հողին կամ ցամաքին, ջուրին, օդին, զանազան բերքերուն ու մարդկան վրայ կըխօսի :

Քաղաքական աշխարհագրութիւնը՝ երկրի վրայ ըլլող զանազան տէրութիւններուն ու քաղաքներուն՝ ու անոնց բնակչացը սովորութիւններուն, օրէնքներուն, ու ասոնց նման բաներու վրայ կըխօսի :

Արևիկը Էնչ Գեորգի Գեորգի *) է, ու Էնչպէս Են ունի :

Արկիրը ինք իրմէ մուտ ու մէջէն լուս չանցնող մարմին մի է կլոր ձևով . բայց երկու դիերը, այսինքն երկու բեռններուն տակը (Գե. 6.) քիչմը ներս գացած : Արկրի կլոր ըլլալը կիմանանք նախ՝ անկից որ, արևելքի դիու (Գե. 4.) տեղերուն աւելի առաջ արևը կը տեսնուի ու ցորեկ կը ըլլայ, քան թէ դէպ 'ի արևմուտքը ըլլող տեղերուն : Ինչպէս ըսեմ, մեզմէ 15 աստիճան (Գե. 12. Յանօն-Էն Բեզ.) դէպ 'ի արևելք հեռու եղած տեղերը՝ մեզմէ մէկ ժամ (սակալ) առաջ արև կը տեսնան . նոյնպէս մեզմէ 15 աստիճան դէպ 'ի արևմուտք հեռու եղած տեղիանքը մեզմէ մէկ ժամ ետքը արև կը տեսնան, ու այսպիսի համեմատութեամբ իմացիր բոլոր երկրիս բոլորտիքը : Ուստի թէ որ երկիրը կլոր չէր ըլլար նէ՛ այսպիսի համեմատութի չէր ըլլար . հապա ամէն դին մէկ ատեն արև կը տեսնային ու ցորեկ կընէին : Արկրորդ՝ շիտակ դաշտի մը, կամ ընդարձակ ծովու վրայ հեռու եղած մեծ մարմիններուն, ինչպէս աշտարակներուն, նաւերուն և այլն, պինտ առաջ գլուխները կերևան, ու քանի որ իրենց կըմտիկըրվի՛ վարի դիերն ալ կերևան . աս ալ կըրըցընէ որ երկիրս կլոր է . ինչու որ թէ որ շիտակ ըլլար՝ ծովու վրայի նաւերուն բոլոր մարմինը մէկէն պիտի երևար հեռուանց : Արրորդ՝ երկրի շուքը՝ որնոր լուսնոյ խաւարման ատենը լուսնոյ վրայ կերևնայ՝ միշտ կլոր է . անանկ է նէ երկրին բուն մարմինն ալ կլոր է : Չորրորդ՝ շատ ճամբորդներ երկրի բոլորտիքը շատ հեղ պտրտեցան նուով, գրեթէ միշտ դէպ 'ի արևմուտք երթալով, ու

*) Ուսումնասիրելու ան ամէն բանին հարմին իրենն՝ որնոր Էրկայն-Էն, լայն-Էն, ու խորանի-Էն ունի :

դարձեալ եկան իրենց տեղը դարձան, աս ալ չէր ըլլար՝
 թէ որ երկիրը կըր չէր ըլլար: Արկրին կըր ըլլալէն
 կիմանանք, որ իր վրայի բնակիչներէն ոմանք իրենց
 ոտվընին ուրիշ բնակչաց ոտվըներուն դարձուցած են:
 Աւ ասոնք հախոսիւնայս կըսվին իրարու:

3.

Ինչպէ՞ս իւրաց գիշեր ցորէի, ու ուստի՞ իւրագործանի գո-
 րայն չորս էղանալիւնընն գնանալանն-լիւնը:

Արեգակը *) մէյմը ամէն օր 24 ժամի մէջ
 արեւելքէն դէպ 'ի արեւմուտք երկրիս բոլորտիքը կըպը-
 տրտի, ու ասով կըլլայ Բնախոս օր. այսինքն ան ատենը
 որնոր արեւին ելլալէն մինչուկ մտնալը կըքշէ՝ ցորէի կըս-
 վի. ու արեւին մտնալէն մինչուկ ելլալը՝ գիշեր: Ս'չյ
 մ'ալ զողիակոսին մէջ տեղը ծիր արեգական (ԳԼ՝ 14.)
 ըսված գծին վրայէն՝ որնոր 360 աստիճան (ԳԼ՝ 12.
 Ժանօլն-լիւնն ՏՉ.) բաժնըված է՝ ամէն օր մէյմէկ
 աստիճանէն քիչմը պակաս արեւմտքէն դէպ 'ի արեւելք
 կըքալէ: Ուստի ասոր համար արեւին իր տարեկան ըն-
 թացքը 365 օր, 5 ժամ, ու 49 րոպէի մէջ կըկա-
 տարվի: Աւ արեւին աս տարեկան ընթացքովը կըլլան
 տարւոյն եղանակներուն փոփոխութիւնները ու պէսպի-

*) Աշխարհի գիշերին լրաց գիշերուր իրե՛ս իւրճիւնիւր է-
 ղան, ու գրանդիւնընն անուամբը ինչիցան Պաղո-
 մեան, Ասպերնիկեան, ու Տիրոնեան. Բայց ասոնց
 Տեղի՞ն գիշերուրը ՊարզՏեղանը ու Արեւիւնիւն-
 սինը էղան: ՊարզՏեղան էրիւրն աշխարհի Տեղ Կեղե
 անչարճ գրաւ. ու արեգակին էրիւն շարժան գրաւ,
 Տեյմը ըստ աւելն օր էրիւնին հէր Տեղալը
 24 ժամի Տեղ էրիւրն Բոլորտիւր իւրաբար: Գրով
 իւրաց ցորէի ու գիշեր. Ե Տեյ մ'ալ աւելն Գորէ զը-
 գիւնիւնն լրացիւն էրիւրն Բոլորտիւր իւրագոր, Ե ասով
 ալ չորս էղանալիւնընն պէսպիսու-լիւնը իւրագորովն

սութիւնները : Ինչու որ՝ աս պըտուտով արևը երբեմն
երկրիս մէկ կողմը, այսինքն դէպ ՚ի հարաւ, ու երբեմն
ալ մէկալ կողմը դէպ ՚ի հիւսիս ծոնելով՝ իր ճառագայթ-
ները երբեմն շիտակ ու երբեմն ծուռ երկրիս զանա-
զան մասերուն վրայ կարձակէ . որով կըլլայ Գարուն,
ամառ, աշուն, յիւն :

4.

Աշխարհիս Գլխաւոր Իրավերը որոնք էն :

Արևուն մանալէն ու ելլելէն կորոշներ երկրիկամ
աշխարհի դիերը : Ան դին՝ ուր որ արեգակը կելլայ,
կըսվի արևելք . իսկ ուր որ կըմանէ՝ կըսվի արևմուտք :
Արևին ելած դին կամ արեւելքին դին իմանալէն ետև՝
աշխարհիս մէկալ դիերը իմանալը խիստ դիւրին է .
երեսդ արևուն ելած դին դարձուր, ետևդ եկած դին
արևմուտք է, աջ դիդ հարաւ, ու ձախ դիդ հիւսիս :
Ասոնք են աշխարհիս չորս գլխաւոր կողմերը :

5.

Աշխարհագիւրծերը էնչ եղանակաւ էրկրիս մակերեսայլը Տըր
աշին ասընքը իրենքէն :

Արկրին վրայ եղած ամէն բաները յայտնի ցըցը-
նելու համար՝ աշխարհագիրները գունաւ մը հնարեցին,

ըստ : Իսկ Արկրիսին սը արեւը աշխարհին Տըր արեւը
անշարժ գրտաւ . ու էրկրին էրկրաւ շարժումս գրտաւ .
Տըր Տը իր ասանցին վրայ, ու աս պարտաւ իրւրայ
ըստ ցորելի ու գիշեր . ու Տըր մ' ալ արեգակուն
Բոլորարեւը՝ էրկրին արարելան պարտաւ գրտաւ, ու
ասով ալ եղանակներու փոփոխութիւնները իրւրան
ըստ : (Ս) Երկրիս հիմակվան արեւն Արկրիսին սը արեւ
էլէ պարտցնէրու Տըր արեւն էլէ է . Բայց Տըր ասանց
սինս-լիւնը փիլիսոփաներուն լեզու արարով աշին
էրկրայածին իկօրէ Տըր աշխարհագրական ծանօթութիւն
ները յատուղ իրենքէն :

որուն վրայ ջուրը ցամաքը, ու ուրիշ եղած բաները կընկարվին: Ասի կըսվի արհեստակէրս գունդ էրլը: Մայց բոլոր երկրի մակերևութին, այսինքն երեսին վրայ եղած բաները մէկէն մեր աչքին առջին դնելու համար՝ աս գունտը երկու կէս կըբաժնեն, ու շիտակ թուղթի վրայ կընկարեն. ու աս կէս գունտը կըսվի՝ Կապուտ, որուն վրայ զանազան աշխարհագրական գիծեր, շրջանակներ, ու աստիճաններ կըքաշվին: Ասե երկրի լեռերը, դետերը, քաղաքները և այլն, կընկարվին շիտակ թուղթերու վրայ քառակուսի ձևով, ու աս թուղթերն ալ կըսվին աշխարհացոյց: Հիմա գանք ասոնց վրայի քաշված շրջանակները ու գիծերը մէկիկ մէկիկ մեկնենք:

6.

Ինչ է երևի աստացի ու բնականը:

Աստացի էրլը կըսվի ան գիծը կամ թելը՝ որնոր երկրիս կեդրոնէն *) անցնելով մէկ դիէն մէկալ դին, հարաւէն դէպ ՚ի հիւսիս կըձգվի. ու իր երկու ձօթերուն մէկը, այսինքն հիւսիսային կողմը եղողը՝ կըսվի հիւսիսային բնական. իսկ հարաւային դին ըլլող ձօթը կըսվի՝ հարաւային բնական: Ալ երկիրը աս առանցքին վրայ՝ ինչպէս մէկ անիւմը իր մէջ տեղի փայտին բոլորտիքը՝ կըպըտըտի:

7.

Ինչ շրջանակ է հասարակածը:

Արկրի գունտը մէջ տեղաց՝ արևելքէն դէպ ՚ի արևմուտք մեծ գիծ կամ շրջանակ մը երկու բևեռներէն հաւասար հեռաւորութեամբ կըշրջապատէ, որ կըսվի՝ հասարակած: Ասիկա երկրի գունտը հաւասար երկու կէս,

*) Վտարի ինչ ներսի գիծն ինչ արեւը մտածված ինչպէս, որնոր գունդին մակերևութին՝ այսինքն էրեսին՝ ամեն ինչմանէ հասարակածն հեռաւոր է՝ Արկրոն ինչպէս:

այսինքն Հիւսիսային Ինսագոնի ու Հարաւային Ինսագոնի կրթածնէ : Արկրի վրայ ամէն տեղերը՝ որ Հասարակածին հիւսիսային դին, կամ հիւսիսային կիսագունտին վրայ են՝ կըսվին Հիւսիսային, իսկ որոնք որ հարաւային դին՝ կամ հարաւային կիսագունտին վրայ են՝ կըսվին Հարաւային :

8.

Որոնք էն արեւոտայ ռ- Բեւեռային շրջանայինը :

Հասարակածին երկու դիէն 23 ու կէս աստիճան (41° 12') հեռաւորութեամբ երկու դիծեր կամ շրջանակներ կան, որոնց հիւսիսային կողմը եղածը՝ արեւոտայ իւրիւրի կըսվի . իսկ հարաւային դին ըլլողը՝ արեւոտայ այժեղջէր կանուանվի : Արբոր արեգակը խեցգետնի արեւադարձը կըհասնի՝ մեզի (հիւսիսային կիսագունտի վրայ ըլլողներուն) ամառ է . անոր համար աս արեւադարձը մեզի նայելով՝ կըսվի նաև ամառային արեւոտայ . իսկ երբոր այժեղջէր արեւադարձը կըհասնի՝ մեզի ձմեռ է . անոր համար աս արեւադարձը նաև ձմեռային արեւոտայ կըսվի : Այն ուրիշ երկու պզտի շրջանակներ բեւեռներէն 23 ու կէս աստիճան հեռու . հիւսիսային կողմինը շրջանային կըկոչվի . իսկ հարաւային կողմի եղողը շրջանային հայտնային կըկոչվի : Բայց ատ արեւադարձներէն ու բեւեռային շրջանակներէն ի զատ՝ աշխարհագիրները Հասարակօրէն 16 զուգահեռական *) շրջանակներ մէկ զմէկէ տասնական աստիճան հեռաւորութեամբ գունտին վրայ կընկարեն, ու թը հատը հիւսիսային կողմը, ու թը հատն ալ հարաւային կողմը . որոնք որչափ որ բեւեռներու կըմօտենան՝ այնչափ ալ կը պզտիկնան :

*) Ս'էլ զէլէ տէն իողմանէ հասարակաւ հեռու եղող գիծերը . Օուգահեռական իրիւրիւր :

9.

Երևի գօթիները որոնք էն, ու թանի՛ հաս էն :

Չորս գլխաւոր զուգահեռական շրջանակները , այսօրինքն արեւադարձները ու բւեռային շրջանակները՝ երկիրը Հինգ գօթի , կամ բնական մաս կըբաժնեն իրենց տարութեան ու ցրտութեան չափին համաձայն : Աս գօթիներէն մէկը՝ այրեցած կամ փոխգին գօթի կըսվի . որուն մէջի եղած տեղերը սաստիկ տաք կըլլայ . ինչու որ արեգական ճառագայթները աս տեղերուն վրայ շտկէ շիտակ , կամ քիչ ծուռ կիյնան , որնոր սաստիկ տարութեան պատճառն է : Աս գօտւոյ տակ կիյնան երկու արեւադարձներու մէջ եղած երկիրները . աս գօտւոյ լայնութիւնը 47 աստիճան է . տարին երկու անգամ արեգակը հոն գագաթներնէն (Ենի-Ենի-Ենի) կանցնի . բայց արեւադարձներու տակ եղողներուն՝ տարին մէկ անգամ : Վիշերնին ու ցորեկնին անհաւասար է , հասարակածին տակը եղողներէն ՚ի զատ . ինչու որ հոն գիշեր ցորեկ միշտ հաւասար է , այսինքն 12 ժամ գիշեր է , ու 12 ժամ ցորեկ :

Աս գօտիներէն երկուքը Բարեխառն գօթիներ կըսվին . որոնց մէջի եղած տեղերուն տաքն ալ ցուրտն ալ չափաւոր բարեխառն է . ինչու որ արեւուն ճառագայթները աս տեղերուն վրայ ծուռ կամ քովանց կիյնան : Աս գօտիներուն մէջն են երկու արեւադարձներէն մինչուկ երկու բւեռային շրջանակները եղած տեղերը , որոնք որչափ որ դէպ ՚ի բւեռային շրջանակները մօտիկ են՝ այնչափ աւելի իրենց օրերնուն երկայնութիւնը կերկրննայ ու կրկարճնայ : Տիւսիսային կողմը եղածը Հիւսիսային Բարեխառն գօթի կըսվի . իսկ հարաւային կողմինը՝ հարաւային Բարեխառն գօթի կըսվի : Աս գօտիներու մէջ տարւոյն չորս եղանակներուն սքանչելի կտրգը կըպահսվի . բայց ասի ալ պէտք է գիտնալ որ , թէ որ մէկ հիւսիսային բարեխառն գօտւոյ մէջ գարուն է՝ հա-

բաւային բարեխառն գօտուոյ մէջ աշուն է, կամ թէ որ մէկուն ամառ է՝ միւսին ձմեռ է:

Իսկ մէկալ երկուքն ալ՝ ցրտային գօտիներ կրսվին. որոնց մէջի եղած երկիրները շատ ցուրտ կրլան. ինչու որ արևուն ճառագայթները ասոնց վրայ շատ ծուռ կամ կողմնակի կիյնան: Աս գօտիներուն մէկը կրսվի հիւսիսային ցրտային գօտի. իսկ միւսը հարաւային ցրտային գօտի: Աս գօտիներուն մէջն են բևեռային շրջանակներէն մինչուկ բևեռները եղած տեղերը: Աս գօտիներու մէջ գիշերը ու ցորեկը ուրիշ գօտիներէն շատ տարբեր են. ինչու որ տարին ատեն մը արևի երես ամենևին չեն տեսներ, ու ատեն մ' ալ միշտ կրտեսնեն: Իսկ բուն բևեռներու տակ եղող երկիրները՝ վեց ամիս միօրինակ ցորեկ կրնեն, ու վեց ամիս ալ գիշեր. բայց մութ գիշերը հազիւ երկու ամիս կրտեէ առաւօտեան արշալուսոյն համար, որնոր դեռ արևը չիծագած երկու ամիսի չափ կրտեէ. նոյնպէս երեկոյեան նուազ լուսոյն համար, որնոր երկու ամիսի չափ արևը մտնելէն վերջը կրտեէ:

10.

Ինչ բան է Բաժինը, ու Ժանի՛ է:

Սերը (տէ՛ 8.) յիշված զուգահեռական շրջանակներէն ՚ի զատ՝ ուրիշ զուգահեռական շրջանակներ (որոնք թէպէտ կիսագունաներու վրայ քաշված չես տեսներ, բայց կրնան քաշվիլ.) երկիրը զանազան Բաժիններ կամ Իլեմաներ կրբաժնեն, որոնք ամէն տեղերուն հասարակածէն ունեցած հեռուութիւնը, ու անանկով ամառվան ու ձմեռվան օրերուն երկայնութեան ու կարճութեան տարբերութիւնը կորոշեն: Ասոնք կրսվին չափաբերական կամ ուսումնական (Ճալեմալեգական) Բաժին կամ Իլեմայ, որոնք կրցըցընեն հասարակածին մէկ դին կամ մէկալ դին՝ երկու զուգահեռական շրջանակներու մէջ եղած տեղանքը՝ ուր տարւոյն պինտ երկայն օրը՛կէս ժամ, կամ մէկ ամբողջ ամիս աւելի է իր մօտիկ տեղւոյն պինտ

երկայն օրէն, հասարակածէն դէպ'ի բեւեռները երթալով : Հասարակածէն մինչուկ մէկ բեւեռային շրջանակը՝ 24 բաժին է, որոնց պինտ երկայն օրերուն իրարմէ ունեցած տարբերութիւնը՝ միայն կէս ժամ է : Իսկ մէկ բեւեռային շրջանակէն մինչուկ իր բեւեռը՝ 6 բաժին է, որոնց պինտ երկայն օրերուն իրարմէ ունեցած տարբերութիւնը՝ մէկ ամիս է : Ասանկով 30 ուսումնական բաժին կամ կլիմայ կը լլայ : Բնություն (Ֆիզիոլոգիան) ինչո՞ւ ուրիշ է (դէպ 23) :

11.

Որն է միջօրէ-ություն շրջանակը :

Արկրի գունտին վրայ ուրիշ գիծ, կամ շրջանակ մ'ալ կայ միջօրէ-ություն ըսլած, որ հասարակածին մէջ տեղաց հիւսիսէն դէպ'ի հարաւ քաշված է. ու երկրի գունտը երկու կէս կը բաժնէ, այսինքն՝ Ինտեր-տրոպիկալ ու Ինտեր-տրոպիկալ արեւոր-արեւմտ : Աս գիծը կը սլի միջօրէական, կամ կէսօրվան՝ ինչու որ երբոր արեգակը ատ գիծին վրայ կը հասնի՝ անոր տակը եղած տեղւոյ նկատմամբ՝ արեգակը իր օրական ընթացքին կէսը կատարած կը լլայ՝ ու այսպէս հոն տեղը կէս օր կը լլայ : Աս միջօրէական շրջանակները որոշ թիւ մը չունին. ինչու որ ամէն տեղ զատ զատ միջօրեայ ունին, թէ որ ասոնց ամէնն ալ քաշվելու ըլլային, աշխարհացոյց թուղթերուն վրան կը սեւեւար, ու ուրիշ բան գծելու տեղ չէր մնար : Ուստի անոր համար աշխարհագիրները արուեստակերտ գունտի վրայ մէկ շարժական միջօրէական մը հնարեցին. որպէս զի առանց մէկ շփոթութեան ամէն տեղ զատ զատ միջօրեայ ունենայ : Ինչու որ՝ որ տեղը որ ատ շարժական միջօրէականի տակ կը բերվի անոր միջօրէական կը լլայ : Բայց ատ շարժական միջօրէականէն ՚ի զատ՝ աշխարհագիրները գունտին աստիճանները զիւրութեամբ համընկու համար՝ 36 միջօրէական շրջանակներ կը նկարեն, տասնական աստիճան մէկը մէկալէն հեռու : Որոնք որչափ բեւեռներու կը լլայինն՝ այնչափ ալ մէկը մէկալին

կրմօտենայ: Ատոր համար հասարակածին վրայ եղած երկայնութեան աստիճանները՝ բևեռի մօտ եղած երկայնութեան աստիճաններէն աւելի շատ մղոն կը պարունակեն: Աւտ 36 միջօրեական շրջանակներէն մէկն ալ առաջին միջօրեայ կը դնեն, ու ասկից սկսեալ արեւմտքէն արեւելք երթալով կը համարեն հասարակածին աստիճանները: Աւտ աս առաջին միջօրեական շրջանակը կը դրվի Ափրիկէի Վանարեան կամ Արանելեաց կղզիներուն մէկուն վրայ, որ կը սվի Արկաթի (Ֆէրուս) կղզի:

12.

Աշխարհագրական էրկայնութիւնը ու լայնութիւնը է:

Տեղւոյմը առաջին միջօրեական շրջանակէն դէպ 'ի արեւելք կամ արեւմտք ունեցած հեռույութիւնը՝ կը սվի աշխարհագրական էրկայնութիւն. թէ որ տեղը արեւելեան կիսագունտին վրայ է՝ արեւելեան էրկայնութիւն կը սվի. իսկ թէ որ արեւմտեան կիսագունտին վրայ է՝ արեւմտեան էրկայնութիւն: Իսկ հասարակածէն դէպ 'ի հիւսիս կամ 'ի հարաւ տեղւոյմը ունեցած հեռույութիւնը կը սվի աշխարհագրական լայնութիւն. թէ որ տեղը հիւսիսային կիսագունտին վրայ է՝ կը սվի հիւսիսային լայնութիւն. իսկ թէ որ հարաւային կիսագունտին վրայ է՝ հարաւային լայնութիւն: Աս աշխարհագրական երկայնութիւնը ու լայնութիւնը՝ երկրի զանազան տեղերուն զիրքը, ու իրարմէ ունեցած հեռույութիւնը կիմացընեն: Հասարակածին վրայ երկայնութեան աստիճանները սյսիւնքն տեղւոյ մը առաջին միջօրեական շրջանակէն ունեցած հեռույութեան չափը քաշված են. իսկ միջօրեական շրջանակին վրայ նշանակած են լայնութեան աստիճանները տասը տասը կամ հինգ հինգ թուով, ինչպէս 10 . 20 . 30 . և այլն. կամ 5 . 10 . 15 . 20 և այլն *):

*) Ուսումնասանելը առէն Տէի շրջանակը՝ իմ իւր Գիծը 360 աստիճան իմ հաս իր բաժնէն. անոր համար հասարակածին

13.

Ինչպիսի եղանակաւ արեւոյսը Երկայնութիւնը ու լայնութիւնը իւրօրինակէն արեւ-եաստի-երօ Գոնօրին զրայ :

Պրտուացոր գունտը ու նոյն տեղը բեր միջօրէին տակը, և նայէ որ միջօրէական շրջանակին որ աստիճանին տակը կիյնայ նոյն տեղը. ահաւասիկ ան աստիճանն է ան տեղւոյ լայնութիւնը : Վարձեալ գունտը անշարժ պահելով, նայէ հասարակածին որ աստիճանը նոյն միջօրէական շրջանակը կրկտրէ ահաւասիկ ան աստիճանն ալ նոյն տեղւոյ երկայնութիւնն է : Վոյնպէս ալ տեղւոյմը երկայնութիւնը ու լայնութիւնը գիտնալով՝ գունտին վրայ ան տեղը դիւրաւ կրնաս գտնալ. այսինքն նախ գտիր երկայնութեան աստիճանը հասարակածին վրան, ու բեր միջօրէական շրջանակին տակը՝ և գունտը անշարժ պահելով՝ նայէ միջօրէական շրջանակին վրայ լայնութեան աստիճանը. ահաւասիկ անոր տակը նոյն խնդրած տեղը կրգտնես :

աւրտածին ու միջօրէականին շրջանակները, աշխարհացոյցներուն ու Երկրի Գոնօրին զրայ որիչ հարած ժամ Գիծերը 360 աստիճան իւրօրինակէն : Եւ նաև մէկ աստիճանն ալ 60 հաս իմ ժայրիւնն իւրօրինակէն. ու ամէն մէկ ժայրիւնն որիչ 60 հաս իմ հանրաման՝ իմ Երկրորդական ժայրիւնն իւրօրինակէն : Որովհետեւ արեւոյսը 24 Ժամէ մը մը Բոլոր Երկրի Գոնօրին Բոլորութիւն՝ ուստի Բոլոր աս 360 աստիճաններուն զրայովն՝ արեւելէն արեւմտէն իւրօրինակէն (ըստ Երեւութի), անոր համար յայտնի է որ շրջան ժայրիւնն մը մէկ աստիճանն զրայ իւրօրինակէն. որով Երկրի ամէն արեւելքուն արեւմտէն շրջանակն Երեւութի մաննց միջօրէական Գիծերուն ու իւրօրինակէն մը մէկ արեւելքութիւնն իւր :

Օ՛րբ արեգակուն, ի՞մ ծիբ խաւարման ո՛ր շրջանին է :

Օ՛րբ արեգակուն, ի՞մ ծիբ խաւարման կըսվի երկրի գունտին վրայի ան գիծը, որնոր հասարակածին շրջանակը քիչ մը ծուռ կըկիսէ, անանկ որ՝ իր երկու ծայրերը միջօրեական շրջանակին վրայի 23 աստիճանին ու 28 վայրկեանին վրայ կուգան : մէկ ծայրը հիւսիսային բևեռին դին, ու մէկալ ծայրը հարաւային բևեռին դին : Արեգակը ատ ծիրին վրայէն (ս. 3.) պտտելով՝ երբեմն երկրիս մէկ կողմը կըծըռի, ու երբեմն մէկալ կողմը : Աս ծիրը մեր ամիսներուն համրանքին համաձայն՝ 12 մաս կըբաժնըվի, աս մասերն ալ 30 աստիճան կըբաժնըվին, որոնց բոլորին վրայէն տարին մէկ անգամ արեգակը կըքալէ : Աս 12 մասերը կըսվին տասերկու ինդրանիւրդնիւր, և աս կենդանակերպներուն եղած շրջանակը գրեթէ 18 աստիճան լայնութիւն ունի : կէսը ծիր խաւարմանին մէկ կողմը, կէսն ալ մէկալ կողմը, ու աս շրջանակը կըկոչվի ինդրանիւրդնիւր (չորիւրդն) : Աս կենդանակերպները ասանկ կընկարվին ու կանուանվին :

Մ իւյ : Պ իւրդնիւր : Ռ իւր : Շ յոյժեղնիւր :
 Ծ ցուլ : Օ սուր : Պ իւրիւր : Պ ջըհուս :
 Ա իւրիւր : Պ իւր : Գ յուրիւր : Պ յուրիւր :

Առջի իրեքին մէջը արեգակը կըպտտի գարնան հեղ, ասոնցմէ ետքի իրեքին մէջը՝ ամառվան հեղ : ասոնց ետեւէն եկող իրեքին մէջը՝ աշնան հեղ, ու ետքի իրեքին մէջը՝ յիւրիւր հեղ :

Ո՛ր իւրեքը վերնիւր հ սուրիւր իւրիւր :

Արկրի վրայ եղած բանի մը՝ երկինքէն շիտկէ շիտակ վրայ նայող կէտը՝ կըսվի վերնիւր կամ վերնիւր :

Իսկ մէկալ կիսագունտին վրայ երկինքին վրայի՛ առ վեր-
նակէտին շիտակ դիմացը կեցող կէտը՝ կըսվի **սուղ-կէր**
կամ **նապէր** :

16.

Ինչ Բան է Հորիզն Իմ Եղէրոքը :

Հորիզն կամ **Եղէրոք**, այսինքն ծայր կամ վերջ
կըսվի ան կլօր գիծը, որնոր երկինքին ու երկրին մեզի
երևելի մասերը անոնց աներևոյթ մասերէն կըբաժնէ,
ուստի մեր տեսութեանը վերջ կուտայ : Ըսիկայ կըսվի
դժուր կամ **Երևո-լեալան** **Եղէրոք** : Կայ ճշմարէր **Եղէրոք**
ալ՝ որ երկրի դունտը երկու կըբաժնէ, այսինքն՝ վերի
կիսագունտ ու վարի կիսագունտ, ու վերնակետէն ու
սուղակետէն ամէն դիաց 90 աստիճան՝ **Հեռու է** : Ըս
ճշմարիտ եղերտքը կորոչէ արեգակին, լուսինին, և այլն,
ելլելու՝ կամ ծագելու ու մանելու վայրկեանը :

17.

Երկրի Բժո-լի-նը Ինչ Բանով Իւրագի :

Երկրի՛ ու անոր մասերուն մեծութիւնը ու ըն-
դարձակութիւնը չափելու համար կըգործածվի **մղոն** :
Մէկ նեմցէի մղոնը (որ հիմա աշխարհագրութիւններուն
մէջը հասարակարար կըգործածվի) 4000 աշխարհա-
գրական քայլ, կամ գրկաչափ, որ է **Խուլած** (որնոր
նեմցերէն կըսվի **Խուլ-լե**) է. մէկ գրկաչափը 6 ոտնաչափ
(**Շու-ն**) է. մէկ ոտնաչափը՝ 12 մատնաչափ (**Ճօլ**) է,
և մէկ մատնաչափը **աճաւասիկ** ասի է _____ :
Ուրիշ երևելի ազգերու չափերուն ալ տեղեկու-
թիւն մը տալու համար, նեմցէի մէկ մղոնին հետ ունե-
ցած համեմատութիւննին հոս տեղս մէկ աղիւսակով մը
կըղնենք :

1 նեմցէի մղոնը է

Իտալական կամ աշխարհագրական մղոն	4
Ֆրանսարդի մեծ կամ ծովի լևքայ	1½
Ինկիլիզի մեծ կամ ծովի լևքայ	4½
Սոսկոֆի վէսսթ	6⅔
Օսմանեան մղոն	5
Սպանիայի մեծ լևքայ	1⅓

Վրաստանէ հղոն կրտսի անչտի տեղը՝ որ մէկ մղոն լայնութիւն ու մէկ մղոն երկայնութիւն ունի: Սէկ խորանարդ հղոն ունի մէկ մղոն լայնութիւն, մէկ մղոն երկայնութիւն, ու մէկ մղոն խորունկութիւն:

Երկրի գունտին բոլորտիքը 360 աստիճան է. ու մէկ աստիճանը 15 նեմցէի, կամ 60 հասարակ աշխարհագրական մղոն է:

Երկրի բոլորտիքը 5400 նեմցէի մղոն է. իր բոլոր երեսը՝ կամ մակերեսը՝ 9,281,572 քառակուսի մղոն, իսկ իր խորունկութիւնն ալ մէյտեղ առնելով, որ է ըսել՝ երկրի բոլոր մարմինը 2,658,936,730 խորանարդ մղոն է:

Իսկ երկրի արհեստական գունտին, կամ աշխարհացոյցներուն վրայի տեղերուն իրարմէ ունեցած հեռուութեան չափը յայտնի ընելու համար աշխարհագիրները հնարած են պարզի հղոնաշաղկ մը, այսինքն՝ որոշ չափով կարճ դիժ մը՝ որով երկրի կտոր մը որուն մեծութիւնը չափված ու ծանօթ է կիմացընեն, ու անոր համաձայն երկրի ամէն տեղերուն մեծութիւնը ընդարձակութիւնը աշխարհացոյցներուն վրայ պզտիկ ձևով յայտնի կընեն: Ըս պզտիկ մղոնաչափին համաձայն աշխարհացոյցները ու արհեստական երկրագունտները պզտիկ՝ կամ մենժ կը շինվին: Շատ հեղ աշխարհացոյցներուն վարի ծայրը կը դրվի աս պզտիկ մղոնաչափը զանազան համբանքներով:

Մտնք են ուսումնական աշխարհագրութեան վրայ
գիտնալու հարկաւոր բաները :

18.

Երկրէնչ Բանէ Բազմացած է :

Երկիրը բազկացած է աւազէն, հողէն, քարերէն, ու հանքերէն՝ կամ մետաղներէն : Երկրի վրայ կը գտնուի ամուր մաս՝ որ է՝ ցամաք կամ հող, ու լոյժ մաս՝ որ է՝ ջուր : Երկրի չորս մասին մէկը ցամաք է՝ ու իրեքը՝ ջուր : Յամաք երկիրը ամէն տեղ ջուրէն բարձր է . իր վրայ ամենեւին շիտկութիւն չի կայ, տեղ տեղ բարձր է ու տեղ տեղ ցած : Յամաքին բարձր մասերուն կըսենք լեռ, Բլուր, Բլուր : Իրարու ետեւ եկած ու իրարու կը պած լեռերը կըսվին, շարք, գոյն, կամ շղթայ լեռանց, ու Քրագոյն լեռեր : Մնանկ բարձր լեռեր կան՝ որոնց վրայ ամէն ատեն ձիւն կը կենայ, ասոնցմէ ոմանց գլուխը ամպերէն վեր է : Վրանի մը լեռանց վրայ ալ տարւոյն մեծ մասը ձիւն կը կենայ : Մտնք են գլխաւոր լեռեր, ասոնցմէ ետքն են Քրագոյն լեռեր, որոնք առջիններէն ցած են . ասոնցմէ ետքը կուգան բլուրներ, այսինքն ցած՝ կամ պարիս լեռեր : Մյառաժներով ու ժայռերով լեցուն լեռը կըսվի Վրալեռ : Վրանի մը լեռեր ալ ծուխ՝ բոց՝ երած նիւթ ու կրակ դուրս կուտան . որոնք կըսվին Վրալեռ : Լեռերուն մեծ մեծ պատառածքները ու խողովները՝ կամ ծակերը կըսվին՝ այլ՝ կամ խորայր : Լեռանց մէջը ըլլող խորունկ տեղերը կըսվին՝ յոր, հովիտ, խորձոր : Յամաքի մասը՝ որ գէպ ՚ի ծովը դուրս ելած է՝ կըսվի հրոտանաւան, սար, գլուխ, ինչ : Յամաքին շիտակ ու ընդարձակ մասերուն կըսենք՝ Կաշար, Կաշարագլուխ : Ի՞նչ որ վրանին աղէկ կանանչ կայ՝ կըսվին Կարգ, Կարգագլուխ : Սրտո՞ կամ ցեխուտ տեղերը կըսվին՝ ճախճախուտ, ճախնային Էրիլի : Անկաճ՝ այսինքն գործըված ու մշակելու տեղերը կըսվին՝ արար, արարալ, և այլն : Օտառերով ծածկած ընդարձակ տեղերը կըս-

վին՝ անպատճառ, հայրէ։ Անպատճառ կըսվի առանց բոյսի աւազուտ ու չոր գեախներ։ Ընդհանուր ցամաքէն զատված ու ամէն դիաց ջուրով բոլորած երկրի կտոր մը կըսվի՝ իջէ։ Թէ որ ասանկ երկիր մը մէկ դիաց ցամաքի հետ կպած է կըսվի ցամաքախորհէ՝ Բերախորհէ։ Պարսնոց կամ Լիւրճ կըսվի երկու ծովու մէջ ըլլող նեղ ցամաքը՝ որ թերակղզին ցամաքի հետ կամ երկու ցամաքի կտոր իրարու հետ կըմիացընէ։

19.

Չորսը ինչ է ու թանկ իրենքնը մէ։

Չորսը ընդհանուր երկրի լոյժ մասն է։ Ամէն ջուր իր սկիզբը աղբիւրէն կառնէ. որ երկրի, մանաւանդ լեռերու պատառածներէն կելլեն։ Հանքերու վրայէն ու հանքային տեղերէն եկող՝ ուստի հանքի համ ու հոտ՝ կամ մանր մասունք ունեցող ջուրը կըսվի՝ հանքային ջուր։ Ընական տաք ջուր բխեցունող աղբուրներ ալ շատ կան, որոնք կըսվին՝ Բնական Բաղնիք։ Աղբուրներուն ջուրը մէկտեղ գալով կըլլայ՝ սոսոս, պղտիկ գետ, ետքը՝ լիւրճ կամ գետիկ։ որ է պղտիկ վազուն ջուր։ Երբոր շատ ջրեր մէյտեղ գալով կըվազեն՝ կըսվին գետ։ Կան մէծ՝ կամ սոսի խորհի գետիք. որոնք շատ տեղ կըքալեն, մեծ լայնութիւն ու խորունկութիւն ունին, իրենց մէջը ուրիշ գետեր կառնեն, ու իրենց վրայ նաև կըրնայ քալել։ Կան պղտիկ կամ երկրորդ խորհի գետիք, որոնք մենձ գետերուն մէջը կըմաննեն ու շատ ընդարձակ չեն։ Գետի մը ծովը՝ կամ լիճը մտնելու տեղը կըսվի՝ իր Բերանը։ Գետերուն ան տեղերը՝ ուր ջուրերը շուտով կըվազեն՝ կըսվին՝ սահանք, յորտնք (սահանք). իսկ ուր ջուրերը պտոյտ կընեն՝ կըսվի պտոյտք, յորտնոսք (Լիւրտոյ)։

Լիճ կըսենք ան ջուրին՝ որ մէկ տեղ ժողված կըկենայ, որուն մէջը խոշոր ձուկեր կըլլան։ Թէ որ լիճ մը շատ մեծ ու ընդարձակ է՝ կըսվի Օւսվալ։

20.

Օրով Էնչ Բան է, ու ժանի իր Բանով:

Համարաբ, այսինքն ընդհանուր ծով, կամ ով
 Էնանս կրավի ան մենծ ջրերու ժողովքը, որ բոլոր ցա-
 մայք երկիրը ամէն դիաց կրչըջապատէ: Աս համատարած
 ծովը հինգ գլխաւոր մաս ունի, այսինքն Է. հիւսի-
 սային ստանապար ծով, որ է Ասիային, Աւրոպային ու
 Ամերիգային հիւսիսային ծայրը: Բ. հարաւային ստա-
 նապար ծով, որ է հարաւային բևեռին մօտ: Գ. արե-
 յարեան, կամ Արեւելայի ով Էնանս, նաև Արեւմտեան
 ծով՝ կամ ով Էնանս, որ է Աւրոպային, Ափրիկէին ու
 Ամերիգային մէջ տեղը: Դ. ով Էնանս Հիւսիսայ, որ է
 Ասիայի հարաւային դին ու Ափրիկէի արևելեան դին
 հարաւային սանապատ ծովուն կպած: Ե. հարաւային
 ով Էնանս կամ Խաղաղութան ծով, Ամերիգայի, Տա-
 բոնի ու հարաւային նոր երկրի, կամ կղզիներուն մէջը:
 Ասոնք ալ ունին զանազան պզտիկ մասեր. Տիբեթի ով
 ծով, Իւրիւր ծով. և այլն: Արշակեղազոս կրավի ծ-
 վուն ան մասը՝ ուր շատ կղզիներ ու կղզիներու
 խումբեր կան: Օրովուն դէպ ՚ի ցամաքը ներս մտած
 տեղը կրավի՝ ծովածոց (ժեօրժեղ): Արկու ցամաքի մէջ
 ըլլող ծովուն նեղ տեղը կրավի՝ նեղուց (պոլու):

21.

Օրով Է ջուրին աղէ ըլլալ Էնչ օգոստ ունի, ու արեղ արեղ
 ծովը զանազան գոտիեր ունի նաև իր ըլլալու Էնչ Բանով:

Օրովու ջուրին համը աղի, լեղի ու անախորժ է,
 ու առանց մաքրելու ոչ խմելու կուզայ, ու ոչ ու-
 րիշ բանի գործածելու: Այս իր աղի ըլլալը շատ օգուտ
 ունի, ինչու որ ծանր նաւեր իր վրան կրտանի, ծովու
 քով ըլլող բնակիչներուն աղ կուտայ, անուշ ջուրի պէս
 հեշտ ու շուտ չիսառիր, ու իր ձուկերը աւելի համեղ կրու-
 լան քան թէ անուշ ջուրի ձուկերը: Օրովու ջուրին գոյնը

Հասարակօրէն մութ կապուտակ է . տեղ տեղ նաև կարմիր, կանանչ, սև, պղտոր ու բաց մոխրագոյն (4րդ) : Ըս զանազան գոյներուն պատճառը ծովուն յատակը զանազան գոյն ըլլալէն է :

22.

Օտօլը Էնչ շարժում ունի :

Արբոր ծովուն վրայ սաստիկ քամիներ չեն փչեր՝ իր երեսը հանդարտ ու պարզած է . բայց երբոր քամի կելլէ՝ կըխռովի ու ալիւնէր կըհանէ : Ինչպէս գետերը յորտանք, սահանք ու յորտանաք ունին, նոյնպէս ծովն ալ ունի : Օտօլուն ջուրերը հասարակօրէն արևելքէն դէպ ՚ի արևմուտք կըշարժին . մանաւանդ երկու արևադարձներուն մէջը : Ըսոր մէկ գլխաւոր պատճառը ամէն ատեն փչող արևելեան քամիներն են : Ըսկից ՚ի զատ ունի ծովը ուրիշ շարժում մըն ալ, որ է ամէն օր վեր ելլել ու վար իջնալ, որ ծովու քովերը աղէկ կիմացովի . հասարակօրէն ջուրերը վեց ժամ կամաց կամաց վեր կելլեն . ու աս կըսվի՝ մալընլապոտլիւն . ու վեց ժամ վար կիջնան, ու աս կըսվի՝ արլապոտլիւն : Տեղ տեղ մակընթացութեան ատենը ջուրերը միայն քանի մը ոտք կըբարձրանան, տեղ տեղ ալ 40 ինչուկ 60 ոտնաչափ : Օտօլուն աս տեսակ շարժումին պատճառը լուսինն է :

23.

Բնական իլիւայ իմ բաժինն ո՞րն է :

Արկրիս զանազան դիրքը զանազան տեսակ հանգամանք կամ բնութիւն ունին : Տեղաց մը մասնաւոր բնական հանգամանքը, որ իր մթնոլորտին (4-րդ 24.) կամ օդին (հաճայլն) որպիսութենէն՝ աս ալ երկրին դիրքէն ու հանգամանքէն կըպատճառի, կըսվի բնական (Ֆիզիկական) իլիւայ, կամ բաժին, նաև հասարակ խօսքով՝ Էղանալ : Արկրի շատ տեղերը, այսինքն բարև-

խառն ու ցրտային գօտիններուն մէջը բլլող տեղերը տարին չորս գլխաւոր եղանակ ունին, այսինքն՝ գարուն, առաւ, աշուն ու ձիւն (տէ՛ս 9.) : Արշափ որ տեղ մը բարձր է, այնչափ ցուրտ է իր եղանակը : Անձ անտառներն ալ իրենց մօտիկ երկրին ցուրտին պատճառ են : Օռովեղերեայ ու ջուրի մօտ տեղերը բարեխառն եղանակ ունին : Ճախնային ու շատ լիճեր ունեցող տեղերուն օդը առողջութեան վնասակար է : Բշտաղուտ ու անջուր երկիրներուն եղանակը չոր ու սաստիկ տաք է :

24.

Օրը — Բնութիւնը Էնչ Բան է :

Երկրիս բոլոր գունար ամէն դիպց կը շրջապատէ նուրբ մարմին մը, որ է օդ : Օդին նման է նաև Բնութիւնը, որ ուրիշ բան չէ՝ թէ չէ երկրի ամէն տեսակ մարմիններէն վեր ելլող գոլորշիքներով լցված օդ : Բսիկա երկրիս բոլորտիքը մենձ ոլորտ՝ կամ շրջանակ մը կը ձևացընէ : Իր մէջը զանազան երևոյթներ կը լսան, որոնց կըսենք՝ օդեղէն էրեւոյթ կամ հոսմի բառով՝ Բեւոյթ : Բսոնք ալ երկրի վրայ բլլող մարմիններէն վեր ելած շոգիներ են, որ մթնոլորտին մէջը զանազան ձև կառնեն : Բսանկ են՝ ցօղը, Կոշը, ամպը, անյրեւը, ծէրանի գօտին, էղէմիւր, Երեւը, Խորեւոյթը, Լալաւոյթը, Եղէհոյթը, Գոյլոյթը, Խոյժոյթը, և այլն :

25.

Հոլը Էնչ է Ե Կոյլից Իրպարճառի :

Օդին շարժումը կըսվի Հոլ կամ Կոյլ : Երբոր օդին ծանր կամ խիտ մասերը անոր թեթեւ կամ անօր մասերը կը հրեն ու կը շարժեն՝ ան ատենը քամի կելի : Բս բանիս պատճառը տաքը ու ցուրտն է, զի ցուրտը օդը կը խրտատացընէ, խիկ տաքը կանօրացընէ, կը բարակցընէ : Հոլերը շատ մենձ օգուտ ունին. օդը կը մտքընէ, ամառվան տաքը ու ձմեռվան ցուրտը կը շափաւորեն, մենձ

մենձ նաւեր կը բալեցընեն, ու աղացքներ՝ կամ աղօ-
րիքներ կը դարձընեն: Ա՛նասակար ու մահարեր քամի-
ներ ալ կան, ինչպէս է արապստանի ու ամէմի սու-
էէլն. խաւիսյի շէրօթօն, և այլն:

26.

Երկրէ ընդ Քէրք Կիւն:

Յամար երկիրը ու ջուրը զանազան Քէրքէր ունին
կամ յառաջ կը բերեն. այսինքն՝ Կիւնիւնիւնիւր, Բոյնիւր
ու Կանիւր: Ինչուկ հիմայ ճանչցըված են՝ 20,000 տե-
սակ կենդանիներ, ու 35,000 տեսակ բոյսեր: Ա՛ս բա-
ներուս վրայ կը խօսի բնական պատմութիւնը, կամ բնա-
պատմութիւնը: Ա՛ս ամէն բերքերուն ու բոլոր եր-
կրի վրայ տէր է Գորդը, որն որ ամենակարող արարիչը
ստեղծեց ամէն տեսակ կատարելութիւններով զարգա-
րած, ու տըվաւ իրեն Բնական Կոճէ՛ որ ունի միտք ու
ազատ կամք. ու սքանչելի Գորդն մը՝ որ ամէն տեսակ
կատարելութիւնները ունի: Ա՛մէն մարդիկ իրենց
գլխաւոր մասունքներովը իրարու նման են, բայց իրենց
մարմինին Բնական, Գորդն ու Բնական Կոճէ-
ն զիէն իրարմէ շատ տարբեր են, ինչպէս յայտնի է:
Բոլոր աշխարհիս վրայ ըլլող մարդկան թիւը հա-
ւանական հաշիւով 850 միլիոն 46 հազար կը սեպվի,
որոնցմէ 485 միլիոն Ասիայի մէջ, 213 միլիոն 713 հա-
զար Աւրոպայի մէջ, 109 միլիոն Աֆրիկէի մէջ. 39
միլիոն 333 հազար Ամերիգայի մէջ, ու 3 միլիոն հարա-
ւային նոր երկրի՝ կամ կղզիներու մէջն են *):

Ա՛սոնք են բնական աշխարհագրութեան վրայ գիտ-
նալու հարկաւոր բաները:

*) Բոլոր աշխարհիս Գորդիւնիւնիւն 200 միլիոն բնաբոնեայ
են. 140 միլիոն Գորդիւնիւն, 2,500,000 հրէայ ու
507,546,000 հիւնիւն, անասնոստ ու խոտաբուս:

27.

Իսլաք երկերէ իմ աշխարհը բանի՛ մաս իր քաջանքի :

Իսլոր երկիրը կամ աշխարհը մարդիկ հինգ գլխաւոր մաս բաժնած են. այսինքն՝ Լ, սիւ, Լ, րոպա, Լ, Էրէի, Լ, Էրէի ու Լ, արտաւային նոր երկեր՝ կամ Լ, արտաւային Լ, արտաւային : Սարգիկ երկրին աս հինգ մասանցը զանազան գիւրը շատ ընկերութիւններ ու ժողովներ բաժնած՝ կրճնակին, ու իրենց վրայ ունին մէկ՝ կամ շատ տիրող անձինքներ : Լ, ս զանազան ընկերութիւնները՝ կամ ժողովները կանուանին վէճով, պէտքով, Լ, արտաւային, Լ, արտաւային, Լ, արտաւային, Լ, արտաւային, Լ, արտաւային : Լ, սոնց վրայ ըլլող տէրերը ու կառավարները զանազան անուններ ունին, այսինքն՝ Լ, արտաւային, Լ, արտաւային, Լ, արտաւային, Լ, արտաւային, Լ, արտաւային, Լ, արտաւային, Լ, արտաւային, Լ, արտաւային : Լ, սոնց իշխանութիւնը կամ Լ, արտաւային է և կամ զանազան սահմանադրութիւններով Լ, արտաւային կամ Լ, արտաւային (Լ, արտաւային) : Լ, արտաւային մը տէրութիւններ կրկառավարվին զանազան անձինքներէն իրրև մէկ եղած անձէն . ասոնք կրտվին՝ Լ, արտաւային Լ, արտաւային, կամ Լ, արտաւային : Լ, արտաւային Լ, արտաւային իմ աշխարհի արտաւային հասարակութիւնները, ուր քանի մը երևելի կամ ազնուական տնէ ըլլող անձինքներ բոլոր տէրութիւնը կրկառավարեն : Լ, սկ Ուստի Լ, արտաւային Լ, արտաւային կամ Լ, արտաւային հասարակութիւնները կրտվին ան տէրութիւնը, որուն վրայ շատ քաղաքացիներ մէկանց կառավար կը ըլնան :

28.

Սարգիի ուր իր քաջանքի, ու Լ, արտաւային Լ, արտաւային :

Սարգիկ պինտ առաջ կրճնակէին գեանի տակ, այրերու (Լ, արտաւային) մէջ ու վրաններու (Լ, արտաւային) տակ .

Հիմայ ալ կան քանի մը գեղեցիկ վայրենի ու շատ աղքատ ազգեր . կան նաև լեռնաշղթան (կոլեկտիվ) ու վերնաշրջանի ազգեր : Հասարակօրէն մարդիկ կրնան կին արտադրող, այսինքն՝ փայտէ, աղիսէ, կղմինարէ ու քարէ շինած բնակարաններու մէջ : Աղքատ ու պղտիկ տներու խումբը, որոնց բնակիչքը միայն երկրագործութիւն ու պարտիզպանութիւն կրնեն, կրօվի գեղ : Հատ պղտիկ գեղը, կամ մէկ քանի տներու խումբը կրօվի՝ ագարակ : Սենձ գեղ մը, որ թէպէտ պարիսպ չունի, բայց իր բնակիչներուն մէջը զանազան արհեստաւորներ ու առուտուր բնօրէնք ալ կան կրօվի առան : Աւելի մենձ ու առուտուրով ծաղկած աւանը կրօվի՝ գեղաշրջան, կամ արտադրող : Հատ ու մենձ տներու խումբը, որ հասարակօրէն պարիսպով բոլորած է, ու իր բնակիչները արհեստներ ու առուտուր կրբանեցընեն ու զանազան դատաստանարաններ ու դատաւորներ ունին, կրօվի արտադրող : Ինք ունեցող քաղաքը կրօվի Բերդարտադրող : Տէրութիւնի կամ երկրի մը առջի ու գլխաւոր քաղաքը կրօվի մայրաքաղաք : Թագաւորին՝ կամ՝ երկրին կառավարին նստած քաղաքը կրօվի՝ կայսերանիս, լեռնաշրջանիս, իշխանանիս արտադրող : Բաղքի մը պարիսպէն կամ անոր գլխաւոր տներուն խումբէն դուրս՝ բայց անոր մօտ ըլլող տուններուն խումբը կրօվի արուարձանք (վարդ) :

29.

Սէկ լեռնաշրջանի մէջ իր Բանընդ :

Թագաւորութիւն, կամ տէրութիւն մը, որ աշխարհ ալ կրօվի, կրբաժներով զանազան նահանգ (էյուլիլ), նահանգը կրբաժներով գաւառ՝ վիճակ՝ կամ լեւ, իսկ թեմը կրբաժներով զանազան քաղաքներ, աւաններ ու գեղեր :

Հիմայ սկսինք աշխարհիս զանազան մասանցը, ու անոնց մէջը ըլլող տեղերուն վրայ համառօտիւ խօսիլ :

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ա Ս Ի Ը :

Պ. Ասիան հարաւէն ունի իրեն սահման հնդկաց ծովը ու հարաւային ովկիանոսը, արեւմուտքէն Աւրուպան, սև ծովը, ու Սուէզի պարանոցը, որով Ափրիկէին հետ կըմիանայ. հիւսիսէն սառուցեալ ծովը ու արևելքէն արևելեան ովկիանոսը. ու կիյնայ 44 ու 208 երկայնութեան, ու 9 հարաւային ու 78 հիւսիսային ըսյնութեան աստիճաններու մէջ : Իր բոլոր ընդարձակութիւնը 700,000 քառակուսի մղոնէն աւելի է :

Բ. Ասիայի երկիրը լեռնային է. ուր են ըստ նոր գննութեանց երկրիս պինտ բարձր լեռերը, մանաւանդ միջին ասիայի մէջը : Գլխաւոր լեռանց գօտին է Հիմալայս՝ կամ Հիմալէ (ըստ հնոց Իմա-ուս) Գլխալեթի մէջը, որուն բարձր մասերէն իրր 20 հատը (ինչպէս՝ Տալալիէրէ՝ կամ Տօլիէր, Խամալըրէ, Աամանդրէ, և այլն) երկրիս պինտ բարձր լեռերն են : Ասոնցմէ ետքն են Սիպրիի ու Սոնկոլի լեռերը, Սինձ ու Պարիս Ալլալայի, Գինիլիան, Սայանեան լեռերը. դարձեալ Հընդիսի լեռերը, և այլն : Շատ բարձր են նաև Արարատի՝ կամ Սասնի լեռը հայաստանին, Կովսոս՝ կամ Ալալուսուսը լեռը վրաստանին, Տարսուս փոքր Ասիայի մէջը ու Ուլիպոս՝ կամ Վիլլըլ քաղցր Պուրսայի մօտը, և այլն :

Գ. Ասիայի ծովերն են՝ հիւսիսային սառնապատ ովկիանոսը, արևելեան կամ խաղաղական ծովը, հընդկային ովկիանոսը, կարմիր, սև, միջերկրական ու աղախու ծովերը : Իր մենծ գետերն են՝ Օղէ, Ահնէսէ, Ինդիլիքոս, Գուլիս ու Լէնոս, որոնք ընդհանուր երկրիս պինտ մենծ գետերն են ու հիւսիսային սառնապատ ծովը կըմտնեն : Գարձեալ Ափրատ ու Տէգրէս, որոնք հայաս-

տանէն կելենն ու պարսից ծովը կամ պարսկային ծոցը կըմտնեն. կոր ու Լըրուի հայաստանէն կելենն ու կասպից ծովը կըմտնեն. Ինքոս, որ հնդկաց ուկրիանոսը կամ ()մանայ ծոցը կըմտնէ. Վանգէս ու Պարէլբու-
 րոր, որոնք Պէնկալայի ծոցը կըմտնեն. Գէղն գէղը կամ շօանիօ (շօան), Կոդաս գէղը՝ կամ Լանդըլէրէանձ (Լէլանձ), ու Լնոթիլը, որոնք խաղաղական ուկրիանոսը կըմտնեն:

Գ. Լսիայի երկիրը շատ բնդարձակ ըլլալուն իր օդը ու եղանակն ալ միօրինակ չէ. հիւսիսային մասը սաստիկ ցուրտ է, մէջի մասը տաք ու զուարճալի է, բայց իր բարձր դրիցը համար աւելի ցրտեկ է քան թէ իրեն հետ հաւասար աշխարհագրական լայնութիւն ունեցող տեղերը. իսկ հարաւային մասը սաստիկ տաք է:

Է. Լս զանազան եղանակներուն պատճառովը Լսիայի ամէն դիերը միօրինակ բերրի չեն կամ նոյնչափ առատ բերք չունին: Տեղ տեղ մշակութեան յարմար ու պտղաբեր չէ, բայց իր մենձ մասը աղէկ բերրի է ու անանկ բերքեր կուտայ, որ Լբոպա ու ուրիշ տեղեր չեն ըլլար, մանաւանդ համեմեր, դեղի նիւթեր, զանազան մենձ ու պղտիկ կենդանիներ ու առատ բոյսեր: Իր հանքերն ալ շատ են, բայց չեն գործըլիր:

Ը. Լքրիս աս մասին բնակիչքը բոլոր աշխարքին պինտ հին ու առջի բնակիչներն են. ինչու որ մարդկան նախահայրը Լդամ Լսիայի մէջ տեղը ունեցաւ իր բնակութիւնը: Լսկից ելան ցրուեցան երկրին ամէն դիերը բնակիչներ: շոս սկսան ջրհեղեղէն ետքը զանազան թագաւորութիւններ ու տէրութիւններ, հայոց, բարեկացոց, եգիպտացոց, չինաց, և այլն: շասարակօրէն հիմակվան Լսիայի բնակչաց թիւը կարծիքով 500 միլիոն կրսեպիլ. որոնց մէջը տեղով, կրօնքով ու սովորութիւններով տարբեր 150 ազգէն աւելի կայ. իսկ լեզուով տարբեր ինչուկ 27 ազգ կըզանըլի: Լսոնցմէ մէկ քանին են, հայ, թիւրք՝ կամ տաճիկ,

կիրճի, չէրքէզ, ապազա, սամոյատացի, հրէայ, պարսիկ, աղուան, հնդիկ, չինմաչինցի, թաթար, պուխարացի, մղուլ, ճարօնցի, և այլն: Ըս աղգերուն մէջը չորս գլխաւոր կրօնք կայ, բրիստոնէական, հրէական, մահմէտական ու հեթանոսական:

Է. Ըսիա՝ իր զանազան տէրութիւններուն նայելով՝ տասը գլխաւոր աշխարհ՝ կամ մաս կրբաժնրվի աս կարգով. Տաճիկ Ըսիա, Ըրադստան, Պուրսիստան, Պէլսիստան, Բապուրստան, Եզրաթ թաթարստան, Ընդիստան, Չինաչին, Ղաթան ու Սիսիսիկ Ըսիա:

Գ Լ Ո Ի Խ Ե Ո Ւ Ե Ջ Ի Ն

Տ Ե Ն Կ Ի Ե Ս Ի Ե:

Թ. Ըսիայի աս մասը, որ Ընստուա ալ կրսվի արևմուտքէն ունի սահման Ստամբուլի նեղուցը (պողաղ իշին) ու միջերկրական ծովը, հարաւէն կարմիր ծովը ու արապստանը, արևելքէն պարսկի երկիրը ու հիւսիսէն մոսկովի երկիրը ու սև ծովը. ու կիյնայ 44 ու 66 երկայնութեան ու 30 ու 42 լայնութեան աստիճաններու մէջ: Իր ընդարձակութիւնը իբր 30,000 քառակուսի մղոն է:

Պ. Երկիրին մենծ մասը լեռնային է, բայց տեղ տեղ ընդարձակ դաշտեր ալ շատ ունի: Իր լեռերուն բունը կամ սկիզբը հիւսիսային արևելեան դին բարձրագլուխ Ըրադստ լեռանը քովերն է: Ըսկից հիւսիսային ու հարաւային դիւրը կերթան Ընստուա ու Տարս լեռերը, ասկից կելլեն Ընստուա, կամ Ընստան լեռերը, որոնց հետ կպած են Ընստան ու Ընստան լեռերը: Ըս բունէն հայաստանի մէջ ալ շատ լեռեր կերթան ինչուկ պարսկի սահմանը: Իր մենծ գետերն են՝ Ըրադս, Տէրէ, Ղարի, Գլուլ, Ըրադ, Կուր. և այլն: Եզանակը շատ տեղ առողջ ու մաքուր է բարձր տեղերուն ձմեռը սաստիկ՝ բայց

կարգաւորեալ է : Ազանակին աղէկութեանը պատ-
ճառովը գետինն ալ աղէկ պտղաբեր է ու ունի ընտիր
բերքեր :

Գ. Հոս կրքնակին շատ ազգեր, տաճիկ, հայ,
հոռոմ, մարոնիթ, կիւրճի, արապ, թիւրքմէն, քիւրտ,
հրէայ, չինկեանէ, ու առուտուրի քաղքըներու մէջ
եւրոպացիներ, կամ ֆոէնկներ : Ասոնց ամէնուն թիւը
հասարակօրէն տասնըմէկ միլիոն կրեսպիլի : Բնգհանուր
ընդուն տաճիկերէնն է, ետքը հոռմերէն ու հայերէն :
Աիւրճերէն ու քիւրտերէն ալ (որ պարսկի ընդունն եւ
լած է) շատ կրխօսպի : Վլխաւոր կրօնքը մահմէտական
աղանգն է : Վրիստոնէական հաւատքը շատ տարածած
է : Հրէայ ալ շատ կայ : Աս բնակչաց մէջը ար-
հեստներու ու ձեռագործներու ետեւէ ըլլող շատ կրգըտ-
նըվի . կան մետաքսեղէն ու բամպակեղէն գործողներ,
գորգ (շալէ), ձիու թամբ, զանազան տեսակ կաշի, ապա-
կի, ու երկրթէ ու անագէ ամաններ շինողներ, ներկա-
րարներ (պոյաճիներ) ու նաւ շինողներ : Առուտուրն ալ
աղէկ է, որ աւելի հայերը, հոռմները, հրէաները ու
եւրոպացիները կրնեն : Հոսկից ուրիշ տեղ զնացող
ապրանքներուն մենծ մասը երկրին բերքերն են : Իսկ
ուրիշ տեղերէն իրեն եկած ապրանքները աւելի եւրո-
պայի արհեստական գործվածքներն են, հինտէն, աճէ-
մէն ու ափրիկէէն ալ ապրանքներ կուգան :

Գ. Ասիային կառավարութիւնը միապետական ու
ըսացարձակ է օսմանցիի թագաւորին տակը, որ ամէն տեղ
իր փաշաները կրխաւրէ : Բոլոր երկիրը հինգ գլխաւոր
մաս կրբաժնըվի . այսինքն, Հայաստան, Գոյը Ասիա,
Ասորի, Սելուգէիս ու Իբրաք արաղէ :

Յօդ. ւն :

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

ւն. Հայաստան արևելքէն ունի սահման Ասսպից ծովը, կամ պարսկի Մտրպէճան նահանգը ու Շիրվանը, հիւսիսէն վրաստանը, արևմուտքէն փոքր Մսիան ու հարաւէն ասորուց երկիրը: Մտն մը հայոց տակը ըլլող տեղերը մէյտեղ առնելով՝ հայաստանին տարածութիւնը կըլլայ 25,000 քառակուսի մղոնէն աւելի:

Բ. Հայաստանին գլխաւոր գետերն են՝ Արփոս կամ Սարգոս, որ Արղիրումի նահանգէն կելլէ. Տէգրէն կամ Շատ, որուն մէկ սկիզբը Տիարպէքիբի նահանգին մէջն է ու մէկալը Այնայ նահանգին մէջը, Ափրատայ հետ կըմիանայ, ու աս երկուքէն մէկ եղած գետը՝ որ կըսվի Շատ էլ արեւելէ՝ պարսկային ծոցը կըմտնէ. Արփոս, որ Արղիրումի թէման գաւառէն կըբըխէ ու կուր գետին հետ կըմիանայ Ասսպից ծովը կըթափի. Տարսի, կամ Չորսի սոյն, որ Տայբերգի լեռներէն կելլէ ու սև ծովը կըմտնէ. Արփ. որ Վարսի ու Մելիտայի նահանգներէն կելլէ ու Արասին հետ Ասսպից ծովը կըմտնէ: Ալէն, կամ Վաղարշ ընթալ ալ փոքր հայաստանին մենծ գետն է, որ սև ծովը կըմտնէ:

Գ. Աս տեղաց երկիրը կէս մը լեռնային է ու կէս մը շիտակ, բայց գաշտային տեղերն ալ, ինչպէս նաև բոլոր երկիրը բարձր զիրք ունի: Իր մենծ լեռերն են՝ Արփոս, կամ Սախ, Պինիկոլ, Արճիկ, Արարալ րադէ, և այլն: Աղանակը՝ կամ օզը բարակ, չոր, առողջ ու բարեխառն է: Վետինը հարուստ ու բերրի է: Խոտը ու սէզը կենդանի արծելու համար անբաւ են: Իր անհամար տեսակ պտուղներուն մէջը երևելի է ծիրանը, խաղողը, մեղրապտալը, սեխը, և այլն: Իր առատ արմատացը մէջը ցորենը շատ պատուական ու խոշոր է: Ունի պատուական ընդեղէն ու կա-

նանչեղէն, կամ խաւարտ ու բանջարներ, օգտակար ու համեղ արմատներ, խաշնդեղ, անխոն, ծխախոտ, մեղր, մետաքս, բամպակ, զանազան ներկեր, մենծ անտառներ հասարակ ու ազնիւ ծառերու, ազնիւ ու հասարակ հանքեր, աղ, ընտանի ու վայրի կենդանիներ ու թռչուններ, նժոյգ՝ կամ չէ-հէյլան ձի ընտիր, մենծ պօչով ոչխար, և այլն : Աս բերքերէն շատ բան իրրև ապրանք ուրիշ տեղեր ինչուկ Ստամպօլ, Վրըրմ, Իզմիր, Պասրա ու Պաղտատ կրխաւրրվին . ինչպէս, չորցած պտուղներ, մեղր, մեղրխմամ, ծխախոտ, զանազան ներկեր, ցորեն, գարի, դեղի նիւթեր, ոչխար, չէ-հէյլան, աղած ձուկ . և այլն : Ասոնցմով ու քանի մը ուրիշ կտաւեղէն գործվածքներով հայաստան ուրիշ տեղերու հետ աղէկ առուտուր կընէ, որուն մէջը հայերուն յաջողակութիւնը ամէն տեղ հռչակած է :

Գ. Հայաստանու առջի բնակիչքը հայերն են, ետքը քիւրտ, որ աւելի շատ են մեծ հայաստանին մէջը, շատ ցեղեր բաժնած, կէս մը թափառական են ու կէս մը քաղաքաբնակ ու գիւղաբնակ . ասոնցմէ ետքն են՝ տաճիկ, թիւրքմէն, կիւրճի, ասորի ու հոռոմ : Ասոնց ամենուն թիւը ստոյգ չիգիտցիվիր : Հայերէնը, տաճիկերէնը ու քիւրտերէնը գլխաւոր լեզուներն են :

Է. Իուն հայաստանը, որ հնուցմէ ՚ի վեր կրբաժնրվի Տէժ հոյաստան ու Գոսր հոյաստան, հիմայ երկու տէրութեան, այսինքն տաճիկի ու մոսկովի տակ ըլլալուն երկու մաս կրբաժնենք, որ է՝ Տաճիկ հոյաստան, որուն մէջն է մեծ հայաստանին մենծ մասը ու բոլոր փոքր հայաստանը, ու Սոսիոյն հոյաստան :

ՏԱՆՍԻ ՀԱՅԵՍՏԱՆ:

Հայաստանին սա մասը կրբաճնրվի վեց մենձ նա-
հանգ կամ էյալէնէ, սյսինքն՝ Լըրզէրո՛ւմ, Գաբա, Ընլէնա,
Պայազէր, Վան ու Տէրապէ՛տը, որոնց ամէն մէկը տաճ-
կէն դրված իրեք դուզով փաշայի մը տակ է:

ԼԻՐՉ, ԼԻՐՈՒՄ՝ նահանգը հիւսիսային արեւմտեան
դին է լեռերով բոլորած, որոնց գլխաւորներն են
Շողալար, Տէրէ պոյնա, Բալան Գէօրէն, Լըրէրէ, Թօփ
Գաղը, Պլինկէօլ, և այլն: Իր մենձ գետերն են Լըրա,
Լըրասի, Շորոն, ու Սն ընդ, կամ Գաբա սո, որ
Լփրատին մէկ սկիզբն է: Իր եղանակը՝ երկրին բարձր
դրիցը համար՝ ցուրտ է: Գետինը բերրի է. ունի ըն-
տիր ցորեն, ծիրան, կարմիր սալոր, և այլն:

Իր մասերը՝ կամ գաւառները (սանճաթնէրը) են
Լըրզէրո՛ւմ, Խոնոս ու Թէճան, Բասէն, Թարլոն,
Սոլէր, Բայթէր, Տէրճան, Լըրզիայ, Կամաի, Վալ-
ճէլ, Կէղէ, Գոսզէն, Տոճիլ ու Սանդալէր:

Լըրզէրո՛ւմ գաւառը ունի իրեն անուանակից գլխաւոր
քաղաք, որ է հիմակվան հայաստանին առջի քաղաքը,
ըստ հնոց Կաթին, նաև Թէոփոսպօլէս ըսված, որ իրեք
մաս կրբաճնրվի՝ միջնաբերդը, այն է՝ Իջ գալէն, բուն
քաղաքը ու արուարձանը: Վաղաքը երկու պարիսպ
ունի: Վաղքին ու արուարձանին մէջը կան մենձ քա-
րաչէն խանէր կամ իջևաններ, բաղնիքներ, շատ խա-
նութներ, շուկաներ (չարչնէր), մղկիթներ (ճախնէր),
երկու հայու եկեղեցի ու մէկ հոռմի, 27,000 տուն, ու
100,000 բնակիչ, որոնց շատը տաճիկ են: Լըրզերում
հայաստանին առջի առուտուրի քաղաքն է, ուր գրե-
թէ ամէն օր զանազան մենձ քաղքըներէն քէվրաններ
կուգան:

Բայթէր, ցուրտ եղանակով ու լեռնային երկիրով
գաւառ է. իր համանուն գլխաւոր բերդաքաղաքը Լըր-
զերումէն 50 մղոն հեռու է, Շորոն գետը իր մէջէն
կանցնի, ունի 700 տուն. բնակիչքները հայ ու տաճիկ են:

Երբնիւոյ, ըստ հնոց Երեւելոյ, զուարճալի երկիրով գաւառ է, ունի առողջարար ջրեր, ընտիր ու առատ պտուղ, և այլն: Իր մէջը աղբորակ (կէ-հէրընէ) շատ բլլալուն գետնաշարժը յաճախ է: Իր պարսպապատ գլխաւոր քաղաքը Երբնիւոյ գաշտի մը վրայ շինած ու լեռերով բոլորած է. ուր կայ չորս եկեղեցի:

Ատմախ՝ ըստ հնոց Վարանաղէ գաւառը ունի շատ աղի հանք: Իր գլխաւոր պարսպապատ քաղաքը Ատմախ ունի 1000 տունէն աւելի ըստ մեծի մասին տաճիկ բնակիչ:

Ե.Ս.Յ.Ս.Ս. *) նահանգը 1986 մղոն ընդարձակութիւն ունի. չորս գին լեռերով պատած է, արևելեան հիւսիսային գին է Առլուս լեռը, հարաւային գին է Երբառա. հաս է նաև Պարնու լեռը. Շոթն ու Աուր գետերը աս նահանգին մէջէն կանցնին: Կան ուրիշ մանր գետեր ալ: Աղանակը ընդհանրապէս առողջ է, միայն քանի մը գաւառներուն օդը սաստիկ տաքին պատճառով աղէկ չէ: Վետինը աղէկ ու բերրի է:

Բոլոր նահանգը ունի քանրչորս գաւառ, որոնց երևելիներն են՝ Երեւելա, Երբառ, Երբառալա, Երբառնոճ, Երբառան, Երբալէն, Երբառ, Պարնու ու Երբառառալ:

Երեւելա գաւառը մոսկովի ձեռքն է՝ Կուր գետին քովերը. ունի անուանակից բերդաւոր քաղաք 15,000 հայ, տաճիկ ու կիրճի բնակիչով: Հայերը ունին երկու եկեղեցի ու կիրճիները մէկ:

Երբառ ու Երբառալա գաւառներն ալ մոսկովի տակ են, որ ունին համանուն գլխաւոր քաղաքներ:

Երբառան գաւառը երկու կրբաժնրվի մէջ ու պղտիլ, որ ունի համանուն պարսպապատ գլխաւոր բերդաքաղաք Երբառան գետակին քովը:

*) Ես նահանգիին հիւսիսային մասը նորերս մասովէ պէ-րուլէ-տան պովը հարաւ:

Երբ-վն, պողարեր դաւառ է, ունի ընտիր նուռ ու ձիթենիի անտառներ: Իրեն բերդաւոր գիւղաքաղաքը Երբ-վն ունի իրր 2000 տուն բնակիչ, որոնցմէ 500 տունէն աւելի հայ են, ունին իրեք եկեղեցի, որոնց երկուքը ուղղափառ հայոց է:

ՂԵՐՄ, կամ ՂԵՐՄ նահանգը հիւսիսէն սահմանակից է Եփրատին, արեւելքէն մոսկովի հայաստանին, հարաւէն Պայեղիաին ու արեւմուտքէն Լարդիբուսին: Իր մեծութիւնը 4750 մղոն է: Սողանի ու Ելուրդի լեռերը իր սահմանին վրայ են: Իր ջրերուն մէջը երևելի է Երբ-վն չայէ գետը: Օսովակ՝ կամ լիճ մ'ալ ունի Չէնիլէ անունով: Լողանակը առողջ ու զուարճալի է: Գետինը պողարեր է, ունի աղի հանք, մայր ծառի անտառներ, այգիներ, և այլն:

Իր գաւառները վեց են, այսինքն՝ Գարս, Խոս-ճ լուն՝ կամ (մախիլի, Կիլիմ, Գաղիլիմ, Շքիլիլ (Շիբալիման) ու Օսրիլիս:

Գարս գաւառը ունի համանուն գլխաւոր պարսպապատ բերդաքաղաք իրեք արուարձանով, որոնց մէկը հայոց է, ուր շատ խանութներ, սեկի (սահպանի) ու ներկարարի գործարաններ ու 600 տուն կան: Բուն քաղաքը ունի 850 տուն, մղկիթներ, բաղնիքներ, շատ խանութներ ու տաճիկ ու քիւրա բնակիչ: Ետը առուտուրը կիւրճիստանի, պարսկի ու տաճկի հետ շատ աղէկ է: Ես գաւառը իրր 200 գեղեր ունի:

Շքիլիլ գաւառին մէկ մասը մոսկովին տակն է ու մէկ մասը տաճկի տակ: Իր Կոմիլի գեղը մոսկովի նորերս արգելանոց ժանտախտի, կամ լուրդի դրա:

Ես գաւառին մէջն են հին երևելի Ենի Բաղիլի աւերակները:

ՊԵՅԼԻՆՆԱՆ նահանգը արեւելքէն սահմանակից է մոսկովի հայաստանին, հարաւէն Ղանին, արեւմուտքէն Բասենին, ու հիւսիսէն Գարսին ու Լարեանին: Լարկիրը շատ լեռեր ունի, որոնց երևելիներն են՝ Ելու

Գող, ըստ հնոց Օսադլոժ լեռան ու Վեօսէ ցողը, ըստ հնոց Սոխոս : Ունի գետեր ալ, Շէրեմն ու Լփրատ գետին մէկ սկիզբը : Արմտիքը ու վայրի կենդանիները շատ են :

Ունի հինգ գաւառ, որ են Պայեպլի, կամ Պաեապլի, Տեօպլին, Խոմոսը, Վահեա ու Լաշլիերի, ըստ հնոց Բափրեօնի, որոնց բնակիչքը հայ, քիւրտ ու եէզիտի *) են :

Պայեպլի գաւառը ունի համանուն գլխաւոր բերդաքաղաք իրր 8000 տուն բնակիչով, որոնց շատ քիւրտ են :

Լաշլիերի գաւառը լեռերով բոլորած է, ունի իրր 500 գեղ հայերու ու քիւրտերու : Իր գլխաւոր քաղաքը Թօփրափ գաւի՝ ունի բերդ ու 1000 տունէն աւելի քիւրտ ու հայ բնակիչ :

ՍՆՆ նահանգը հիւսիսէն ունի սահման Պայեպլի, արեւելքէն Վարպէճանը, հարաւէն Ղէզիրան, ու արեւմուտքէն Տիարպէքիը : Երկիրը շատ լեռեր ունի, որոնց գլխաւորներն են՝ Սարափ, Սարբ Սահալ, Լըճ Դաճին, Լահաս, Վեթրոլի, Գրգոսը ու Վօսոսը : Տեփրէ գետը իր մէջէն կանցնի, ունի նաև Օսա գետը . և սյն : Անուանի է իր մէնծ լիճը, որ Սանայ կամ Աղլահարայ, նաև Արճիչ ծով, ըստ հնոց ծով Բանահեոյ կրտվի . իր մէջը կան չորս մենծ կղզի՝ Աղլահար մենծ վանքով մը, Ասապի, Արոս վանքով մը, ու Լի վանքով մը : Գետինը աղէկ բերրի ու հարուստ է . ունի արմտիք, մանաւանդ ընտիր ցորեն, առատ բրինձ,

*) Ասոնք առ ասպէս են, որոնցմէ ոմանք վրանաբնալի են : Ոչ բրնաբնալի են ու ոչ ցողի, բայց բրնաբնալի են : Բնաբնալի հայերը իրենքն ու իրենց ելիեղիցին իբրեւն : Օսանալան օգտ կամ դաս բաժնած են, ու առն թի օգտ իր շէյնը, կամ իշխանը ունի, որ է իրենց բահանան :

ծաղիկ, բնտիր պտուղ, առատ խաղող, լիմոն, թուրինջ, գինի, և այլն: Բնակիչքն են հայ, քիւրտ, տաճիկ ու ասորի:

Բոլոր նահանգը ունի աս գաւառները, Ս ան, Խօշապ, Շոռաթեթի, Խլաթ, Լ.բժիէ, Լ.բժիշ, Բեբիթ, Բաղէշ, կամ Պիլիպէ, Խիլան, Օլբրեան, Սնշ, Սառան ու Սոսան: Ըստնց ամենուն մէջը շատ գեղեր կան, որոնց բնակիչքը հայ են:

Ս ան գաւառին գլխաւոր պարսպապատ քաղաքը Ս ան՝ ըստ նախնեաց Շաբրամալէթո ըսված՝ ունի իբր 18,000 տուն բնակիչ, որոնցմէ 2000 հայ են, որ ունին ութը եկեղեցի ու վանքեր. իրենք են հաստեղաց գլխաւոր վաճառականները ու արհեստաւորները, այսինքն սկերիչ ու ջուղայ:

Բաղէշ գաւառը շատ աղէկ ու բերրի գետին ունի: Իր գլխաւոր քաղաքը Բաղէշ ունի քարէ տներ, մեծ մզկիթներ, բաղնիքներ ու չորս հայու եկեղեցի: Բնակչաց մէջը 1500 տուն հայ կայ:

Սնշ գաւառին համանուն բերդաքաղաքը ունի իբր 8000 տուն ըստ մեծի մասին քիւրտ բնակիչ, հայ քիչ կայ, որ ունին չորս թաղ ու եկեղեցի: Գաւառին մէջը Բի-Բի-ն շատ ըլլալուն՝ հոս Բի-Բի-նի առուտուրը շատ ծաղկած է: Սնշի վանքերուն մէջը երեւելի են՝ Սն աւրէ Լաթալաթ, ու սուրէ Արապէթ վանքերը:

ՏԻԼԻՊՈՒԲԻՐ նահանգը արեւելքէն սահմանակից է Ս անայ նահանգին, հիւսիսէն Լըզերումին, արեւմուտքէն Լաիրատ գետին ու հարաւէն միջագետքին: Իր մենծ լեռերն են Գարաթաղ, Սինճար, Շոռաթի, և այլն: Իր մենծ գետն է Տեթրէս, ունի ուրիշ գետեր ու լիճեր ալ: Օդը առողջ է ու գետինը բերրի. ունի բնտիր ցորեն, խաղող ու պատուական սեխ: Բնակիչքն են հայ, քիւրտ, քաղդէացի, որոնց մէջը շատ նաստուրի՝ կամ նեստորական հերետիկոս կայ. դարձեալ՝ քիչ արապ, հուսի, հրէայ ու եզղիտի:

Բոլոր նահանգը ունի շատ գաւառներ, այսինքն՝ Լ.Ֆէլ, Լյիէլ, Ճ'ապղըր, Բալա, Չիլիէթի, Սեւրէի, Սըլբր, Հընիէյֆ, և այլն :

Լ.Ֆէլ, կամ Տեփրդէի, հոստեղաց գլխաւոր գաւառն է, որ ունի պարսպապատ բերդաքաղաք Լ.Ֆէլ՝ ըստ հնոց Տեփրմալէր ըսված՝ 80,000 բնակիչով, որոնց շատը տաճիկ է, ետքը հայ, և այլն : Իր առուտուրը շատ բանուկ է : Ունի սեկի, մետաքսեղէնի ու բամպակեղէնի գործարաններ ու վաճառանոցներ :

Խաբէբը, Տիբուի ու Շիւշ գաւառները (Կիւլէս նախ քան հայաստանին Տիջը Լ.բապղէր ու Լ.ին) մեկանց մատեն էմինիի, այսինքն հանքերու վերակացուի մը տակ են, զի իրենց մէջը շատ ոսկիի ու արծաթի հանք (մաթէն) կայ :

Փոքր հայաստան :

Բոլոր տաճիկի տակ է : արևելքէն սահմանակից է մեծ հայաստանին, հիւսիսէն Գրապղունին ու Լ.մասիային, արևմուտքէն Չանկըրին ու Լ.տանային, ու հարաւէն Հալէպին : Ունի հինգ նահանգ, կամ էյալէթ . Սիվաս, Գայսեբէ, Սեկի, Սալապիէ ու Շապիւ գաւառ հիւսիս : Սիվաս իրեք դուղով փաշայի տակ է, իսկ մեկալնոնք երկու դուղով փաշաներու :

Սիվաս նահանգը արևելքէն սահմանակից է Լըղիբուսին ու Սանին, հիւսիսէն Գրապղունին ու սև ծովին, արևմուտքէն Չանկըրին ու Գայսեբիին, իսկ հարաւէն Սալապիէին : Իր գաւառներն են՝ Սիվաս, Պօղոֆ, Տեվրէի, Լ.բապղէր, Լ.մախ, Ճ'անիլ, ու Չօբուս : Ետքի իրեք գաւառները փոքր հայաստանին երկիրէն դուրս են :

Սիվաս գաւառը, որուն գլխաւոր գետերն են Գլըզը և Լ.մախ, ըստ նախնեաց Լ.լիս, ու Լ.իլըլը և Լ.մախ, ըստ հնոց Իբիս, ունի կէս մը անբեր ու կէս մը բերրի

երկիր : Բնակիչքն են հայ, տաճիկ, թիւրքմէն ու քիչ մ'ալ հոռոմ : Հայերուն շատերը ասոր-
ձող են, որ հոստեղաց գլխաւոր ապրանքն է : Աս
գաւառը ունի շատ թեմեր՝ ըստ տաճկաց գործւոյ,
որոնց ամէն մէկը իրեն համանուն գլխաւոր քաղաք՝
կամ աւան ունի :

Սիլուս, կամ Սիւսսոս, ըստ հնոց Սիւսոսի, գլխա-
ւոր համանուն թեմին բերդաքաղաքն է իրր 10,000
տուն բնակիչով, որոնցմէ իբր 2000 տուն հայ են, որ
ունին երկու ժամ ու քանի մը մատուռներ : Վաղքին
չորս գին հայոց ու տաճկաց գեղեր շատ կան :

Թագաւ լեռներու մէջ Աէշիլ ըրմագ գետին քովը
իրեն համանուն թեմին բերդաքաղաքն է : Ունի 60,000
բնակիչ, որոնցմէ 2500 տուն հայ, 300 տուն հոռոմ
ու մնացածը տաճիկ են . հայերը ունին եօթը եկեղեցի :
Շատ աղէկ է հոստեղաց պղինձէ գործվածքները,
դասման, չէլը, պողտան, գինին, ու կապուտ ու գեղին
սեկը : Առուտուրը շատ ծաղկած է :

Պօպոս, կամ Պօպոսի գաւառին գլխաւոր տեղն է
Աօպոսի աւանը՝ զոր Չափան օղուն շատ շինցուց :

Արթիւր գաւառը ունի անուանակից գիւղաքաղաք
10,000 տաճիկ ու հայ բնակիչով : Հոս է Ան կամ
Անի գիւղաքաղաքը, որուն բնակիչքը են շատ հայ,
ետքը տաճիկ ու հայհոռոմ, որոնք գաւանանքով հո-
ռոմ են, իսկ լեզուով ու ուրիշ ամէն գիաց հայ են :

Արթիւր գաւառին համանուն քաղաքը Աէշիլ ըրմագ
գետին երկու գին շինած է, ունի 35,000 տաճիկ, հայ
ու հոռոմ բնակիչ, որոնք աղէկ չիթ կըգործեն :

Ղանիլ, ըստ հայոց Սիւնի գաւառը սև ծովուն
քովերն է, որ ունի համանուն գլխաւոր քաղաք, որուն
բնակիչքը ըստ եւեջօք մասին տաճիկ են :

ՎԱՅՍԵՐԻՎ : նահանգը, որ ըստ նախնեաց կա-
պոպոսի կըսվի, լեռնային երկիր ունի . իր մենծ լե-
ռերն են Արճիս՝ կամ Արճիս լեռը, ըստ տաճկաց՝ Ար-

լանիլ Գողթի, ու սուրբ Ռաբուէլ, կամ Անի Գողթի: Օղբ
ցուրտ ըլլալուն գետինը շատ պտուղ չունի: Ռոլոր
նահանգը վեց թեմ ունի, այսինքն՝ Գալսեթի, Ինճի-
սու, Գարսնիսարի Գեղի, Եսնիսը, Կիսիկի ու
Իսլամի:

Գալսեթի թեմին պարսպապատ բերդաքաղաքն է
Գալսեթի, ըստ հնոց Սնճու, ետքը՝ Կիսիկի ըսված,
Արճիաս լեռանը տակը. որ ունի հրապարակներ, մենձ
խաներ, շատ մզկիթներ, բաղնիքներ, 2 հայու
եկեղեցի ու երկու հոռմի, որոնց հաստեղաց առաջ-
նորդը երևելի է բոլոր արևելք: Բնակիչքն են տաճիկ,
հայ ու հոռոմ, վարպետ ու արհեստասէր մարդիկ են.
մէջերնին երկաթագործ ու կտաւագործ շատ կայ,
Առուտուրը աղէկ է. իր գլխաւոր ապրանքն են՝ գեղին
սեկ, սաքսու ու ապուխտ: Գալսեթիէն վեց ժամ հեռու
է անուանի վանքը սուրբ Կարաղեթի:

ՆԻԿՏԻ; նահանգը շատ բերրի երկիր ունի, ու
վեց թեմ կրբաժնելի: Իր գլխաւոր թեմը ու քաղաքը
Նիկի՛ է՝ Գրգըլ ըրմաք գետին քովն է հայ, տաճիկ ու
հոռոմ բնակիչով:

ՍՆՆԻԳԻԻ; նահանգը շատաջուր ու պտղաւէտ
երկիր ունի, օղբ ցուրտեկէ է: Կրբաժնելի տասը թեմ,
ուր են Սնուրի ու Սմասթ ըստ հնոց Սմասթի քա-
ղաքները:

ՇԷՊԻՆ ԳԵՐԵ ԷԻՍԵՐ նահանգը ըստ տաճ-
կաց Լըրդիրումի գաւառներուն մէկն է. ունի զանազան
թեմեր: Շաղին Գարսնիսար իր համանուն գիւղաքա-
ղաքով, Եսնիսար, կամ Եսնիս, և այլն:

ՄՈՍԿՈՎԻ ՀԱՅԵՍՏԱՆ:

Ըս մասը բոլոր մեծ հայաստանին մէջն է, որուն սահմաններն են արևելքէն ու հարաւէն պարսկի Լատրպէճան նահանգը ու ուրիշ տեղերը, արևմուտքէն տաճկի հայաստանը ու հիւսիսէն կիւրճիւստանը, ու կիյնայ 38 ու 42 հիւսիսային լայնութեան ու 61 ու 66 երկայնութեան աստիճաններուն մէջը: Երկիրին հիւսիսային արևմտեան ու հարաւային դիերը լեռնային են, իր գլխաւոր լեռն է Երբարա, կամ Սնախ, որուն բարձրութիւնը ըստ նոր զննութեանց 16,200 ոտնաչափ է: Երևելի է նաև Երբարա լեռը: Իր ջրերուն մէջը անուանի են ծովային լճեր, ըստ տաճկաց լճերի լճեր, որ է 80 մղոն երկայնութեամբ ու 50 մղոն լայնութեամբ ծովու նման լիճ. Սնախ կամ Վերաբարա լճեր, ըստ տաճկաց՝ Արաքսէ Կիւրճի լճեր, որ ունի կղզի մը հռչակաւոր վանքով մը: Ըս լճէն կելլէ Օքնի գետակը ու Երասխ կըմտնէ: Կար ու Երասխ գետերն ալ իր սահմանին վրայ են: Երանակը տաճկի հայաստանին չափ ցուրտ է: Վերաբար բերքերն են՝ առատ արմտիք, բրինձ, մետաքս, խաղող ու գինի:

Սոսկովի հայաստանը երկու մաս կըբաժնենք, սյսինքն՝ հարաւային ու հիւսիսային. առջինին մէջն են Երևանն ու Երևանի իրաւաւորութիւնները, որոնք առաջ պարսկի տակ իրաւաւորութիւններ էին, ու մեկանց 400 մղոն ընդարձակութիւն ու 150,000 բնակիչ ունին: Երկրորդին մէջն է լճերի մէջն:

Երևան, երևելի բերդաքաղաք է Երասխ գետին արևելեան դին ու Օքնի գետակին երկու քովերը, ունի աղվոր հրապարակ մը, խաներ, շատ խանութներ, բաղնիքներ, մզկիթներ ու եկեղեցիներ. իր բնակիչքը են իբր 15,000 հայ ու պարսիկ:

Երևանէն օրվան մը ճամբայ հեռու գէպ 'ի հարաւ հին Երբարա քաղաքին տեղն է Երբարա հորը եկե-

զեցւոյ մը մէջ, ուր մեր սուրբ Ղարիբոս լուսաւորիչը 15 տարի կեցաւ :

Եւրոպացիներ, տաճկերէն՝ Իւլ Ֆելսո, Մարատ ու Մարգաթ լեւանցը մէջ դաշտի մը վրայ անուանի վանք է. ուր հայոց կաթողիկոսը կրնաստի: Ունի իրեք մաս. մէկը կաթողիկոսին ու վարդապետներուն բնակարանն է. հոս է նաև Եւրոպացի եկեղեցին՝ Շարիֆի Մարտիրոսի. երկրորդը ուխտաւորներու բնակարանն է, ու երրորդը իբրև վաճառանոց մըն է: Սանքին պարիսպէն դուրս հայաբնակ մենծ գեղ մը կայ Եւրոպացի ըսված հին Սարգսի քաղաքին մօտերը, որուն մօտ իրեք վանք կայ, զանոս սրբուհոյն Ղարիֆի, զանոս սրբուհոյն Շարիֆի ու Շարիֆի զանոս:

Ստեփան, համանուն կուսակալութեան քաղաքն է Ստեփան գետակին քովը, որ առաջ շատ շէն էր ու իբր 30,000 տուն ունէր, բայց հիմայ շատ անշքացած է:

Մարտիրոս, մենծ գեղ է Ստեփանէն իրեք ժամ հեռու:

Մարտիրոս, կամ Հին Մարտիրոս, ատեն մը իբր 4000 տուն բնակիչով մենծ քաղաք էր, բայց հիմայ ինկած է:

Մուսանի են հոս նաև Խոսի գաւառը, որ ունի զանազան գեղեր. Շարիֆ ու Մարտիրոս աւանները, ու Մարտիրոսի, Տալի ու Ուրի գեղերը, որ բոլոր հայաբնակ են:

Մարտիրոս երկրին մէջն է պարսկի Մարտիրոս նահանգին Խոս խանութիւնը, որուն երկրին մէջը 3000 տունի չափ քաղաքացիներ, կամ քրտանիներ Սիւրբ գետէն եկած կրքնակին: Համանուն քաղաքը Մարտիրոսի ծովակին հիւսիսային դին է. իր բնակիչքն են պարսիկ ու հայ որոնք ունին երկու եկեղեցի:

Մարտիրոս, մասնաւոր վիճակ է ընդհանուր կուսակալի կամ կառավարի տակ: Իր համանուն գլխաւոր քաղաքը հայաստանին հիւսիսային ծայրը՝ ու վրաստա-

նին Վարժլ նահանգին հետ կպած է, որ շատ ատեն իրեն մօտ երկիրովը մէյտեղ՝ վրաց, կամ Ախւրճիներուն տակը եղաւ, ուր իրենց թագաւորները կընստէին: Աւուր գետը երկու մաս կը բաժնէ քաղաքը. աջ դին են հին ու նոր քաղաքը ու ձախ դին են Լճաւոր ու Իանէ արուարձանները: Նոր քաղաքին մէջը շատ մենծ տներ ու Խանէր կան, որոնք հայոց մեծերը շինած են: 1825ին բնակչաց թիւը 33,000 էր, որոնց մէջը շատը հայ են, որ ունին երկու դասատուն՝ ուր զանազան լեզուներ կըսորվին, կան հոս ուրիշ դասատուներ, գործարաններ, և այլն: Ուղղափառները ունին եկեղեցի մը քափուչին կրօնաւորներու ձեռք: Թիֆլիզ ամէն օր աշխարհին զանազան դիաց վաճառականներ կուգան ու իր առուտուրը շատ բանուկ է:

Ալէնճէ, ըստ նախնեաց՝ Գանձալ, գաւառ է առատ մետաքսով ունի գլխաւոր բերդաքաղաք Ալէնճէ՝ կամ Եղէսաբէլեոսաբուլէս ըսված իր համանուն գետակին քովը:

Գարապուղ, աղէկ երկիրով գաւառ է, ունի առատ բրինձ ու աղվոր ձի: Իր գլխաւոր քաղաքն է Գարապուղ, կամ Շուշու:

Հոս են Հաղբար ու Սանահին գեղերը, որ ունին մէյմէկ վանք:

Յօդ . ք .
ՓՈՒԲՐ ԵՍԻԸ :

Ըստ տեղս տաճկի Ըսիսային արևմտեան կտորն է , հայաստանին , միջագետքին ու Լափրատ գետին արևմտեան դին , սև ծովուն հարաւային դին , Ըրշիպեղազոսին արևելեան դին ու միջերկրական ծովուն հիւսիսային դին : Իր ընդարձակութիւնը իբր 12,700 քառակուսի մղոն կըսեպփի : Իր մենծ գետերն են՝ Գալգէլ Երմոգ ու Լաշէլ Երմոգ : Լըրկիրը լեռնային է . իր մենծ լեռերը են՝ Տարուս , Ըրճիտս , Ուէ՛յոսս , կամ Վեշէլ Կուլէ , Ըլա Կուլ , Լըլըլը Կուլ , և այլն : Օդը առողջ ու մաքուր է : Գետինը ընդհանրապէս աղէկ բերրի է , բայց աւելի բերրի կը լլար , թէ որ աւելի աղէկ մշակվէր : Ընակիչքն են տաճիկ , քիւրտ , հայ , թիւրքմէն , հոռոմ , հրէայ , որոնց թիւը վեց միլիոն կըսեպփի . որ երկրին մեծութեանը նայելով շատ քիչ է : Հոստեղաց առու տուրը աղէկ է :

Փոքր Ըսիան կըբաժնըվի վեց նահանգ , կամ Էյուլէն . որ են՝ Ընոթուլու մանսուր , Գարտաման , Ըրոման , Սնրուշ . Սէվաս , ու Գարապղան : Ըսոնցմէ 'ի զատ են Ընոթուլուէ կըլէնէրը :

ԸՆԸՏՈՒՆՈՒ ՍԸՍՆԸԻՈՐ փոքր Ըսիսային ցամաք երկրին արևմտեան հիւսիսային ծայրն է . ունի զանազան գաւառներ , կամ սանճախէր . Վօճա էլէ , Խիթուլէնիթուր , Ըյոթլն , Պօլու , Լըլէլէլէր , Գաուրուսիէ , Գարլէսի , Սարուխան և այլն , որոնց անուանի քաղքըներն են :

Իսսիլիթուր , Ստամպուլի արուարձաններուն մէկն է , եօթը ցած բլրակներու վրայ շինած , որ ունի 12 մենծ մզկիթ , մենծ խանէր , «էլէթիէ» գործարաններ , կտաւի պատմախանէ ու 60,000 տաճիկ . հայ ու հոռոմ ընակիչ . հայերը ունին երկու թաղ՝ Սէլուսըլ ու Լըլէնի մահալէ , ու երկու եկեղեցի :

Պատիւ շեօյն պղտիկ քաղաք է հին Վրաստանի քաղաքին տեղը Ստամբուլու դիմացը տաճիկ, հռոմ ու հայ բնակիչով :

Իպնիֆո (Իպնիֆո), ըստ հնոց Վիլիֆո, ատեն մը երևելի քաղաք էր 24 թաղ բաժնած, հիմայ շատ ինկած է, ունի մենծ խան մը :

Իպնիֆ, ըստ հնոց Վիլիֆ, ատեն մը հռոմրներու կայսերանիստ քաղաքն էր. հիմայ 200 տնով գեղ մըն է : Հոս եղաւ առջի ընդհանուր սուրբ ժողովը :

Պոբոս, կամ Պոբոս, բերդաւոր քաղաք է, ունի արուարձաններ, շատ մենծ մկրիթներ, անուանի բաղնիքներ, մետաքսի ու զանազան մետաքսեղէնի, խոբիֆէն, պիբիանձիֆ, գոբանլի գործարաններ, ու 135,000 բնակիչ, որոնց մենծ մասը տաճիկ են, մնացածը հռոմ, հայ ու հրէայ : Սետաքսի առուտուրը երևելի է :

Վիլիֆո, ըստ հայոց կոբիֆո, Մնատուրին գլխաւոր քաղաքն է շեօնի սոյն գետակին մօտ, ուր կրնաստի Մնատուրի պէյլէրպէյին. ունի 10,000 տուն ու 50,000 տաճիկ, հայ ու հռոմ բնակիչ : Առուտուրը բանուկ է :

Իպնիֆո, ըստ հնոց Վիլիֆո, մենծ ու հին առուտուրի քաղաք է. ունի իբր 100,000 բնակիչ, որոնց տասներորդ մասը քրիստոնեայ է, պինտ շատը հայ են, որ ունին եօթը եկեղեցի : Իր մենծ բերքը ու շահը բարակ ու սքանչելի այծի մաղ է. աս տեսակ այծերը հոստեղաց յատուկ են, ուրիշ տեղ իրենց պէս աղէկը չի գտնուիր : Վրաղբրցիներուն գլխաւոր գործքը ու արհեստը աս մաղէն կերպաս, այսինքն ոճ բաներն է :

Իպնիֆ, ըստ հնոց Վիլիֆո, Մնատուրին մենծ ու անուանի առուտուրի քաղաքներուն մէկն է, իր համանուն ծովածոցին մօտ Սէլէս գետին քովը. ունի իբր 100,000 բնակիչ, որոնց շատը տաճիկ են : Առու-

տուրը շատ ծաղկած է, որուն պատճառովը իր նաւահանգիստը ամէն դիաց վաճառականի նաւեր կուգան : Այն հոս ինկիլիզի, ֆուանսըզի, օլանսըզի, շվէտի ու պոսուշի գօնասունէր :

Երևելի են նաև Սփրանկո, Սալալի, կամ Ասթուլի, Սնկուլի, Սնկուս ու Սնկուլ քաղաքները :

ՎԻՆՄԱՆՆԵՐ, նահանգը Վրզըլ բնակ գետէն կըսկսի ու կերթայ ինչուկ միջերկրական ծովը : Վայսիլի ու Վիլիլի գաւառներէն 'ի զատ, որ փոքր հայաստանին մէջը կիյնան, ունի Վանի, կամ Վանի գաւառը, որ ունի համանուն քաղաք, ըստ հնոց Իլիանի ըսված . իբր 15,000 բնակիչով, որ աղէկ սեկ ու գորգ կըգործեն : Առուտուրը բանուկ է Իզմիրի հետ :

Իլիլի, կամ Սալի, Վարամանին մօտ գաւառ է երկու դուղով փաշայի տակ զանազան թեմեր բաժնած : Ալիլի, առջի թեմն է . որ ծովու քով ունի համանուն քաղաք ըստ նախնեաց Ալիլի ըսված :

ԱՍՄԱՆ, նահանգը հին ատենները կըսվէր Ալիլի, ու մեր Ռուբենեան թագաւորներուն տակն էր . հիմայ իրեք դուղով փաշայութիւն է : Իր մէջէն կանցնին Ղիզան ու Չուլի կամ Սիլի գետերը ու միջերկրական ծովը կըմտնեն : Օղը սաստիկ տաք է ու գետինը շատ բերրի : Ունի տասնըմէկ թեմ :

Ասթուլ գլխաւոր թեմն է, որ ունի համանուն բերդաքաղաք Աէհան գետին քովը իբր 30,000 տաճիկ, հայ ու հոռոմ բնակիչով :

Ալի թեմը ունի համանուն բերդաքաղաք 100 տուն տաճիկ ու 60 տուն հայ բնակիչով : Հոս է Ռուբենեան հայ թագաւորներուն պալատը կէս քանդած :

Վարսան թեմը ունի անուանակից քաղաք՝ հին Տարսան քաղաքին աւերակներուն մօտը Վարսան գետակին քովը միջերկրական ծովէն երկու ժամ հեռու 30,000 տաճիկ, հայ ու հոռոմ բնակիչով ու նաւահանգիստով մը :

ՍԵՐՍԵՐ, նահանգը ատեն մը մեր թագաւոր-
ներուն ձեռքը եղաւ ու կըրպէր Լէրբոսայէ, որ Լատա-
նա նահանգին արևելեան դին Լխոր տաղբին քովերն
է երկու դուղով փաշայի տակ : Իր մէջէն կանցնին
Ղընտն, Սէնտն ու Գօշայէ գետերը : Երկիրը շատ
բերրի է, բրինձը շատ ընտիր է, բոլոր նահանգը վեց
գաւառ, կամ սանճաք բաժնած է :

Սորաշ, գլխաւոր գաւառն է, որ ունի համանուն
քաղաք, ըստ հնոց Գեորգիէ ըսված 10,000 տաճիկ ու
հայ բնակիչով :

Լյնէա գաւառը ունի համանուն պարսպապատ
բերդաքաղաք 20,000 բնակիչով, որ են տաճիկ, հայ
ու ինչիւն, որոնք կէս մը քրիստոնեայ են ու կէս մը
տաճիկ :

Սիւլ Լիւ նահանգին վրայ տես հայաստանին մէջը :

ԳԻՐԳՊՕՈՒՆ նահանգը, որ նաև Տրապիզոն ու
Լապիստն կըսվի, սև ծովուն հարաւային արևելեան
դին կկենայ, իր մէկ մասը առաջ մեր իշխանացը ձեռքն
էր : Երկիրը լեռնային է, որուն մեծ լեռերն են՝ Լաւո-
պոն, կամ Խօշոդն ու Լայլա Բաճիպէ : Իրեն սահ-
մանին վրայ է Ղըրբոն գետը : Գետինը շատ բերրի է,
միրգ շատ ունի : Իր բուն բնակիչքն են լաւ, կամ լեւի-
որոնց մէկ մասը հռոմ քրիստոնեայ են, մէկ մասն
ալ տաճիկ քրիստոնէութենէ դարձած : Հայ ու հռոմ
ալ կայ : Բոլոր նահանգը զանազան գաւառ ու վիճակ
բաժնած է, այսինքն՝ Գրապոն, Թրիպոն, Ինչի-
(Ք), Լիւն, Կիւնի, Լիւնի, Լիւնի, Լիւնի :

Գրապոն գաւառը ունի համանուն պարսպապատ
քաղաք իրեք բերդով ու 15,000 բնակիչով (ըստ ոմանց
200,000, գուցէ բոլոր նահանգին մէջը), որոնց շատը
տաճիկ են : Ուղղափառ հայերը ունին եկեղեցի մը, ու
հռոմըները եպիսկոպոս մը : Վաղքին առուտուրը ա-
ղէկ է :

Գրապոնին մօտ է Կիւնի-ճաւնի գաւառը, որ

ունի ոսկիի ու արծաթի հանքեր, որոնք հիմայ շեն գործըվեր, իր գլխաւոր համանուն քաղաքին բնակիչքը հռոմ ու հայ են :

ԵՆԵՏՈՒՍՈՒՄ (փոքր Եսիային) ԿՂՆՕԻՆԵՆԻՐՄՈՒՄ ԾՈՂՆԻ ԵՐԶԷՄԵՆԻՆՈՒՄ ու ՔՂԵՐԿՐՈՒՄ ԾՈՂՆԻ ՄԷՋՆ ԵՆ :

Սմրնարու ծովը սև ծովուն ու Երջիպեղազոսին, կամ Կէլեփոլու փոքրուէն կամ Պոչալ կնսարուէն մէջն է, իր անունը կառնէ իր մէջի մենծ կղզիէն, որ է Սմրնարու, բոլոր լեռերով լեցուն, ուսկից շատ մերմէր քար կելլէ : Ունի 4000 բնակիչ ու պզտիկ քաղաք մը նոյնպէս Սմրնարու ըսված իբր 500 տուն տաճիկ, հռոմ ու հրէայ բնակիչով :

Կան հոս ուրիշ կղզիներ ալ . Գլնուլ, Պոչալ, Էնիլեւէ, Պելլեւէ արու, կամ Իշնուէն կղզի . և այլն :

Երջիպեղազոս, կամ Երջիպեղազեան ծովը մարմարա ծովէն ինչուկ միջերկրական ծովը կերթայ Եսիայի ու Եւրոպայի մէջ երկայն ու ընդարձակ նեղուցի մը նման : Սէջը շատ կղզիներ կան կէս մը Եսիայի գին ու կէս մը Եւրոպայի : Եսիայի գին երեւելի են աս կղզիները :

Պոչճո արու կամ Պոչճո արասը (Գլնեւիս) Կէլիպոլու փոքրազրին մօտ . ունի Քնիլեւէ գինի : Իր հիւսիսային գին ունի համանուն քաղաք 6000 բնակիչով : Քանի մըն ալ գեղեր ունի :

Սիլեւէ կամ Սիլեւէնի (Իլսոս) մենծ կղզի է ունի շատ գեղեր ու 40,000 բնակիչ : Իր գլխաւոր քաղաքը Գոսարձ՝ կամ Սիտիլի՝ ունի երկու նաւահանգիստ ու 8000 բնակիչ, որոնք սապօն ու ձէթ կը շինեն :

Սարդ արասը (Շէօ), մենծ կղզի է, ամէն տարի կուտայ իբր 50,000 ղանդար ծովթ ու 30,000 ղանդար մէտաքս, առատ կիտրոն, ընտիր գինի, և այլն : Իր բնակիչքը քանի մը տարի առաջ 115,000 հռոմ

էին : Համանուն գլխաւոր քաղաքին բնակիչքը (որ ա-
տեն մը 70,000 էին) կը գործեն մետաքս ու մետաք-
սեղէն :

Երևելի են նաև Սոսոմ պատանի (Սոսո) 50,000 հո-
ռոմ բնակիչով : Իսլամիչ (Գ) 10,000 բնակիչով,
Պարսի, ուր սուրբ Յովհաննէս աւետարանիչը իր
յայտնութեան գիրքը գրեց, Իսաբաթ, և այլն :

Սիջերկրական ծովուն (որ է՝ Եգրի) մէջի
կղզիներն են :

Ուրբան (Հոսթոն), մենձ կղզի է 42 քառակուսի
մղոն երկիրով : ունի 20,000 բնակիչ, որոնցմէ 14,000
հոռոմ են, մնացածը տաճիկ : Իր համանուն գլխաւոր
քաղաքը ունի երկու նաւահանգիստ, նաւարան մը ու
10,000 բնակիչ :

Քարաբաղ (Կարաբաղ) պինտ մենձ կղզիներուն մէկն
է 390 մղոն բնագարձակութեամբ, որ ունի լեռնային
երկիր : Օգը այնչափ առողջ չէ. գետինը պտղատու
է : Ունի իրր 84,000 բնակիչ, որոնցմէ 40,000 քրիս-
տոնեայ՝ ըստ մեծի մասին հոռոմ են, բոլոր կղզին ա-
ռաջ 16 թեմ, կամ չորս գաւառ բաժնած էր. հիմայ
13 թեմ կը բաժնուի ու ունի զանազան քաղաքներ ու
աւաններ :

Ինժիգուլ (Ինժիգուլ, կամ Ենժիգուլ) իր գլխաւոր
պարսպապատ քաղաքն է 15,000 աաճիկ. հոռոմ ու
հայ բնակիչով. հայերը ունին եպիսկոպոս մը ու հոռ-
մըները արքեպիսկոպոս մը :

Յօդ. Կ:

Ե Ս Ո Ր Ի Վ:

Է. Լսորիք (Շում, կամ էլ Շում) արևելքէն ունի սահման Լսիրատ գետը ու արապստանը, հիւսիսէն փոքր Լսիան, արևմուտքէն միջերկրական ծովը ու հարաւէն արապստանը, և կէյնայ 52 ու 57 երկայնութեան ու 30 ու 37 լայնութեան աստիճաններուն մէջը: Լսր ընգարձակութիւնը 2300 քառակուսի մղոն է:

Ը. Լսրկրին արևմտեան դիերը լեռնային են, ուր են Լէֆնանիս լեռերը որոնցմէ զանազան գետեր կիջնան, ինչպէս Որոնդէս, կամ Լսի գետը, և սյլն. արևելեան դիերը դաշտային ու քիչ մ'ալ անբերանապատներ են: Լսրանակը տաք ու առողջ է, բայց ժանտամահ յաճախ կը լլայ. երկրին մէջիտեղերը պինդ առողջ եղանակ ունին: Վետինը բերրի է. ունի առատ արմաթք, մանաւանդ դարի ու ցորեն, բամպակ, մետաքս, Լիւֆիան, ձէթ, առատ պտուղ, գոմէշ, ոչխար, սյծ, ուրիշ կենդանիներ, և սյլն:

Թ. Հոստեղաց առջի ու հին բնակիչներն են ասորիները, կամ սորացիք, որ Նոյ նահապետին թոռանցը մէկէն՝ Լսրամէն՝ յառաջ եկած են: Մեկալ բնակիչքն են՝ տաճիկ, արապ, քիւրտ, թիւրքմէն, հրէայ, հայ, հոռոմ, ուղղափառ մարոնիդ, կովապաշտ տիւրզի ու չինկեանէ, մեկանց իբր մէկ միլիոն ու կէս, որոնց հասարակ լեզուն արպերէն ու տաճկերէն է: Լսրուտուրը աւելի հայերը, հոռմըները ու եւրոպացիները կրնեն:

Կ. Լսորիք օսմանցիի թագաւորին ձեռքն է, որուն անմիջական կառավարութիւնը հիմնայ Լսրիպտոսի փոխարքային կամ փաշային տուաւ: Բոլոր երկիրը կրբաժնըվի չորս նահանգ, կամ իրեք դուղով փաշայութիւն, որ են՝ Հալէպ, Ղարտուլուս, Լսրիս, ու Ղարտուսիս, ըստ տաճկաց Շում:

ՀԱՅԿՊ նահանգը վեց գաւառ՝ կամ սանճար կրբաժներովի : Իր պարսպապատ գլխաւոր քաղաքը **Հալեպ**՝ ըստ հնոց **Բեբէ**, որ **Բ**, սիայի երեւելի առու-տուրի քաղաքներուն մէկն է, ունի 12 արուարձանք, շատ գործարաններ բամպակեղէնի ու մետաքսեղէնի, երկու հայու եկեղեցի, իբր 14,000 տուն ու 200,000 բնակիչ :

Բեբէ ըստ հնոց **Բեբէ**, ասորիներուն գլխաւոր թագաւորանիստ քաղաքն էր . հիմայ շատ անշուք է, ունի իբր 18,000 բնակիչ :

Սանդար, ատեն մը անուանի քաղաք էր, հիմայ պղտիկ աւան մըն է, որ իբր **Հալեպ** նահանգիստը կրսեպովի միջերկրական ծովուն մէկ ծոցին քովը :

ԲԱՐԵՊԱՍ նահանգը, որ և **Գարապուս** **Հ** կրսովի, կիյնայ միջերկրական ծովուն քովերը . իր գլխաւոր քաղաքը **Հ** **Գարապուս**՝ կամ **Տրեպուս**՝ լիբանան լեռանց տակը **Ս** **Գարապուս** գետակին երկու դին է 16,000 տաճիկ, արապ, հրէայ ու հռոմ բնակիչով, որոնք չիգործած մետաքսով ու բամպակով առուտուր կրնեն :

Հաստեղաց Ղեպէլ վիճակը կրնակին (100,000) **Տրեպուս** ըսված ուղղափառ քրիստոնէներ :

ԲԱՐԵՊԱՍ նահանգը միջերկրական ծովուն քովը ու **Գարապուս** հարաւային դին է : Իր գլխաւոր պարսպապատ քաղաքը **Բեբէ**՝ կամ **Բեբէ**՝ ըստ հնոց՝ **Պարա-ճայէս**, կարմեղոս լեռան տակն է, որ ունի 16,000 տաճիկ, հայ, հռոմ ու հրէայ բնակիչ, որոնք բամպակով առուտուր կրնեն :

Հաս են Սուր (**Տեբուս**), **Սայրա** (**Սեբուս**) ու **Պեբուս** (**Բեբէ**) քաղաքները, որ հին ատենները անուանի էին : **Հաս են Սուրա** (**Սուրա**) ու **Սանայ** գեղերն ալ :

Բ նահանգին մէջն է **Գեբուս** (**Գեբուս**) անապատ երկիրը լիբանան լեռանց վրայ, որոնց թիւը 40,000, ըստ

ումանց՝ 160,000 կրսեպփի • կրօնքով կովապաշտ են , բայց ճշմարիտ աստուածն ալ կրճանչնան :

Վ. Ը. Ս. Մ. Ս. Կ. Ո. Ս. , ըստ տաճկաց՝ Շ. Մ. Ս. նա-
հանգը ընդարձակ երկիր ունի , որ կրբաժնրփի վեց գ-
ւտտ՝ կամ սոնճաք իրեք գուղով փաշայի տակ , որ կրսփի
Լ. Քիլ էլ հոճէ՝ կամ հիւճաճէ : Իր գլխաւոր քաղաքը
Շ. Մ. Ս. ըստ հնոց՝ Վախտախոս՝ լիբանան լեռան մտա Պարտի
գետին քովը շինած է , որ ունի 200,000 տաճիկ , հրէայ ,
թիւրքմէն , հոռոմ ու հայ բնակիչ : Հոս կրժողփին ամէն
տարի Ս. Է. քրէ ուխտի գնացող տաճկընները իրր 40,000
հոգի :

Հոս լիբանան լեռանց վրայ Վ. Է. իրփան ըսված տե-
ղը կայ երկու վանք Հոռոմայ եկեղեցւոյն հպատակ հայե-
րու , ու կաթողիկոսարան մը , որուն թեմը՝ կամ իշխա-
նու թիւնը կերթայ ինչուկ Պաղտատ ու Լ. գիպտոս :

Ըստ փաշայութեան մէջն է Պարտախոս՝ երկրը , որ
Հ. Է. արտաքս , սո-րէ երկր , ու երկր պարտախոս , ըստ ա-
րեւելեայց՝ Բարաշաճ ալ կրսփի , որ է Ը. սորիքին հարաւ-
ային մասը : Լ. րկիրը լեռնային է , իր բարձր լեռերն են՝
Թափօր , Հ. Է. րան , Սիւն , Լ. Է. րան ու Չիլիլեւոց լեռը :
Ս. էկ հատիկ մենճ գետ ունի , որ է Յորդանան գետը :
Հոս են նաև Բաւալ ծովը , որ է ահագին մենճ լիճ մը ,
ու Վ. Է. նիւսարեւիլ , կամ Տիլիլեւոյլ ծովը՝ կամ լիճը :

Իր գլխաւոր պարսպապատ քաղաքն է Լ. րոստղէճ ,
ըստ տաճկաց՝ Վաւիլի , կամ Վաւիլի շէրէճ , որ ունի
իրր 30,000 տաճիկ , հրէայ , հայ , հոռոմ , կիւրճի ,
խպտի ու հապէշ բնակիչ : Իր երեւելի շէնքն է՝ քրիս-
տոսի սուրբ գերեզմանին եկեղեցին , որուն մէջը ըստին
ուղղափառները , հոռմները ու հայերը իրենց զատ մա-
սերը , կամ խորանները ունին : Լ. րեւելի է նաև սուրբ
Յակոբայ վանքը ու Ժամը հայոց ձեռքը , ուր ամէն
տարի շատ հայ ուխտաւորներ կերթան : Կամ ուրիշ
երեւելի շէնքեր ալ :

Ի. Է. րեւիլի , պզտիկ գեղ մըն է իրր 40 աղքատ

տուներով • իր երեւելի շէնքն է ան եկեղեցին, որ Վրբիս-
տասի տեսան մերոյ ծնած ախոռին տեղը շինած է : Ըսոր
հետ կ'զատ է վանք մը, ուր խաւարացի, հայ ու հոռոմ
արեղաներ կը բնակին :

Հոս են Լաֆա (Յապուէ), Հալէլ, կամ Վրալէլ
(Լափրոն), Բոմլա (Բըէ-Յալէլ), Կապուալ (Սէ-բէ) ու
Բէ-Կիլոա՝ քաղքընները, ու Սոմաբէ, Կիսաբէ, Բէ-Է-
Տաուա, Գապաբէ (Տէ-Է-բէ) ու Վրապա գեղերը :

Յօդ . 7 :

Մ Ի . Գ . Ա . Գ Ե Տ Բ .

III. Ըս երկիրը, որուն տաճկընները Լը ճէ-Կէ-Է կը-
սեն, հիւսիսէն ունի սահման Տիարպէքիրը, արեւելքէն
Տիգրիս գետը, արեւմուտքէն Լափրատը*) ու հարաւէն
Իրազ արապին, ու կլինայ 33 ու 38 լայնութեան ու 55
ու 62 երկայնութեան աստիճաններուն մէջը : Իր մե-
ծութիւնը իբր 2000 քառակուսի մղոն է :

Է. Լը կիրին հիւսիսային դին լեռնային է, ուր են
Ղո-Կի ու Սինճաբ լեռերը : օդը բարեխառն է ու գե-
տինը շատաջուր ու բերրի . իսկ հարաւային դին տեղ
տեղ բերրի ու տեղ տեղ անբերանապատ է : Իր բեր-
քերն են՝ արմտիք, բրինձ, առատ խաղող, ձիթենի,
մեղր, բամպակ, ու քանի մը տեսակ մետաղներ, մա-
նուանդ պղինձ : Իր բնակիչքն են տաճիկ, քիւրտ, հայ,
թիւրքմէն, արապ, ասորի, հրէայ ու թափառական
թաթարներ :

*) Ըս երկու գիւղերուն մէջ Կիլոա լեռնային համար
Էրեւը Էրեւ Սիջապետը :

Գ. Ռուրը միջազեպք մէկանց կը բաժնըվի հիմայ իրեր նահանգ, կամ փաշայութիւն, որ են՝ Ռ-րֆո, կամ Րաֆֆո, Պիլեճիք ու Սնսուլ^{*)} :

ՈՒՐՎԻ, մենձ նահանգ է աղէկ օդով ու հարուստ գետինով, ու կը բաժնըվի եօթը վիճակ, կամ Գապուլուք իրեր գուղով փաշայի մը տակ: Վլխաւոր համանուն վիճակը ունի պարսպապատ բերդաքաղաք Ռ-րֆո, կամ Ռ-րէո, ըստ հնոց Լըրէնիւ ըսված. իր 40,000 բնակչացը մէջը իրր 2000 տուն հայ կան, որոնց մէջը վարպետ ճարտարապետներ, քարակոփներ, կտաւագործներ ու սեկ շինողներ շատ կան:

ՊԻՐՎԻՆՆԻՐ նահանգը երկու գուղով փաշայի տակ է, ու կը բաժնըվի հինգ թեմ, որոնց գլխաւորը նոյնպէս Պիլեճիք ըսված՝ ունի համանուն պարսպապատ բերդաքաղաք իրր 2000 տուն տաճիկ բնակիչով:

Րոմ Գալէ, ըստ նախնեաց շատնկա թեմը ունի ամուր բերդ, ուր էր հին ատենները հայոց կամօղիկոսներուն բնակարանը:

Շոս է Ղեղէրէ գաւառը, որ ունի համանուն բերդաքաղաք Տիգրիս գետին քովը քիւրա ու ասորի նեստորական բնակիչներով:

ՍՈՒՍՈՒՎ, պղտիկ նահանգ է. որուն գլխաւոր պարսպապատ բերդաքաղաքը Սնսուլ, կամ Սնսուլ Տիգրիս գետին քովը հին Վինուէ քաղքին տեղը՝ կամ մօտերը շինած է, ունի գորգի, չուխայի, մետաքսեղէնի ու փէլուկեփի գործարաններ ու 75,000 տաճիկ ու նեստորական բնակիչ: Մուսուրն ալ շատ աղէկ է:

*) Սիլուֆէփա աստաջ իսլամիւնը Երեւո հաս, այսինքն՝ Միջազեպք հայոց, որ է հիւսիսային հասը ու շատ ասիւն հայոց յեւոքը Եզաւ. ու Միջազեպք ասորոց, որ է հարստային հասը ու շատ ասիւն ասորիներուն յեւոքը Եզաւ:

Հոս է ՍԶԲԷՆ, ըստ տաճկաց Նեփոլէն թեմը, որ ունէր անուանակից քաղաք, որ հիմնոյ պղտիկ գեղ մի է քիւրտ բնակիչներով : Ասոր եպիսկոպոսն էր սուրբ Յակոբ, անոր համար կրավի՛ մԶԲնացէ :

Յօդ. Ե :

ԻՐԸԳ ԵՐԸՊԻ :

Է. Աս երկիրը Վաղարշապատի էրկեր ու Ասորեստան ալ կրավի, և ունի սահման արևմուտքէն արապիստանը ու միջագետքը, հիւսիսէն Տիարպեքիրը, արևելքէն պարսկաստանը, ու հարաւէն պարսկային ծոցը, ու կկլնայ 30 ու 38 լայնութեան ու 58 ու 68 երկայնութեան սահմաններուն մէջը :

Ը. Երկիրին արևելեան ու հիւսիսային դին լեռնային է, իսկ արևմտեան ու հարաւային դին մենձ դաշտ է, ուսկից կանցնին Լաիրատ ու Տիգրիս, որոնք հոս իրարու հետ կրմիանան : Գետինին մենձ մասը բերրի է : Անապատներու մէջ ունի առիւծ, վարաղ, ինձ, ջայլամ, փասիան, և այլն : Իր բնակիչքն են թափառական արապ, տաճիկ, հայ, և այլն :

Թ. Իրագ արապին կրբաժնըվի իրեք նահանգ, կամ փաշայութիւն, այսինքն՝ Պաղպոտ, Պասրա ու Շէրէշ :

ՊԸՂՏԸՏ նահանգը ունի զանազան գաւառներ, կամ սանձաքներ : Իր գլխաւոր համանուն գաւառը ունի պարսպապատ փաշայ նստող բերդաքաղաք նոյնպէս Պաղպոտ ըսված, որ ունի շատ հրապարակներ, վաճառանոց, մետաքսեղէնի ու բամպակեղէնի գործարաններ, իբր 20,000 տուն ու 80,000 բնակիչ, որ են տաճիկ, հրէայ, հայ, նեստորական ու յակոբիտեան հերետի-

կոսներ : Առուտուրը շատ բանուկ է, մանաւանդ Հին-
տի հետ :

Պաղտատի մօտ Հելլո քաղքին հիւսիսային դին
են հին Բաբելոն քաղքին աւերակները :

Սէրաբի, Պաղտատի փաշային գաւառներուն մէկն
է, որ հին ատենները հայոց ձեռքն էր. ունի համա-
նուն բերդաքաղաք իբր 12,000 բնակիչով, որ են հայ,
տաճիկ, քիւրտ, արապ, քլտանի (տղլաճաւա քաղքէացի),
ասորի՝ կամ յակորիտեան հերետիկոսներ ու շէխէ՝ կամ
արեւապաշտներ :

ՊԱՍՐԱ նահանգը Ափրատէն ու Տիգրիսէն մէկ
եղած գետին, որ կըսվի՝ Շաբ իւլ արապ արեւմտեան
դին է. ունի զանազան գաւառներ, որոնց գլխաւորը
Պասրա՝ ունի համանուն պարսպապատ փաշայանիսա
քաղաք վերը ըսած գետին քովը՝ իբր 80,000 տաճիկ,
արապ ու հերետիկոս քրիստոնեայ բնակիչով : Առու-
տուրը շատ բանուկ է, մանաւանդ արապիստանի ու հին-
տի ապրանքներով :

ՇԱՀՐԱՅՈՒՄ նահանգը տաճիկասիային արեւ-
լեան ծայրն է պարսկի սահմանին վրայ, որ ունի եր-
սունի չափ գաւառներ, որոնց գլխաւորը Շէհրէլուր ու-
նի համանուն քաղաք, որ առաջ շատ մենծ էր, բայց
հիմայ ինկած է :

ԳԼՆԻՆ

ԸՆԴՈՒՄՆԵՐ

Թ. Ընդհանուր, կամ Ընդհանուր, որուն արապները ճիշդից ել շարժ կըսեն, արևելքէն ունի սահման Իրագ արապին, պարսկացին ծոցը ու Որմոսի (կամ Նիլոս) նեղուցը, հիւսիսէն ասորիքը, արևմուտքէն կարմիր ծովը (որ է՝ Սուեյի խառնուրդ) ու Լագիպտոսը, ու հարաւէն Պապիւլմանտէպի նեղուցը ու կիլիսայ 50 ու 78 երկայնութեան ու 11 ու 33 լայնութեան աստիճաններուն մէջը: Իր մեծութիւնը 46,700 քառակուսի մղոն կըսեպփի:

Ք. Երկիրին մեկ քանի դիերը լեռնային են, ուրկան մենծ լեռեր, որոնց մէջը անուանի է Սին Լեռը. բայց մենծ մասը աւազուտ անապատներ են:

Սենծ գետեր չունի. հիւսիսային արևելեան սահմանին վրայ է Եփրատ գետը: Հիւսիսային դիերուն եղանակը շատ տաք է, իսկ հարաւային դին քիչ մը բարեխառն է:

Գետինը ընդհանրապէս բերրի է. ունի հասարակ բերքերէն՝ ի զատ արմախք, բրինձ, ցեղ ցեղ պտուղներ, մանաւանդ խաղող, առատ արմաւ, նուշ ու մաննա՝ կամ գաղպէ. պալսամի ծառ, ընտիր խէժ, շաքարի եղէգ, բամպակ ու խահլէ. խոշոր ու մանր ընտանի ու վայրենի կենդանիներ ու թռչուններ: Ընտանի են իր պարսկաբնիկը, հալուէ, զմուռս, խունկ, հինտի ընկոյզ ու լեղակ (չիլի): Ունի նաև ոսկի, կապար, պղինձ, աղ, աղնիւ քարեր ու մարգրիտ:

Ըս բերքերով արապիստան աղէկ առուտուր կըլլայ, մանաւանդ հոն եկող գացող տաճիկ ուխտաւորներուն պատճառովը, որոնք աւելի առուտուրի ետեւ կըլլան: Նաւահանգիստները առուտուրի նաւեր շատ կուգան:

Գ. Աստեղաց առջի բնակիչները արապներն են, որոնց սկիզբը Այ նահապետին Յեկտան թոռնէն է: Ասոնք հիմայ չորս կարգ կրբաժներովն, այսինքն՝ Պէրուլէ՛ կամ Պէրուլին, որ վրանարնակ են, Սէրի, որ թափառական հովիւներ են, Քիւլուհ, որ երկրագործութիւն կրնն, ու շէրի, որ քաղաքարնակ են. ամէնն ալ մահաճտական աղանդը ունին ու կրխօսին արպեղէն. որ շատ հին ու հարուստ լեզուներուն մէկն է: Սէկալ բնակիչներն են՝ տաճիկ, հայ, հրէայ, թիւրքմէն, պարսիկ, ֆարսի՝ որ են կռապաշտ կամ կրակապաշտ պարսիկ, հապէշ, նեստորական ու ուրիշ հերետիկոս քրիստոնեաներ. նաև պանիստի ըսված կռապաշտ հետաւորներ, որոնք հոստեղաց գլխաւոր վաճառականներն են: Բոլոր աս բնակչաց թիւը 12 միլիոն կրսեպի:

Գ. Արկրին զանազան դիերը զանազան կառավարներ ունին: Արապներուն ամէն մէկ ցեղը իր զատ կառավարը ունի: Ամէնէն հզօր տէրութիւնը Սահապի-նի-րու է, որոնք ունին երկու գլուխ՝ աշխարհական ու հոգևոր: Շատ տեղեր կան իմամներ: Թափառական արապները իրենց զատ էմիրները ունին: Արապիստանի վրայ տաճիկի թագաւորն ալ իշխանութիւն ունի:

Բ. Արապիստան կրբաժներով իրեք մաս, որ են՝ Աստորա արաբի, Արաբաժ արաբի, ու Արքանի՛ արաբի, կամ Արքան:

ԱՆՆՊՈՒՏ ԵՐ ԵՐՈՒՄ, կամ Չիւլ արապիստանը ունի աս մասերը: ա. Աստորա աստորայ, որ է անապատ տեղեր, ուր է անուանի քաղաքը Թափառ, ըստ հնոց փառքի, որ հիմայ շատ անշուք է: Բ. Աստորա էլ ճիւղայ, որ առաջինին արևելեան դին կէնայ, ուր է Աստ քաղաքը Պաղտատի փաշային տակը: Գ. Աստորա էրաբի, որ կիյնայ Արաբա գետին արևմտեան դին: Դ. Աստոր կամ Աստ, որ պարսկային ծոյին արևմտեան դին է, ուր ծովէն շատ մարգրիտ

կըհանվի : Ըստ քաղքըներն են Լահաս՝ Լիթան գե-
տին քովը, ու Հոմեթ :

Ըս գաւառին մէջը կիյնայ Պաւլիէյն ըսված կղզի-
ներուն խումբը պարսկային ծոցին մէջը, որոնցմէ մար-
գրիա կորսացվի : Երենց մէջը մենծը կըսվի Պաւլիէյն,
որուն գլխաւոր քաղաքն է Պէնէյն : Է. Եւճէթ գա-
ւառը վահագլխներուն ձեռքն է, որոնց գլուխ՝ կամ էմի-
րը առ տեղաց գլխաւոր քաղաքը Տէրբէէ, կամ Տրէհէէ
կընստի, ուր կան 20,000 բնակիչ :

ԵՊԸՈՒԸԺ ԵՐԸՆԻԸՆ *) արապտանի պղտիկ՝
բայց գլխաւոր մասն է կարմիր ծովուն քովը, որ հիւ-
սիսէն կերթայ ինչուկ Ըստրիք : Երկիրը քիչ մը լեռ-
նային, քիչ մը անապատ ու քիչ մ'ալ բերրի տեղեր է :
Երկու մաս ունի. Ընապար Սինայ լէրին, ու Հեճաս :

Ընջինին մէջն են Սինա, արպերէն շէպէլ եւ Բօբ
լեռը՝ բարձր ու սրածայր, իր տակը անուանի հոռմի
վանք մը կայ սրբոյն Կատարինէի. թօք, կամ Ել Բօբ
պղտիկ քաղաքը կարմիր ծովուն քովը հոռոմ ու արապ
բնակիչներով ու Ըթթէ նաւահանգիստը կարմիր ծո-
վուն քովը :

Հեճաս, կամ Հըճը գաւառը վահագլխներուն
ձեռքն է, որուն քաղքըներն են՝ Ղէթթէ, իրը 5000 բնա-
կիչով, որ աղէկ առուտուր կընեն. Սէթէ 18,000 (ա-
տեն մը 100,000) բնակիչով, որ աղէկ առուտուր կը-
նեն : Հոս ծնաւ (570ին) Սէհմէտ, ուր ամէն տարի
շատ տաճիկ ուխտաւորներ կուգան. ուր է նաև իրենց
Բեթլէմ, որ քաղքին հրապարակին մէջը պղտիկ տաճար

*) Հոս է Պէտրա, իմ Փէզրա սրտապանի առ մասին
հայրաքաղաքին աւերակները, որուն անուանով առ Գէզը
Փէզրայեան արաբիա ըսվեցաւ, որուն մէն ապէ իբ
լէդոսովը ապառաժ արաբիա իւրէ, զէ Փէզրա, բար
լին շանին :

մըն է : Սիւրբնի քաղաքը իբր 6000 բնակիչով երևելի է տաճկաց մէջը , ուր է Սէհմէտին գերեզմանը :

ԵՐԹՆԻԿ ԵՒ ԵՐԵՎԱՆ , ըստ տաճկաց Երեւան՝ բոլոր արապստանի հարաւային մասն է . տեղ տեղ ունի աւազուտ ու անբեր գետին , բայց իր մէջ տեղերը շատ բերրի են : Գլխաւոր նահանգն է Երեւան , որ Պապէլմանտէպայ նեղուցէն կերթայ ինչուկ ապստափ արաբիա , արևելեան դին ունի շատ լեռեր ու գետեր : Գետինը շատ պտղաբեր է . ունի ցորեն , խաղող , լէւ-
լէւն ու բնտիր խահիլէ : Բոլոր երկիրը իմամի մը տակ է , և ունի իբր իրեք միլիոն բնակիչ :

Սահա , կամ Շահա , Երեւանի մայրաքաղաքն է 20,000 բնակիչով , որոնք աղէկ առուտուր կընեն : Սահա , կամ Սահա , նաւահանգիստ ու պարսպապատ քաղաք է կարմիր ծովուն մօտ . ունի 18,000 արապ , տաճիկ , հրէայ , հապէշ ու հայ բնակիչ : Հայերը ունին եկեղեցի մը : Նաւահանգիստը ամէն դիաց առուտուրի նաւեր կուգան .

Հոս են նաև Երեւան , Սարսափօլ , Շահաբ ու Սահաբ գաւառները , որոնք ունին առուտուրի քաղքրներ :

() Ինն , պարսկային ծոցին մօտ նահանգ է , որուն վրայ կիշխէ իմամ մը , որ շատ հզօր է , շատ զինուոր ու պատերազմի նաւեր ունի , ու կընստի աս տեղաց գլխաւոր քաղաքը Սահաբ , կամ Սահաբ , ուր կան 12,000 բնակիչ ու նաւահանգիստ :

Եսոր տակն է Սահաբ-որս կղզին Պապէլմանտէպայ նեղուցէն դուրս Երեւանէի մօտ , որուն գլխաւոր քաղաքն է (մահաբէն) կամ (մահաբէ-որս) :

ԳՎ: Գ:

ՊԼՐՍԿԵՍՏԵՐՆ՝

Է. Պարսկաստան, որ Պարս, Աճիֆստան ու Ղլլ-
 Կլլ Կալ ալ կըսվի, ունի սահման արևմուտքէն մոս-
 կովի ու տաճկի ասիան, հարաւէն պարսկային ծոցը ու
 հնդկաց ծովը, հիւսիսէն մոսկովի ասիան ու արևելքէն
 քապուլիստանը ու պէլուճիստանը, ու կիյնայ 24 ու 40
 լայնութեան, ու 61 ու 82 երկայնութեան աստիճան-
 ներու մէջ: Իր տարածութիւնը 25,000 քառակուսի
 մղոն կըսեպի:

Ը. Պարսկաստանի երկիրը բարձր դիրք ունի. հիւ-
 սիսային սահմանին վրայ է Արարատ լեռը. երևելի են
 նաև ()րնիդէս, Ալուր ու Տարսաձէնիս լեռերը: Ունի
 մենծ դաշտեր ալ աղով ծածկած:

Սենծ գետերը քիչ են. Արասի գետը հիւսի-
 սային սահմանին վրայ է: Չարհոն՝ կամ Գլէհոն գետն
 ալ մենծ է:

Բարձր տեղերուն եղանակը աղէկ է, բայց ուրիշ
 տեղերը տաք ու չոր օդ ունի:

Գետինը բերրի է. իր բերքերն են ցորեն, գարի,
 բրինձ, տեսակ տեսակ ընդեղէն ու կանանչեղէն, գրե-
 թէ ամէն տեսակ ազնիւ ու հասարակ միրգ, ձիթենի,
 լի-լի-ն, սուսամ, քրքում, մեկոն (խաշխաշ), ուսկից
 Կլլիկի կըշինվի, շաքար, բամպակ, զանազան դեղե-
 րու նիւթեր ու արմատներ, ազնիւ ու հասարակ ծա-
 ուեր, և այլն: Հասարակ ընտանի ու վայրենի կենդա-
 նիները ու թռչունները շատ է, մանաւանդ աղվոր ձի,
 ոչխար ու ուղտ: Հանքերը քիչ են. եղածն ալ աղէկ
 չէ. աղը առատ է. ունի փէրու-վէ, որ է պատուական
 ճիւղակի քար:

Գ. Հոստեղաց գլխաւոր բնակիչներն են պարսի,
 կամ Կալ, կամ Կլլ Կալ աղգը, որ Աղամէն՝ Այ
 նահապետին թոռնէն սերած են, ուստի սուրբ գիրքին

մէջը Էդուարդի ալ կրավին, խորումանկ, գոռոզ, շահախնդիր ու ուսումնասէր են: Իրենց մէջը կըզտնրվին վարպետ ներկարարներ, կաշի շինող, օսկեգործ, ակնագործ (ճէլաշէլաճէ) օսկեթել կերպասներ (տոմաշ), մետաքսեղէն ու բամպակեղէն գործողներ ու ապակի ու հայլի շինողներ: Արխօսին պարսկերէն, որ է հին մայր լեզուներուն մէկը: Տաճկերէն, արաբերէն ու հայերէն ալ կրխօսվն:

Հին պարսիկները կրակը ու արեգակը աստուծոյ տեղ կըպաշտէին, հիմայ մահմէտական են. Սէհմէտին փեսին իմամ Մըլին կըհետեին: Ան կրակապաշտներ ալ, որ կրավին Ֆարսի (կամ Էդրէ ու Էրազը): Մտնցմէ 'ի զատ կան հոս շատ հայ, տաճիկ, թիւրքմէն, քիւրտ, արապ, հնդիկ ու շինկեանէ: Մտնց ամէնուն թիւր ստոյգ չիգիտցըվիր, բայց 10 միլիոնը չանցնիր:

Գ. Մէմի առուտուրը աղէկ է ցամաքէն հինտի, տաճկի ու արապստանի հետ. ծովի առուտուրը հիմակ աղէկ չէ. միայն մոսկովի հետ կըլայ, ու շահը աւելի մոսկովը կընէ: Մուտուրը ընողները աւելի հայերն են, քիչ մըն ալ եւրոպացիները: Մարանքները քիչ մը երկրին բերքերն են. քիչ մ'ալ ուրիշ տեղերէն եկածները:

Ը. Պարսկի կառավարութիւնը բացարձակ ու միապետական է. թագաւորը կրավի շահ, կամ շահնշահ, որուն տէրութիւնը կերթայ զաւկէ զաւակ: Մէն մէկ նահանգի վրայ կայ մենծ իշխան, կամ խան մը իբր թագաւորին տեղակալը: Բոլոր թագաւորութիւնը զանազան նահանգներ կըբաժնըվի:

ԻՐԱՆԻ ԵՆՂՍՒՆԻ նահանգը հին Սէդէայի կամ Սիւրայ մէկ մասն է աճէմի երկրին մէջ տեղը: Հոս է Գէհէրան, կամ Գէհերան պարսկի հիմակման թագաւորանիստ մայրաքաղաքը Ելպուր լեռանց տակը գէրէչ գետին մօտ: Չմեռը ունի իբր 300,000 բնակիչ, իսկ ամառը շատ քիչ, զի օդը գէշ ըլլալուն ամէն մարդ քաղ-

քէն դուրս վրաններու տակ կրբնակի: Վաղքէն մղոն մը հետու թագաւորին ամարանոցը կայ շահրէ: Գալար ըսված:

Սաահան՝ կամ Իսֆիհան, պարսկի հին թագաւորանիստ մայրաքաղաքն էր զէնքէրոս գետին քովը, հիմայ շատ ինկած է, միայն 100,000 բնակիչ ունի:

Սաահան, կամ նոր Սաահան. Սպահանին զիմացը հայոց քաղաքն է, որն որ իրենք շինեցին ու շէնցուցին: Հիմայ ունի 6000 հայ բնակիչ:

Սահահան, ըստ նախնեաց Երեւան, հին ատենները աճէմի թագաւորներուն ամառական բնակելու քաղաքն էր:

Երեւելի են հոս նաև Սահահանի, Վահ, Վաշան ու Վահաշէն քաղաքները:

ԵՏՐՊՈՆԻՆ, ըստ հնոց Երեւանի նահանգը մեծ հայաստանին արեւելեան զին է, որուն մէկ մասը հին հայաստանին քանի մը գաւառներն են, մէկ մասն ալ հին Սարաց երկիրն է ու ատեն մը հայոց տակը եղաւ:

Թիւրքի, ըստ հնոց Վահաշէն, ասնահանգին պարսպապատ մայրաքաղաքն է. յառաջ շատ բնակիչ ունէր, բայց հիմայ 150,000 (ըստ ոմանց 50,000) աճէմ ու հայ բնակիչ ունի, որոնք աղէկ կտաւ ու կերպաս կը գործեն: Երեւանը աղէկ է:

Երեւելի՝ կամ Երեւելի 4000 բնակիչով քաղաք է, ուր հայ ալ կայ:

Խոյ խանութեան վրայ տես մոսկովի հայաստանին մէջը:

ԿԻՎԻՆ, նահանգը կասպից ծովուն հարաւային արեւմտեան զին ու Երեւանի արեւելեան զին է, իր գլխաւոր քաղաքն է Իւշի կասպից ծովէն իրր երկու ժամ հետու, որ ունի 3000 տուն ու մետաքսի գործարաններ: Երեւանը ծաղկած է, որուն համար հայ վաճառականներ կան հոս:

Ինքնուրույն, Պոստին, Լուսինյան ու Լեւոնյանի աս նա-
հանգին մէջը պզտիկ քաղաքներ են:

ՄԱՐԿՆԻՆՍԿԻՆ, կամ Սարգսիսյան նա-
հանգը, որ հին Սարգսիս կամ Լեւոնյան նահանգին մէկ
մասն է, կիլիսայ կասպից ծովուն հարաւային ճօթը,
ունի շատ գետեր: Սարը, Լուսին, Կոստան, Պոստը, և
այլն: Երկիրը բերրի է՝ ունի երկաթի հանք, որ ինչուկ
Պաղտատ, Սոսուլ ու Շամ կրխրկրվին: Լուսուտը
աղէկ է. բնակիչքը իբր 150,000 տուն կըսեպվին:

Գլխաւոր քաղաքը Պոստըն ունի իբր 25,000
բնակիչ, որոնց մէջը հայ ալ կայ:

Լուսուտ, կամ Լուսուտ, մենծ վիճակ է,
որուն բնակչաց շատը, իբր 16,000 տուն, Գաճարէ
ըստած աճէմի ցեղ մըն է, որոնցմէ է հիմակվան պարս-
կի թագաւորին տունը:

Ետը համանուն քաղաքը աղէկ առուտուր կըլայ:

ԹԵՊՐԻՍԿԻՆ (Եղր, Եղր) նահանգը Իրագ
աճէմիին հիւսիսային արևելեան դին ու Սէղէնտէրէ-
նին հարաւային դին է: Իր գլխաւոր քաղաքը Տէմէլան
կամ Տէմէլան շինած է Տէմէվանտ լեռանը տակը, և
ունի 1000 տուն:

ԲՈՒՐՎԻՍԿԻՆ, նահանգը արևմուտքէն սահ-
մանակից է տաճկի ասիային, հիւսիսէն Ետրպէճանին
ու Իւրմիա ծովակին ու արևելքէն Իրագ աճէմիին:
Արևմուտքին դիաց լեռերով պատած է, որ են Տարոս
լեռանց շղթան ու կըսվին Լուսին: Իր բնակչացը շատը
քիւրտ են: Իր գլխաւոր քաղաքը Գարմանշահ շինած է
Գարմ սո գետին քովը, ու ունի 10,000 բնակիչ:

ԽՈՒՃԻՍԿԻՆ, նահանգը արևմուտքէն սահմա-
նակից է տաճկի ասիային մէկ մասին ու հարաւէն
կերթայ ինչուկ պարսկային ծոցը: Իր գլխաւոր քա-
ղաքն է Շուշուր՝ կամ Թոսալէր՝ Գարման գետին քո-
վը, որ ունի իբր 15,000 բնակիչ, որոնք աղէկ առու-

տուր կընեն: Ըսոր արեմտեան զին է հին Շը՝ կամ
Շը՝ շա՞ն քաղքին աւերակները:

ՖԵՐՍԻՍՏԻՆՆԵՆ, կամ Ֆարս նահանգն է բուն
հին պարսկաստանը, որ հարաւէն ու արեմուտքէն սահ-
մանակից է պարսկային ծոցին ու հիւսիսէն Իրազ ածէ-
մին: Իր գլխաւոր քաղաքը Շէրապ հին ու երեւելի
է Բոնոպոպ գետին քովը, որ ունի գործարաններ
ապակիի, զէնքի, մետաքսի, բամպակի, և այլն, ու
52,000 բնակիչ, որոնք աղէկ առուտուր կընեն: Ըսոր
մտտերն է անուանի Պէրսէպոլէս քաղքին աւերակները:

Եւպո ու Եպոնէր՝ կամ Պէնոպէրպոնէր երեւելի
առուտուրի քաղքընեն:

Որնոս, կամ շէրօն, անուանի կղզի է պարս-
կային ծոցին բերանը, որ ունի բերդաքաղաք, ուր աղէկ
առուտուր կը լսայ: Ըս կղզիին անուանովը հնդկային
ծովը պարսկային ծոցին հետ միացընող նեղուցը կըսվի
Որնոնի նեղուց:

ԿԻՍՄՆԵՆ, կամ Վէրնան նահանգը ունի գլխա-
ւոր քաղաք Կրման՝ կամ Սիւրճան ըսված 30,000 ածէմ,
կրակապաշտ պարսիկ, կամ ֆարսի, հայ, հնդիկ ու
հրէայ բնակիչով:

ԻՍՐԱՍՏԻՆՆԵՆ, նահանգը պարսկային ծոցին քովն
է, որ ունի շատ մետաքս: Գլխաւոր քաղաքն է Լսր
(Լսր), ուր կան գործարաններ գորգի, խաբէֆէի, և
այլն, ու 12,000 բնակիչ:

Պէնոպէրպոնոս, կամ Կոնքոն, հիւրմիւսի նեղուցին
քովը առուտուրի քաղաք է աղէկ նաւահանգիստով:

ԻՍՐԱՍՏԻՆՆԵՆ, հին ու անուանի նահանգ է, ու
բուն միայն հիւսիսային մասը հիմնայ ածէմի տակն է, իսկ
մնացած կտորը Վրաստանի մէջը կիյնայ: Իր
գլխաւոր քաղաքն է Սէշապոն՝ կամ Սէշապոն, ըստ
նախնեաց Սէշապոնէ:

Երեւելի է նաև Սէշապոն, կամ Սշապոն քաղաքը
40,000 բնակիչով, որոնք ընտիր խաբէֆէ կը գործեն:

ԳԼ Գ.

ՊԵՂՈՒՆՆԵՐԻՆ

Թ. Ըստ տեղի առաջ աշխարհագիրները պարսկի երկրին հետ մեկ կրդնեին, բայց զատ տերութիւն է. արեւմուտքէն ունի սահման պարսկաստանը, հարաւէն հնդկաց ծովը, արեւելքէն հնդաստանը ու հիւսիսէն քապուխտանը, ու կիյնայ 76 ու 90 երկայնութեան՝ ու 24 ու 31 լայնութեան աստիճաններու մէջը: Իր ընդարձակութիւնը 9554. քառակուսի մղոն կրսեպիլ:

Բ. Երկրին մենծ մասը լեռնային է: Սենծ մենծ անապատներ ալ ունի, ինչպէս՝ Պէլուճիստանի անապատը, ու Պոնդուրի անապատը:

Իր մէջ տեղերը մենծ գետեր չունի. Ինդոս՝ կամ Սինդ գետը հարաւային դիէն կանցնի:

Եղանակը բարեխառն է. անապատ տեղերը սաստիկ տաք կը լայ:

Տղու եղած տեղերը գետինը աղէկ պտղատու է:

Գ. Հոստեղաց բուն բնակիչքը երկու ցեղ կը բաժնըվին, սյոինքն՝ Պէլուճի ու պրահ, որոնց շատը թափառական են. Սէհմէտի աղանդը ունին աճէմներուն նման: Պէլուճիներուն լեզուն աճէմի լեզուն է, իսկ պրահները զատ լեզու ունին: Կան պարսիկ, հնդիկ, նաև մեր ազգէն ալ: Ըմէնուն մէկանց թիւը իր իրեք միլիոն կրսեպիլ, որոնց վրայ թէպէտ ընդհանուր իշխան՝ կամ մենծ իսն մը կայ, բայց ամէն մեկ ցեղ իր զատ գլուխը ունի:

Դ. Պէլուճիստանը երկու կրբաժնըվի՝ Պէլուճիստան խանուսը, ու Սընդ գաւառ:

ՊԵՂՈՒՆՆԵՐԻՆ, նահանգը ունի աս գաւառները. Սարաւան, Լոս, Գոս խանութան, Հորբոնիստան, Բահիստան, Իհալուան, ու Սըբրան:

Սարգսի գաւառին մայրաքաղաքն է Վիլնէ՛ կամ
Խելնէ՛, որ ունի 20,000 բնակիչ, որոնք աղէկ առու-
տուր կրնեն: Հոս կրնասի խանը:

Սըբրան՝ կամ Սըբրան գաւառին գլխաւոր քաղաքն
է Գիւլէ՛ 3000 տուն բնակիչով: Ես գաւառին մէջն է
պէլուծիստանի անապատը:

Սիւնճ նահանգը՝ կամ գաւառը, որ Գապրա՛ ալ
կրսովի՛ յատկապէս հնդոստանի մէջն է Ինդոս գետին հընդ-
կային ծովը մտնելու տեղը: Բնակիչքը քիչ մը հնդիկ
են՝ քիչ մ՛ ալ թափառական վայրենի, մէկանց իբր
մէկ միլիոն: Ես տեղս պէլուծիներուն գալէ՛սը՛նց ցեղին
Ուիլիսը՛ բոված ձիւղը կրկառաւարէ:

Հէյպէրոպապ, հիմակվան հոստեղաց բերդաւոր
մայրաքաղաքն է Ինդոս գետին մէկ կողմին վրայ 15,000
բնակիչով:

Գապրա՛ կամ Սընդ, հոստեղաց հին մայրաքա-
ղաքն է 20,000 բնակիչով, որոնք աղէկ առուտուր կը-
նեն: Գապրա՛ձէ՛ հնդկաց ծովուն քովը առուտուրի քա-
ղաք ու նաւահանգիստ է:

ԳԼԵԿ.

ՎԵՊՈՒԼԻՍՏԵՆ:

III. Ես տէրութիւնը շատ ատեն չէ պարսկաստա-
նէն բաժնըվեցաւ. իր սահմաններն են՝ հարաւէն պէ-
լուծիստանը ու հինտիստանը, արևելքէն չինը ու հին-
տիստանը, հիւսիսէն թաթարստանը ու չինը ու արև-
մուտքէն պարսկաստանը, ու կկյնայ 27 ու 37 հիւսի-
սային լայնութեան ու 76 ու 94 երկայնութեան աստի-
ճաններու մէջը: Իր ընդարձակութիւնը 16,540 քառա-
կուսի մղոն կրսեպով:

Է. Երկիրը աւելի լեռնային է քան թէ շիտակ,
հիւսիսային դին են Հիմալէ՛ կամ Իմալա՛ս լեռերը, դէպ

Դի արևմուտք կերթայ Հինգուստոս լեռը, դարձեալ լէրինս՝ Սողոմոնի ու ճէրմաի լէաւը:

Սենձ գետերը քիչ են. Սինդ՝ կամ Ինդոս իր մէջէն կանցնի: Վաղուս ու Վէնասպ ալ իր մենձ գետերն են: Երևելի է իր Օպրէհ լիճը:

Եղանակը ընդհանրապէս տաք է:

Վետինին մենձ մասը աղէկ պտղաբեր է. ունի արմաիք, բրինձ, մարիցորեն, առատ միրգ, կանանչեղէն, շաքար, սուսամ, արմաւ, Լի-Լի-ն, մետաքս, բամբակ, լեղակ (չէ՛վէր), առատ աղ ու ուրիշ հանքեր ու հասարակ կենդանիներ:

Գ. Հոստեղաց բնակչաց թիւը ինչուկ 12 միլիոն կրսեպիլի, որ են աղուանք, տաճիկ, հնդիկ ու թաթար: Եղուանք՝ կամ Եղլիանները պինտ առջի ու գլխաւոր բնակիչքն են, անոր համար քապուլիստանը կրսվի նաև աղուանք՝ կամ աղլանիստան (զատ մէկալ աղուանքէն որ հիմայ կրսվի (Շէրլան): Եղուանները կոպկասու լերանց, ըստ ոմանց՝ հայաստանէն հոս եկած են: Ունին զատ լեղու, աղանդնին մահմէտական է պարսիկներու նման: Եղէկ երկրագործութիւն կրնեն. ունին քանի մը արհեստներ ալ: Եռուտուրնին աճէմի, հինտի ու թաթարստանի հետ է: Իրենք զանազան ցեղեր բաժնած են, ու ամէն մէկ ցեղ իր զատ գլուխը՝ կամ իշխանը ունի, ու ամէնը մէկանց ընդհանուր իշխանի մը տակ են, որ կրսվի՝ քապուլիստանի շահ՝ կամ խան:

Գ. Բոլոր երկիրը վեց նահանգ բաժնած է, որոնք մէկանց քսանըվեց գաւառ ունին:

ՎԵՐՊՈՒՎՍՏԵՆ ՍԵՄԵՆՏՈՐ, առջի նահանգն է, որ ունի աս գաւառները, Վաղուս, Լաղման, Զօլ, Հալաբէ, Վաղմա, Սէլէ, Շէրաբէոս, Պոսրթահ կամ Պարթոս, Շէլուպոս, Փիշոր ու Խանդահառ:

Վաղուս գաւառը ունի համանուն գլխաւոր բերդաքաղաք Բաղուս գետին քովը, որ է Վապուլիստանի

մայրաքաղաքը 80,000 բնակիչով, որոնք աղէկ առուտուր կընեն :

Խոնհոտհոտ գաւառը ունի անուանակից գլխաւոր քաղաք 100,000 բնակիչով, որ ատեն մը աղուանենբուն մայրաքաղաքն էր : Իր մենծ առուտորին պատճառովը կան հոս շատ հետստանցիներ, թաթարներ ու հայեր :

ՍԻՍՎԻԼ՝Ս, կամ Սիվիսիոն նահանգը ունի գլխաւոր քաղաք Տիլլուտոպո՝ կամ Տուշո՝ ըսված 2000 տուն բնակիչով :

ԻԼՆԻՆ, կամ Իւնի (ըստ հնոց՝ Իւիպրիո) նահանգը առաջ Պուխարային մէկ մասն էր. իր բնակիչքն են ուղղէ՝ ազգէն : Իր գլխաւոր քաղաքը Իւնի հիմայ անշուք է, ըսյց բնակիչքը աղէկ առուտուր կընեն :

ԽՈՐԷՍՆ՝Ս, նահանգին միայն հարաւային արևելեան մասը, կամ Նիւրի, Սիւհոտոն ու Պախան գաւառները քաղաքիստանի մէջը կկնան : Իր գլխաւոր քաղաքն է Նիւրի՝ կամ Իւրի համանուն գաւառին մէջը, որ ունի զանազան գործարաններ բամպակի, մետաքսի, գորգի, կաշիի, շուէ, և այլն, ու 100,000 բնակիչ, որոնք աղէկ առուտուր կընեն :

ՎԵՆԵՍՆ՝Ս նահանգը հինտիստանին հիւսիսային գին է, որուն բնակիչքը շատ վարդի եղ կըհանեն ու ընտիր շու կըգործեն : Իր գլխաւոր քաղաքը Վուսի կամ Վիշի (նաև՝ Սիւիսիոն կամ Շիսիլի), ունի 200,000 բնակիչ, որոնց մէջը արհեստները ու առուտուրը շատ ծաղկած է : Շուէ համար 16,000 գործարան (Էլիլիս) կայ : Իուրդը Գիպէթէն կուգայ :

ՍՄԻԼԻՎԻՆ՝Ս, նահանգը հինտիստանէն առնրված է. որուն համանուն պարսպապատ բերդաքաղաքը ունի գործարաններ մետաքսի, գորգի ու շիլի, ու 30,000 բնակիչ :

ԹՎԹՎՐՍՏԵՆՆԵՐ

Թ. ԹՎՐՍՏԵՆՆԵՐ՝ կամ ուրիշ ԹՎՐՍՏԵՆՆԵՐ՝ ունի սահման արևելքէն չինը, հարաւէն Ղաթաղէթը, հինարը, պէլուճիստանը ու պարսկաստանը, արևմուտքէն կասպից ծովը, ու հիւսիսէն մոսկովի ասիան. ու կիցնայ 67 ու 91 երկայնութեան ու 36 ու 52 լայնութեան աստիճաններու մէջը: Իր ընդարձակութիւնը 32,000 քառակուսի մղոն կըսեպի:

Բ. Երկիրը բարձր ու լեռնային է. հարաւային դիերն է Պէլուստի Կարաբաղը, որ է Սոսի Կարաբաղի մէկ մասը. բարձր են նաև Փամբուր ու Հիւսիսային լեռերը: Հիւսիսային ու արևմտեան դիերը ընդարձակ անապատներ են:

Իր ջրերն են Կասպից ծովէն ու Երազայ լէճէն 'ի զատ ջրհոսն՝ կամ Սիւնիսն՝ նաև Ղաթաղալուս (Լճոս) Կարաբաղ (Սոսի) գետերը, որոնք Երազայ լիճը կըմանեն:

Երկրին մեծութեանը պատճառով եղանակը միօրինակ չէ, տեղ տեղ չափաւոր տաք է:

Վետինին հիւսիսային դիերը անբեր են, իսկ հարաւային դիերը աղէկ բերրի են: Վախաւոր բերքերն են արմախք, բրինձ, գինի, սուսամ, քրքում, մէկոն (Խաչիւր), որ ափիոնի համար կըգործածվի, լիւսիւս, միրգ, ընդեղէն, բամբակ, բամպակ, մետաքս, զանազան հանքեր, ոսկի, արծաթ, աղ, ընտանի ու վայրենի կենդանիներ ու թռչուններ:

Գ. Հոստեղաց առջի բնակիչքն են Լաւաբիւրը, որոնք Սագոգէն Ղոյ նահապետին հարէթ որդւոյն ցեղէն յառաջ եկած են, ծուլ, բարբարոս ու պատերազմասէր մարդիկ են: Օսնաղան ցեղեր բաժնած են, որոնք կէս մը թափառական են, ու կէս մը քաղաքաբնակ:

Լեզունին տաճկի լեզունն նման է : Ոմանք ՍԿՏ-մէտի աղանդը ունին , ոմանք ալ կապալաշտ են , Գիւպէթի Լ^{ու} չաստուածը կրպաշտեն :

Ս'նացած բնակիչքն են պարսիկ, հնդիկ, հրէայ, չինկեանէ, թիւրքմէն ու պուխարացի . մէկանց իբր հինգ միլիոն : Պուխարացիները հոստեղաց արհեստները կը բանեցընեն, աղէկ բամպակեղէն ու մետաքսեղէն կը գործեն ու կընրկեն . բարակ թուղթ, երկաթէ, պղինձէ ու արծաթէ ամաններ , ու զէնք կը շինեն : Ըս գործուածքներով ու երկրին քանի մը բերքերովը հոս առուտուր կը լայ մոսկովի , չինի ու հինաի հետ , որ հայերը ու պուխարացիները կընեն :

Գ. Թաթարստան տեղ տեղ սուլթանի տակ է , տեղ տեղ ալ խաներու տակ . թափառական թաթարները կը կառավարվին իրենց ծերերէն :

Ի՞նչը երկիրը կը բաժնրվի հինգ նահանգ , որ են՝ Կիլիկիա , Թուրքաստան , Գորիսնի՝ կամ Խորասըն և կամ Գորիսիլէ , Կիլիկիա , ու Լոպտէս՝ կամ Տեթ Պուխարս :

ԿԻՎՄՆ նահանգը ունի իբր 300,000 բնակիչ , որոնց մէջը կան պուխարացիներ , գորսգորսէս ըսված ցեղէն՝ որ թափառական են , թիւրքմէն ու էօզպէք , որոնք մէկ խանի տակ են : Իր համանուն գլխաւոր քաղաքը ունի իբր 3000 աղիւսաչէն տներ ու 10,000 բնակիչ :

ԹՈՒՐԿԱՍՏԱՆ նահանգը տաճկաց հայրենիքն է , որուն գլխաւոր քաղաքը Թուրքանոյ՝ կամ Թուշկէնի՝ ունի զանազան գործարաններ , 10,000 տուն ու 40,000 բնակիչ , որոնք աղէկ առուտուր կընեն :

ԳՈՐԿԱՆԿ կամ Խորասըն նահանգը՝ որ առաջ Ֆելթանոս կըսվէր՝ ինքնազուլա խանի մը տակ է . իր բնակիչքն են էօզպէք , պուխարացի , թիւրքմէն , գիրկիդ , կամ ճիրճիդ , որ թափառական են ու հրէայ : Իր գլխաւոր քաղաքը Գորիսնի՝ կամ Գորիսիլէ՝ մարգաշատ է , ունի շատ գործարաններ ու աղէկ առուտուր կընէ :

ԳՒԻԲԿԻՕ, նահանգը Արալ լիճին հիսիսային ու արևելեան գիերն է. իր բնակիչքն են թափառական գիրկիչներ զանազան օրթաներ կամ ժողովուրդներ բաժնած, մեծ օրթաները զատ խանի մը տակ են, իսկ ստորին օրթաները մոսկովի պաշտպանութեան տակն են :

ԼՅՕՕՊԻՎ, կամ ՍՆՆՕ ՊՈՒԽԵՐՆ նահանգը թուրքաստանի, քապուլի, դիպեթի ու մղուլի մէջ տեղն է. ունի իբր երկուք ու կէս միլիոն բնակիչ, որ են էօզպէք, թաթար, պուխարացի, թիւրքմէն, աճէմ, արապ, զալմուխ, հրէայ, ապազա ու չինկեանէ, որոնց ամէնուն վրայ կիշխէ խան մը : Իր մէնծ քաղքը ներուն մէջը երևելի է Պուխարա, որ ունի 14 իջևան (խան), 360 մղկիթ ու իբր 200,000 (ըստ ոմանց միայն 70,000) բնակիչ : Աս տեղս է միջին ասիայի պինտ մէնծ ու անուանի առուտուրի քաղաքը :

Արևելի առուտուրի քաղաք է նաև Սամարխանդ (Վիհան գետին քովը 150,000 բնակիչով *) :

*) Աս քաղաքը երբեք ազադ իտին ճանաչուի լաւարարան էլ մէջն, ինչու որ իան լաւարարանն որիչ հասէր ալ, ինչպէս Խրէմ, Աթալերխան, Սելեբրէա ու Խապան, որոնք հինայ մոսկովի քովն են : Այս նախ չինի լաւարարան : Պար Պուխարան ու Վիպէլնն ալ, որ ոմանք լաւարարանն հէր ճաջած իւրննն, հինայ չինի քաղաքներն քովն է :

ԳԼ Է .

ՀՆԳԿԵԾՏԵՆ :

Ա. Աս մենձ երկիրը ըսվեցաւ Հնդկաստան, Հնդկաստան, Հնդկի, կամ Հնդկ՝ իր Ինդոս՝ կամ Հնդոս մենձ գետէն : Հիմայ Սըուլ, կամ Սըուլ ալ կըսվի : Արևելքէն ունի սահման չինը ու պէնկալայի ծոցը, հարաւէն հնդկաց ծովը, արևմուտքէն արաբիոյ ծովը ու հիւսիսէն Գիպէթը ու մեծ Պուխարան . ու կկոնայ 1 ու 32 հիւսիսային լայնութեան ու 84 ու 127 երկայնութեան աստիճաններուն մէջը : Իր բոլոր տարածութիւնը 110,000 քառակուսի մղոն կըսեպվի :

Բ. Հինտի երկիրը շատ մենձ լեռեր ունի հնդկաց Էրիմի, ըսված, որոնց մէջը պինտ բարձրն է Հիմալէ՝ ըստ հնոց Ինոոսս լեռը :

Ասոնցմէ շատ մենձ գետեր կըբխեն, որոնց մէջը անուանի են Ինդոս՝ կամ Հնդկի՝ նաև Սինդ, որ հիւսիսին դիաց կուգայ ու հնդկաց ծովը կըթափի, Գանգէս՝ կամ Կընի, որ 300 մղոն տեղ քալելէն ետքը պէնկալայի ծովը կըթափի, ու Պոտոմոլոսլէր՝ կամ Պոտոմոլոսլի, որ ասիայի խիստ մենձ գետերուն մէկն է ու պէնկալայի ծոցը կըմտնէ :

Աղանակը ընդհանրապէս առողջ է, հիւսիսային դիերուն օդը բարեխառն է, իսկ հարաւային դիերունը սաստիկ տաք : Աստեղաց ձմեռը ուրիշ բան չէ՝ թէ չէ քանի մը ամիս անձրևներ :

Գետինը՝ քանի մը անապատ տեղերէն ՚ի զատ՝ շատ բերրի է . իր բերքերը անբաւ անթուելի են : Ասարակ բոյսերէն ու կենդանիներէն ՚ի զատ ունի առատ բրինձ, շաքար, պղպեղ, կոճապղպեղ, կասիա, մեկոն, խաշնդեղ, սուսամ, բամպակ, լեղակ, բրբուճ, ապա-

նող, քօքօի ծառ, խունկ, հալուէ, ուէտին, հինտի ընկոյզ, խէժ (զածի), մետաքս, հասարակ հանքեր, առատ ոսկի, ազնիւ քարեր ու մարգարիտ: Ղարձեալ՝ փիղ, ընկեղջիւր, միսքի կատու, զանազան տեսակ կապիկներ, կոկորդիլոս, սիրամարդ, փասիան, քառսուն տեսակէն աւելի թուժակ, և այլն:

Գ. Բնակիչքն են շվէտ ու նորվէգիացի, որոնք նեմցէներէն առաջ եկած են, ըստ մեծի մասին գեղին մազ ու կապուտ աչք ունին, ու ժիր, սրտոտ ու համեստ են. լեզունին նեմցէերէնի նման է, ու կրօնքնին լուտերական աղանդն է: Հիւսիսային բնակիչքն են լարոնիացիներ, որոնք թափառական են, թէպէտ քրիստոնեայ եղած են, բայց գրեթէ հեթանոսի պէս կապրին: Արհեստները շատ ծաղկած չեն, երկաթագործ ու երկաթի հանք հանող շատ կայ: Առուտուրը երևելի է, որ կը լայ ինչուկ տաճկաստանի ու արևելեան հատուտանի հետ: Բոլոր բնակչաց թիւը 3,900,000 է, որոնց վրայ կը տիրէ լուտերական թագաւոր մը, որուն իշխանութիւնը ազգային ժողովով (որուն անդամներն են աղնուականներուն, եկեղեցականներուն, քաղաքացիներուն ու գեղացիներուն երեսփոխանները) շատ չափաւորած է, ու ժառանգութեամբ կերթայ մինակ մանչ զաւկրներուն մէջը: Աորվէգիայի մէջ ունի իր փոխարքան:

Գ. Բոլոր տէրութիւնը երկու մենծ մաս՝ կամ թագաւորութիւն կը բաժնըվի, որ են Շվեդ ու Նորվէգիա:

Ե. Շվեդի թագաւորութիւնը ունի 7912 քառակուսի մղոն երկիր, 2,848,100 բնակիչ, ու չորս նահանգ որ են՝ Բոտնի Շվեդ, Կոփլանդիա, Սոդերլանդիա, ու Լափլանդիա, որոնց մէջը կան 88 քաղաք, 11 աւան ու 65,284 գեղ՝ կամ կալուած:

Բոտնի Շվեդի ունի հինգ զաւառ, որ են Ուփլանդիա, Սելանդիա, Եստրալանդիա, Վեստերբոտնիա ու Տալլարնէ՝ կամ թալլանդիա: Առջինին մէջն է Շտոկհոլմ, տէրութեան թագաւորանիստ մայրաքաղաքը քանի մը կղզիներու ու թերակղզիներու վրայ պալղիկ ծովուն մէկ ծոցին քովը շինած, որուն զանազան մասերը կամուրջներով իրարու հետ միացած են. ունի

բերդ մը, 2 նաւահանգիստ, 22 եկեղեցի, ուսումնարաններ, կրթարաններ ու օգտակար տեղեր, 2 թէատրոն, գործարաններ չուխայի, կտաւի, շալէի, բիւրի-նի, շաքարի, և այլն, նաւարան, զինարան, 6000 տուն ու 79,500 բնակիչ, որոնք աղէկ առուտուր կընեն 195 նաւով :

Ուսումնարաններ, երևելի քաղաք է, ուր կայ անուանի համալսարան մը ուրիշ ուսումնարաններ, և այլն : Հոս կընստի տէրութեան լուսերական առաջնորդը : Իր մայր եկեղեցւոյն մէջը շվետի թագաւորները թագ կըզնեն :

Սեփեթի քաղաքը ունի մենծ հիւանդանոց մը ու քանի մը գործարաններ :

Սեփեթի քաղաքը ունի նաւարան, ուր և աղէկ առուտուր կը լսայ :

Սեփեթի քաղաքը ունի գործարաններ ու իր բնակիչքը մօտիկ երկաթի հանքերը կը գործեն :

Սեփեթի քաղաքը ունի գործարաններ ու իր բնակիչքը մօտիկ երկաթի հանքերը կը գործեն : Սեփեթի քաղաքը ունի մենծ հիւանդանոց մը ու քանի մը գործարաններ :

Սեփեթի քաղաքը ունի մենծ հիւանդանոց մը ու քանի մը գործարաններ :

Սեփեթի քաղաքը ունի մենծ հիւանդանոց մը ու քանի մը գործարաններ :

Սեփեթի քաղաքը ունի մենծ հիւանդանոց մը ու քանի մը գործարաններ :

ԼԷՆԻՆՆԵՐԻՆ, կամ Վարոնիա՝ Վերոպայի ետքի հիւսիսային ծայրն է, որուն մէկ մասը նորվէկիայի, մէկ մասը շվէտի, ու մէկ մասն ալ մոսկովի մէջ է: Ը վէտի մասը ունի իբր 2000 քառակուսի մղոն ցուրտ, լեռնային ու անբեր երկիր, ուր կան 3900 լարոնացի, որոնք իրենց կենդանիներովը, այսինքն վիրը յիշված եղջերուի նման չորքոտանիներով թափառական կրպտրտին, որսորդութիւն՝ ու քիչ մ'ալ երկրագործութիւն կրնեն: Ըսոնցմէ 'ի զատ կան 7500 օտարականներ, որոնք զանազան գեղերու մէջ կրենակին, զի քաղաք՝ կամ աւան չիկայ հոս:

Բ. ՆՈՐՎԵԳԻԱ թագաւորութիւնը շվէտի արեւմտեան ու հիւսիսային դին կիյնայ, և ունի 5684 քառակուսի մղոն երկիր, 1,510,300 բնակիչ ու հինգ գաւառ, որ են՝ Վրէստիանո, Վրէստիանսան, Պլեմլէն, Տոնդհայմ, ու Նորդլանդիա, որոնց մէջը կան 23 քաղաք, 26 աւան ու շատ գեղեր:

Ընջի գաւառին մէջն է Վրէստիանո՝ նորվէկիայի մայրաքաղաքը ծովածոցի մը քով, որ ունի չորս արուարձան, նաւահանգիստ մը, համալսարան մը, ուրիշ ուսումնարաններ, աղքատանոցներ, որբանոցներ, գործարաններ չուխայի, կտաւի, սեկի, երկաթի, և այլն, ու 20,600 բնակիչ, որոնք աղէկ առուտուր կրնեն տախտակով, երկաթով, և այլն:

Վրէստիանսան, համանուն գաւառին գլխաւոր քաղաքն է, որ ունի երկու բերդով նաւահանգիստ, ու իր բնակիչքը փայտով առուտուր կրնեն:

Պլեմլէն, համանուն գաւառին գլխաւոր քաղաքը ու Նորվէկիայի պինտ մենծ ու առջի առուտուրի տեղն է ծովու քով աղէկ նաւահանգիստով մը ու 19,550 բնակիչով:

Տոնդհայմ, համանուն գաւառին առջի քաղաքն է 11,640 բնակիչով, որոնք աղէկ առուտուր կրնեն պղինձով, երկաթով ու փայտով:

Նօռլանդիա գաւառին քովերը կան շատ կղզիներ, որոնց մէջը երևելի է Սօսէօն:

Նորվեյիոյն Լաբնէան ըստ աւելի մասին հիւսիսային բևեռային շրջանակին տակն է, ուր կան իբր 3006 լարոնացի, ու քիչ մ'ալ ֆինլանդացիներ: Ըսոր մէկ մասը բուն ցամաքի կտորն է, մէկ մասն ալ զանազան կղզիներ են. ինչպէս՝ Գաօֆլէօն, Գաւալէօն, Սոնէօն, և այլն, ուր է Գլոն հէսիոյ (Նորպեթ) հրուանդանը, որ Լարոպայի ետքի հիւսիսային ծայրն է: Ըսոնց վրայ քանի մը քաղքերներ կան քիչ բնակիչներով:

Շվետը Լարոպայէն դուրս ունի միայն Լմերիգայի, կամ արևմտեան հետտտանի մէջ Սոթէ Բարբոռէօն կղզին 18,000 բնակիչով:

ԳԼ ԺԹ.

ՄՈՍԿՈՎԻ ԵՒ ՐՈՊԸ:

iii. Բոլոր մոսկովի երկիրը Լարոպայի, Մսիայի ու Լմերիգայի մէջը ընդհանուր երկրի մարդարնակ մասերուն ինը մասին մէկն է. ու բոլոր Լարոպայէն՝ երկու անգամէն աւելի մենծ է. բայց հիւսիսային դիերը եղանակին ցրտութեանը համար քիչ գործըված է ու քիչ բնակիչ ունի: Մոսկովի Մսիային վրայ տես Մսիայի մէջը: Մոսկովի Լարոպան, կամ Էրոպէան Մոսկովէսիոն՝ որ և Ուսսիա կըսվի ունի սահման արևմուտքէն նորվեկիան, շվետը, պոդնեան ծովածոցը, պալդիկ ծովը. պոուշի ու աւստրիայի երկիրը ու տաճկի պուղտանը, հարաւէն կալիցիան, պուղտանը, Գանուր գետը, սև ծովը, աղախու ծովը, ու Տօն գետը, արևմուտքէն Ուրալ՝ կամ Հիբերպորէաս լեռները, կամ մոսկովի ասիան ու հիւսիսէն սառուցեալ ծովը ու կիլնայ 35 ու 83 արևելեան երկայնութեան ու 49 ու կէս ու

72 Հիւսիսային լայնութեան աստիճաններուն մէջը : Սոսկովի Եւրոպային ընդարձակութիւնը (լեհի երկիրով մէկտեղ) 74,700 քառակուսի մղոն է :

Է. Երկրին մենձ մասը շիտակ ու լայնածաւալ դաշտեր է, Հիւսիսային ու լարլանդիայի դիերը ցած լեռներ ունի : Գլխաւոր լեռանց գօտիներն են Հիւսիսային, կամ Իսկոնդէ լեռանդիայի լեռաները, որոնք շվետէն հոս կուգան . Սլաւոնի՛ ըստ հնոց Լեռանի լեռաները . Գալիէոս լեռանց մէկ մասը լեհի երկրին մէջը . Տարիկէան լեռաները Խորմի մէջը . Ռոսալ՛ ըստ հնոց Ռիկէան՛ կամ շվեդիոսիան լեռները Եւրոպայի ու Ասիայի մէջ տեղը : Կան ուրիշ լեռեր ալ :

Հիւսիսային սառնապատ ծովէն ու իր մենձ ծովա-ծոցերէն ՚ի զատ, որոնց մէկն է Սպիտի ծովը, ունի մոսկովը Եւրոպայի մէջ շատ մենձ գետեր, որ են՝ Տիկէնա, Օնիկոս, ու Սիւլէն, որոնք հոստեղս կրբխեն ու սպիտակ ծովը կրմտնեն . Բելչոս, Օպէ, որ Սիպիրի պինտ մենձ գետն է, 450 մղոն տեղ կը քալէ . Ելէնիսիէ, հին աշխարհին պինտ մենձ գետերուն մէկն է . Լէնա, որ թաթարստան կրբխէ . Ինդիկէրգոս ու Գոլէնա, որոնք Հիւսիսային սառնապատ ծովը կրմտնեն . Գոսպան, Տոն կամ Տոնա-ն (Թիւն), որ Եւրոպայի ու Ասիայի մէջ տեղն է, 200 մղոն տեղ կը քալէ ու ազախու ծովը կրմտնէ . Տիկէի (Բելչոս սոնի), որ 220 մղոն տեղ կը քալէ . Տիկի (Թոս-լա) ու Գոսոս-թ, որոնք սև ծովը կրմտնեն . Սլաւոն-լա (Սլայսիլ), Սիկի, Տիւնա, Սիլոս ու Գոսիլոս, որոնք պարզիկ ծովը կրմտնեն . Սլոլոս, որ Եւրոպայի պինտ մենձ գետն է ու կասպից ծովը կրմտնէ : Ունի շատ լիճեր ալ, ինչպէս Լապոն, որ Եւրոպայի պինտ մենձ լիճն է, Օնիկոս, որ Սիլոս գետով Լատուկային հետ միացած է . Իլիւն, Բայլոս-լ, և այլն : Զքանցներ ալ կան :

Երկրին ընդարձակութեանը ու զանազան մասերուն պատճառով իր եղանակն ալ զանազան՝ բայց ամէն

գի մաքուր ու առողջ է: Հիւսիսային գիերուն եղանակը սաստիկ ցուրտ ու սուր է. իր ետքի ծայրերը պինտ երկայն օրը երկու ամիս կը բշէ. ուր բոյսեր ու հասարակ կենդանիներ չեն ըլլար: Հարաւային գիերուն եղանակը տաք է ու ամառը երկայն: Իսկ մէջ տեղի երկիրներուն եղանակը բարեխառն է:

Վետինին մէջ տեղերուն մենձ մասը՝ նաև քանի մը հիւսիսային տեղերն ալ բերրի են: Իսկ ետքի հիւսիսային ծայրերը բոլորովին անբեր ու մշակելու անյարմար են: Հարաւային գիերը պտղաբեր գետին ունին: Իր բերքերն են՝ արմտիք, կորեկ, ընդեղէն, կանանչեղէն գետնիխնձոր, սուսամ, ուսկից համեղ եղ կը հանովի, զանազան միրգ, հարաւային գիերը գեղձ, ծիրան, սեխ, թուժ, թուզ, նուռ, նուշ, ձիթենի, շագանակ ու գինի, մեկոն, Լի-Լի-ն, բամբակ, շատ քթան, կանեփ, խաշնդեղ, հիւսիսային գիերը առատ փայտ: Վարձեալ՝ շատ արջառ ու ոչխար, աղէկ ձի, էշ, ջորի, քիչ տեղ ուղտ, այծ, խոզ, ընտանի ու վայրենի թռչուններ՝ կամ հաւեր, զանազան վայրի կենդանիներ՝ մանաւանդ մուշտակի համար, բեռնակիր շուն, առատ մեղու, անբաւ ձուկ, որ տարին 15 միլիոն ուսպի շահ կը բերէ: Հանքերը շատ առատ են. ունի շատ ոսկի (իրեն չափ շատ ոսկիի հանք ունեցող տէրութիւն մը չիկայ), արծաթ, պղինձ, կապար, երկաթ, կլայեկ, մէրմէր ու զանազան տեսակ հասարակ քարեր, նաև աղնիւ քարեր, ալապասդր, շատ ծծումբ, աղ, պաղլեղ, արջասպ, աղբորակ, նաւթ, յախճապակիի ու ուրիշ հանքային հողեր ու ջրեր, և այլն:

Գ. Մտեղաց բնակչաց թիւը 45,400,000 կը սեպովի, բայց ամէն տարի ալ կաւելնայ, զի նոր ծնածներուն թիւը մեռածներէն միշտ աւելի է. բայց երկրին ընդարձակութեանը նայելով ասչափ բնակիչը շատ քիչ է: Սոսկովի Մսիային ու Լարոպային մէջը կան 100 ազգիրը 40 տեսակ լեզուով: Լարոպայի գլխաւոր ազգն է

հոսիով՝ կամ «...», որոնք սլավոններէն առաջ եկած են, լեզուին ալ սլավոնի լեզուն մէկ տեսակն է, ու կրօնքինն հերձուածող հոռմի գաւանանքն է, որ է բոլոր երկրին տիրող կրօնքը: Ըստնցմէ ետքն են լեզուանցիները, լեզուները ու «...»-ները, որոնք ուղղափառ են ու զատ լեզուներ ունին սլավոններէնէն ելած. դարձեալ խաչակիները, որոնք պատերազմող ազգ են, ձիով կրպարտարին. լատինացիները, ֆինլանդիացիները, որոնք ֆիննեան ու պոզնեան ծոցերուն մէջի երկիրը կրքնակին. հայ ալ շատ կայ՝ իբր 380,000, բայց աւելի մոսկովի Ըսիային մէջը, որոնք երկրին զանազան դիերը քանի մը գեղերու կամ կալուածքներու տէր են. Գլխավորապէս Պէսսարապիայի մէջ, շատ լաւաւ՝ խրիմի ցամաքակղզին ու ուրիշ տեղեր. նեմցէ՝ պալդիկ ծովուն քովը. կան նաև Փռանսրզ, հոռոմ, շվէտ, հրէայ, ու ասդին անդին ուրիշ ազգեր:

Սենձ Պետրոսի աստեղաց կայսեր ատենէն սկսան արհեստներ ու գիտութիւններ մոսկովի մէջ մտնել, ու երկրորդ Ատտարինէի կայսրուհին ատենէն սկսան ծաղկիլ ու օրէ օր կրճաղկին: Աշխի գործարաններ շատ են և իրենց կաշիին նման ուրիշ տեղ մը չիկայ: Ընդատուրն ալ թէ իր մէջը ու թէ ուրիշ տեղերու հետ՝ մանաւանդ ծովու վրայ շատ մենձ է: Բոլոր երկրին վրայ կրտիրէ կայսր մը, որուն կրպի թագ, որուն իշխանութիւնը բացարձակ ու անկոպար է ու կերթայ ժառանգութեամբ մանչ ու աղջիկ զաւկրներուն մէջը:

Գ. Բոլոր մոսկովի Արոպան հինգ մենձ մասեր՝ կամ նահանգներ բաժնած է, որ են՝ Ըրեւելեան ծովուն գոտիները, Սենձ հոսիովսան, Վոլգա հոսիովսան, Լաւրապի հոսիովսան ու Ըրեւելեան հոսիովսան, որոնք մէկանց 40 կուսակալութիւն (իբր փաշայք) կրբաժնրվին *), որոնցմէ դուրս է Լեհի թագաւորութիւնը:

*) Ընդհանուրապէս «...»-ներն են՝ Բեդրո-

Լսոնց ամէնուն մէջը կան 1607 քաղաք, 823 բերդեր ու սլաքօրնէր, սյսինքն պզտի քաղքրներ կամ աւաններ ու 67,000 մենծ ու պզտիկ գեղեր :

Պէտրոպոլի (Քէրոպոլի, Քէրէրպոլի) տէրութեան նոր կամ երկրորդ կայսերանիստ մայրաքաղաքն է իր համանուն կուսակալութեան մէջը Վէլա գետին ֆիննեան ծովածոցը մանելու տեղը, 11 մաս ու 55 թաղ բաժնած . որ ունի բերդ մը, աղվոր ճամբաներ, մենծ հրապարակներ, որբանոցներ, աղքատանոցներ, հիւանդանոցներ, 21 կրթարան քաղաքական անձանց ու 10 կրթարան զինուորական անձանց, համալսարան մը, ուրիշ շատ ուսումնարաններ, ուսումնական տեղեր (գրատուն մը 300,000 հատոր գրքերով) ու ընկերութիւններ, զանազան գործարաններ գորգի, կաշիի, մետաքսեղէն ու բամպակեղէն կտաւի, ոսկիէ ու արծաթէ գործւածքներու, ապակիի, շաքարի, և այլն . 141 եկեղեցի մոսկովի, ուրիշ դաւանանքներու, սյսինքն 3 ուղղափառի, 2 հայու, և այլն . (1833ին) 8110 տուն, որոնցմէ

պուռկ, Գինլանդիա (Գինիա), որ է Ռեժ Էլեանո-
նո-Էլեան . Լսթլանդիա (Լսթիա), Լիֆլանդիա
(Լիֆիա), Գուրլանդիա (Գուրիա), Սօսքիա,
Սօլէնսք, Փլէսքով, Էմֆքով, Գալէն, Նօյ-
կորօտ, Օլօնէց, Էրիսանկէլ, Սօլօտա, Լարօս-
լավ, Գօսգրօմա, Սլատիմիր, Էմֆ Սօլօտիմէր, Նիշ-
նէի (Վարի) Նօյկորօտ, կամ Նիշօկորօտ, Գամ-
պօլ, Ուրյէզան, Էմֆ Ուէզան, Գուլա, Գալուկա,
(Օսէլ, Գուրսք, Սօլօնէզ, Գիէվ, Ջէննիկօլ,
Փօլդաւա, Խարքօլ, Էմֆ Սլօպօտեան Ուգրանիա,
Էէգադէրինօսլավ, Վէրսոն, Սիմֆէրօփօլ, Էմֆ
Տաւրիա, Պէսարապիա, Սիլնա, Կրօտնօ, Սի-
դէպսք, Սնհիլէվ, Սինսք, Սօլէնսք, Էմֆ Սօլ-
հինիա, Բոտովիա ու Պիալըսգօք՝ որ յարիսպէս
խոստիտլո-Էլեան շքովէր : Լարի ուլլ խոստիտլո-
Էլեանէրը հին Էգատարանին հասերն էն :

մինակ 2814ը քարաշէն է . ու 445,135 բնակիչ . որոնց մէջը 25,000 ուղղափառ կան , 36,000 օտարազգի , սյսինքն՝ նեմօյէ , ֆրանսրդ , շվէտ , և սյլն , ու իբր 200,000 ծառայ , գեղացի ու վարձկան : Զոս է մոսկովի ուրիշ տէրութիւններու հետ ըրած առուտուրին գլխաւոր տեղը , որուն պատճառովը իր նաւահանգիստը (որ է իր մօտը Վաշինգտոնը բերդը կղզիի մը վրայ) ամէն տարի ինչուկ 1200 նաւ կուգան :

Սոսկիւ՝ կամ Սոսկու , իր համանուն կուսակալութեան մէջը Սոսկիւ ու Եաւզա գետերուն քովը տէրութեան առջի մայրաքաղաքը ու երկրորդ կայսերանիստ քաղաքն է , որ իր ընդարձակութեանը դիաց Եւրոպայի պինտ մենծ քաղաքն է . 1812ին ֆրանսրդներուն պատճառովը գրեթէ բոլոր երեցաւ , բայց ետքը առաջվընէ աւելի աղվոր շինվեցաւ : Ունի 30 արուարձան , 767 ճամբայ , 25 հրապարակ (տոպոլ) , 269 մոսկովի եկեղեցի , 1 ուղղափառի ու 1 հայոց ժամ , 56 հիւանդանոց , որբանոց՝ կամ անձանօթ հօրմէ ծնած տղոց բնակարան , ուր ամէն տարի 5000 տղայ կըմտնէ , ուրիշ օգտակար տեղեր , համալսարան մը , շատ ուսումնարաններ , ուսումնական տեղեր ու ընկերութիւններ . իբր 8400 խանութ , 261 գործարան , 305 լիճ՝ կամ ձկնարան , 502 պանդոկ , 1370 պարտէզ , 9353 տուն ու (ձմեռը) 306,000 բնակիչ : Վաղքին մէջ տեղն է կայսերաց հին պալատը ահագին մենծ շէնքով , որուն մէկ Եկեղեցւոյն մէջը մոսկովի կայսրները կ'օժվին : Եւ քաղաքն է մոսկովի իր մէջի առուտուրին պինտ մենծ տեղը :

Վինլանդիա կուսակալութիւնը , որ է մեծ դքսութիւն , ֆիննեան ու պօդնեան ծոցերուն քովէն կերթայ ինչուկ Եւրլանդիա , որուն մէկ մասը առաջ շվէտի տակ էր : Օրովու դիաց անհամար կղզիներով բոլորած է , որոնք կըսվին Ելանդ . իրենցմէ պինտ մենծ կղզին ալ կըսվի Ելանդ : Կուսակալութեան երևելի

քաղքըններն են՝ Ս Էդուարդ՝ ֆիննեան ծոցին քովը, ու Մ Կո, որ ատեն մը աստեղաց գլխաւոր քաղաքն էր 12,550 բնակիչով, որոնք աղէկ առուտուր կընեն: Կան հոս շատ գործարաններ ու համալսարան մը:

Ս Էլիո, լիֆլանդիա կուսակալութեան մէջը պալգիկ ծովուն մօտ երևելի առուտուրի քաղաք է, որ ունի ամբողջ մը, ուսումնարաններ, շատ գործարաններ շաքարի, հայլի, և այլն, կայսերական պալատ մը ու 46,800 բնակիչ: Ըսուտուրի համար տարին 1200էն աւելի նաւեր կուգան կերթան իր նաւահանգիստը:

Մ Էլիոն, իր համանուն կուսակալութեան գլխաւոր քաղաքն է սպիտակ ծովուն մօտ, որ ունի նաւարան, գործարաններ, առուտուրի ընկերութիւն մը ու 15,000 բնակիչ, որոնք աղէկ առուտուր կընեն: Մ Կուսակալութեան սահմանը կերթայ ինչուկ սառնապատ ծովը, որուն մէջն են աստեղաց կղզիները Ս Էլիոն, ուր կըրնակին սամոյատացիներ, Վ Էլիոն, ուր կըրնան կենդանիներ մուշտակի համար, ու Ս Էլիոն Օ Էլիոն (Ս Էլիոն), որ է Լ Էլիոնի ետքի հիւսիսային ծայրը, ուր հասարակօրէն մարդ չիբնակիր, միայն ձկնորսներ կուգան:

Վ Էլիոն ու Ս Էլիոն, իրենց համանուն կուսակալութիւններուն մէջը բերդաքաղաքներ են աղէկ առուտուրով:

Ս Էլիոն, Լ Էլիոն Ս Էլիոն գետին քովը, ու Ս Էլիոն Ս Էլիոն գետին քովը երևելի քաղքըններ են համանուն կուսակալութիւններուն մէջը, որոնք ունին շատ գործարաններ:

Ս Էլիոն Ս Էլիոն, կամ Ս Էլիոն Ս Էլիոն գետին քովը բերդաքաղաք է, որ և վոլկայի նաւարկութեան գլխաւոր տեղն է, 30,000 բնակիչով, որոնք աղէկ առուտուր կընեն: Հոս ամէն տարի Պետրոս Պօղոսին տօնաւաճառ կըլլայ, ուր ամէն դիաց շատ վաճառականներ նաև հայեր կուգան:

Պէլէվ՝ Տներէր գետին քովը ու Վարդօլ երևելի առուտուրի քաղքըներ են, որոնք ունին մէյ մէկ համալսարան :

Պէլմիլօլ, Սէշէն, Ռօլտօլ, Լէրադէրիմօլ ու Վակիմիլօլ, առուտուրի քաղքըներ են, ունին շատ գործարաններ ալ :

Ստիլիան, կամ Սր Ստիլիան, Լէքադէրիմօլ կուսակալութեան մէջը Տօն գետին քովը նոր քաղաք է, զոր խրիմի հայերը շինեցին (1780ին), որ օրէ օր կը մենծնայ, ունի գործարաններ մետաքսի, բամպակի, կաշիի, և այլն, ու 12,000 բնակիչ, որոնց մէջը 2300 տունէն աւելի հայ են, որոնք ունին վեց եկեղեցի, վանք ու դասատուներ :

Վէրսն կուսակալութիւնը խրիմի ու սև ծովուն մէջն է, ուր կը լսայ մոսկովի խիստ բարակ բուրգով ոչխարը : Լընելի է իր համանուն գլխաւոր բերդաքաղաքը Տներէր գետին սև ծովը մտնելու տեղը, որ ունի նաւահանգիստ, ուր կը կենան սև ծովուն մէջի պատերազմական նաւերը :

() Կասս, կամ Խոճաղէյ, նոր ու անուանի բերդաքաղաք է սև ծովուն քովը, ունի աղէկ նաւահանգիստ, ուր տարին 900էն աւելի նաւ կուգայ կերթայ, 250 շտեմարան ապրանքներու, պազար մը 550 խանութով, լաւարէլ մը, զանազան դասատուներ, 30 գործարան, 3830 տուն ու 41,550 բնակիչ, որ են զանազան ազգեր : Առուտուրը շատ անուանի ու բանուկ է :

Վրէճօրօլ (Կրէօրէօլէ) նոր ու աղվոր հայաքաղաք է Տնեղէր գետին քովը 2500 հայ բնակիչով, զոր իրենք հայերը անցած դարուն մէջը շինեցին, որոնք հոս եկան Պէսարապիսյի զանազան քաղքըներէն (Վիլիէն, Խամսյիլէն, Պէնտէրէն, Լըքիլմանէն, և այլն) : Աս տեղս առաջ կը սվէր թշնամ :

Սիֆիլօլ կամ Տարիմ կուսակալութիւնը սև ծովուն ու ազախու ծովուն քովն է, որ իր մէջը կաննէ

Խորը՝ կամ Տաւրեա ցամառակղզին, Խորը ու Նոյայե տնտեսութիւն, Տաման ցամառակղզին ու սև ծովու (չեռնոսոսա-
 շէան) խաղախններուն երկիրը՝ իբր 1676 քառակուսի մղոն
 տեղ 335,000 բնակիչով : Իր հիմնական մայրաքա-
 ղաքն է Սիֆիէրօֆօլ, ըստ տաճկաց Միսթիս, ուր կայ
 4 թաթարի մէծիտ կամ ճամի, 3 եկեղեցի ու 20,000
 բնակիչ, որոնց մէջը մեր ազգէն ալ կան :

Վիլիէ՛ կամ Վաֆա, նաև թիւրքոսիւ, հին ա-
 տնական խորմի մայրաքաղաքն է սև ծովուն քովը, որ
 ունի նաւահանգիստ, լուլարէլ, ու 5000 բնակիչ, որոնց
 մէջը հայ ալ կան, որոնք առուտուր կրնեն : Մասջ շատ
 մենծ էր, ուր կային 1200 տուն հայ :

Պարսոստոստաք, պղտիկ քաղաք է լեբանց մէջը,
 որ ունի սեկի ու կաշիի գործարաններ ու 3700 բնակիչ,
 որոնց մէջը շատ կան հռովմայ եկեղեցւոյն հպատակ հայեր,
 որ ունին եկեղեցի. իրենց ժողովրդապետը վենետիկի
 միսթարեան միարաններէն է :

Կան հոս ուրիշ քաղաքներ ալ :

Սիլիս, մենծ քաղաք է հին լիգուանիայի մէջ,
 որ ունի ուղղափառի համալսարան մը ու 25,000 բնա-
 կիչ լեհ, հրէայ, թաթար, և այլն :

Լոսթ կամ Լոսթիս, Սիլիսիա կուսակալութեան մէջը
 պղտիկ քաղաք է, ուր կայ ուղղափառ հայու եկեղեցի :

Սիսիլիէ՛ կամ Սիլիլ, համանուն կուսակալու-
 թեան գլխաւոր քաղաքն է Տնեբէր գետին քովը 16,000
 բնակիչով, որոնց մէջը հայ ալ կայ, որ ունին եկեղեցի :

Կոնստանթնուպոլիս, Բոսորիա կուսակալութեան գլխաւոր
 բերդաքաղաքն է 5610 բնակիչով, որոնց մէջը հայ ալ
 կան, որ ունին եկեղեցի ու եպիսկոպոս :

Հոս է Սիլիլ քաղաքը Տնեսդէր գետին քովը 7000
 բնակիչով, որոնց մէջը հայ ալ կայ, որ ունին եկեղեցի :

Պիսսոստոստաք, կամ Սիստոստաք գաւառը որ և
 Պիսսոստ, կամ Պիսսոստ լեւալու ալ կրտսի (1812ին) տաճ-
 կէն առնրված է, որուն մէկ կտորը պուղտանի մասն է,

մէկ կտորն ալ տաճկի վեսարասիան. կրսկսի սև ծովէն Վերսոնի արևմտեան դին ու Վանուբ գետէն ու կերթայ ինչուկ կամէնիցու սահմանը Ղուբ ու Տնեսդէր գետերուն մէջը 788 քառակուսի մղոն տեղ, ուր կան 8 քաղաք, 16 աւան, 1030 գեղ ու 469,800 բնակիչ: Վլխաւոր քաղաքն է Վիշնով, Պիւք՝ կամ Պզու գետակին քովը, որ ունի ուղղափառի եկեղեցի, հայու եկեղեցի ու եպիսկոպոս ու 19,500 բնակիչ, որոնց մէջը հայ ալ կայ:

Հօլուան՝ կամ Վօլն բերդաւոր քաղաք է Տնեսդէր գետին քովը հիմայ քիչ բնակիչով, որոնք աղէկ առուտուր կրնեն: Աս երկու քաղաքը պուղտանէն առնրված է:

Պիշնով, երևելի ամրոցաւոր քաղաք է 20,000 բնակիչով, որոնց մէջը թաթար ալ կայ, որ ունին մղկիթներ:

Իսոյել քաղաքը Վանուբ գետին հիւսիսային թևին վրայ է, որ առաջ Աեսարավիսյի պինտ աղվոր քաղաքն էր 30,000 բնակիչով, բայց հիմայ քիչ մը ինկած է, ունի 12,500 բնակիչ, որոնց մէջը հայ ալ կայ:

Վիլի, կամ Վիլիանովա (Նոր Տիլ) քաղաքը Վանուբ գետին սև ծովը մտնելու տեղն է, ունի, նաւահանգիստ, 3 եկեղեցի, մէկը հայոց, ու 6000 բնակիչ:

Միլիան՝ կամ Պիլիորոօ, ամուր քաղաք է Տնեսդէր գետին սև ծովը մտնելու տեղը, որ ունի ամրոց, նաւահանգիստ, արուարձաններ, 5 եկեղեցի, որոնց մէկը հայոց է, ու 12,600 բնակիչ: Առուտուրը շատ ծաղկած է: Իր սահմանին մէջը կան շատ աղի լիճեր, որոնցմէ առատ աղ կելէ:

Տօնեան՝ կամ Տօնախեան խաղտնեւոն երկրը Տօն գետին քովերը Տաւրիայի, ազախու ծովուն ու աժտէրիսանի մէջն է 3611 քառակուսի մղոն երկիրով ու մինակ 370,000 խազախ բնակիչով, որոնք բոլոր ձիաւոր զինուոր (հեծելաւոր) են, տէրութեան տուրք են

խտար, ձկնորսութիւն կրնեն, ու ունին իրենց յատուկ իշխանը, որ կրավի Ադաման՝ կամ Հէտման: Վլխաւոր քաղաքն է Չէրշէպ, կամ Հին Չէրշապ, ըստ տաճկաց՝ Քիւրման գաւէ 15,000 խաղախ բնակիչով, որ ունին 7 եկեղեցի: Հիմայ կըշինովի ասկից իրեք ու կէս մղոն հեռու՝ Նոր Չէրշապ քաղաքը, ուր կընստի խաղախներուն ադամանը:

Ս. Չովու (Վանոսոսաբէան) խաղախներու էրիկը, իրր 684 քառակուսի մղոն տեղ՝ թէպէտ Ասիայի մէջն է տօնաւիսեան խաղախներուն երկրին, գուպանին, կաւկասին ու աղախու ծովուն մէջ տեղը, ըսյց Տարիայի կուսակալին տակը ըլլալուն՝ հոս կըղնենք: Ունի 80,000 խաղախ բնակիչ տօնաւիսեան խաղախներու նման, որոնց գլխաւոր քաղաքն է Նէրշապէրիմապը, ուր կընստի իրենց ադամանը:

Լ, Լ, Հ Ե Ս Ե Ն:

Լ. Լէւասաբան՝ կամ Պոլոնիա, որ ատեն մը զատ թաղաւորութիւն էր ուրիշ զանազան մասերով, 1815էն ետքը բոլորովին մոսկովի տակը անցաւ, որուն սահմաններն են արեւելքէն մոսկովի երկիրը, հիւսիսէն ու արեւմուտքէն պոուշը ու հարաւէն կալիցիան ու գրագաւի երկիրը, որ ատեն մը իր մասերն էին: Իր մեծութիւնը 2331 քառակուսի մղոն է:

Է. Երկիրը ըստ մեծի մասին շիտակ է. մինակ հարաւային արեւմտեան դիերը կան լեռներ, որոնք գաւթաբերանց ծիւղերն են:

Վլխաւոր գետն է Սիպոսա, որուն մէջը կըմըտնեն աստեղաց Սան, Պոսի ու Պոլոսա գետերը. երեւելի են նաև Գուսնա ու Սիպոսա:

Երկրանկը բարեխառն է:

Վետինը բերրի է. ունի առատ ու ընտիր արմտիք, ընդեղէն, կանանչեղէն, քիչ միրգ, փայտ, լիւլիւն, քիթան, կանեփ, առատ ուտելու կենդանիներ,

մեղու, վայրի կենդանիներ, արջ, ընձառիւծ, վայրենի կատու, և այլն, որսի կենդանիներ. հանքերէն ունի քիչ արծաթ, երկաթ, պղինձ, կապար ու ածուխ:

Գ. Վլխաւոր բնակիչքն են լեհ, ետքը լիդուանցի, որ լեհի պէս սլավոնի աղգէն ելած են, ունին զատ լեզու, ռուսէն, մոսկով, նեմցէ, հրէայ, քիչ հռոմ ու թաթար, մէկանց 4,088,250: Վլխաւոր կրօնքը ուղղափառ հաւատքն է, բայց լթթրան ու ուրիշ ազանդաւորներ ալ կան: Ըրհեստները աղէկ կրծաղկին, շատ երևելի են չուխայի գործարանները: Ըռուտուրն ալ բանուկ է: Երկրին տէրը կամ թագաւորը մոսկովի կայսրն է, որ ունի հոս իրեն տեղակալը կամ փոխարքան, ասիկա նախագահ կը լայ ազգային ժողովին, որուն յանձնած է կայսրը երկրին կառավարութիւնը:

Կ. Եհաստան կրբաժնրվի ութը գաւառ՝ կամ վոյվոտայութիւն, որ են՝ Սիւզդալ, Վալէշ, Բլոյց, Ընիսիւսով, Սանիսլու, Ընիսլի, Բորոտիսլու ու Վրուգու, որոնց ամենուն մէջը կան 461 քաղաք ու 23,094 գեղ:

Սիւսիւս՝ կամ Սիւշու, առջի վոյվոտայութեան մէջը տէրութեան մայրաքաղաքն է Սիւզուլա գետին քովը, ունի 8 հրապարակ, 33 եկեղեցի, 2 հիւանդանոց, աղքատանոց, 2 յիմարանոց, անձանօթ ծնողացմէ ծնած տղոց բնակարան, համալսարան մը, ուրիշ շատ ուսումնարաններ, ուսումնական տեղեր, աստղաբաշխական դիտանոց, գործարաններ չուխայի, կտաւի, կաշիի, Լիւլիւնի, կառքի, և այլն, ու 126,000 բնակիչ, որոնց մէջը 30,000 հրէայ կայ: Ըռուտուրը աղէկ ծաղկած է: Հոս կրնաստի ուղղափառ արքեպիսկոպոս մը, որ է բոլոր լեհի առաջնորդը:

Ըսիւս քաղաքը որ Սիւշուի արուարձաններուն մէկն է Սիւզուլա գետին մէկալ գին՝ կամուրջով մը անոր հետ միացած է:

Երևելի են նաև Լյուպլին, Գլաչէշ, Սլափոժ, Բլոցոյ, Օպոնոց, և այլն :

Գ Լ Ի .

Գ Ր Ը Գ Օ Ս Ի Ը :

Ըղատ քաղաք է, որ իր սահմանովը մէյտեղ, որ է իբր 21 քառակուսի մղոն տեղ, առաջ լեհի թագաւորութեան մէկ մասն էր, ու 1815էն ետքը ազատ հասարակապետութիւն մը եղաւ աւստրիայի, մոսկովի ու պոլոշի պաշտպանութեան տակը, որոնց երկիրներուն մէջն է Սիստուլա գետին քովերը, ունի ըստ մասին լեռնային ու բերրի երկիր : Բնակիչքն են իբր 108,000 ըստ մեծի մասին ուղղափառ լեհ : Երկրին կառավարութիւնը սամկապետական է, ու ժողովողեան երեսօտիսաններու ժողովէն 'ի զատ, որ երկիրը կրկառավարէ, կսյ ծերակոյտ մըն ալ, որ օրէնքներուն գործադրութեանը հոգ կրտանի : Բոլոր երկրին մէջը կան 4 քաղաք, 77 գեղ ու 48 ագարակ :

Սյրաքաղաքն է Գլաչէշ, կամ Գլաչէշ, Սիստուլա գետին մօտ, ունի 9 արուարձան, 38 եկեղեցի (27 եկեղեցի ալ հիմայ երեսէ ձգած են), համալսարան մը, ուրիշ ուսումնարաններ, 5 մենժ գրքատուն, աղքատանոց, թագաւորական պալատ մը, ուր կրնստէին լեհի թագաւորները, գործարաններ չուխայի, կտաւի, կաշիի, մեղրիմոմի, և այլն, ու 24,870 բնակիչ : Ընտուտուրը շատ ծաղկած է, ուր կուգան մաճառի, կալիցիայի ու սիլէզիայի ապրանքները : Հոս կրնստի ուղղափառ եպիսկոպոս մը, որուն մայր եկեղեցին շատ հարուստ, վայելուչ ու անուանի է 26 խորանով ու 16 մատուռով, ուր կան լեհի շատ թագաւորաց գերեզմանները :

ԳԼ Ի Ե .

Տ Ե Ն՝ Կ Ի Ե Ի Ր Ո Պ Ե :

Թ . Աւրոպայի մէջ տաճկի երկիրը , որուն տաճկերները Րոմէլէ կըսեն , հիմայ շատ պզտիկցած է . իր սահմաններն են արևելքէն՝ մոսկովստանը (օղուն՝ կամ պէսսարապիան) , սև ծովը , ստամբոլի նեղուցը , մարմարա ծովը , կէլիպօլու պօղազըն ու արշիպեղազոսը , հարաւէն արշիպեղազոսը ու նոր հոռմստանը , արևմուտքէն յոնիական ու ադրիական ծովը ու հիւսիսէն մաճաոը , առտեալը ու պուգօլինան , ու կէյնայ (Ալէքի կղզիէն ՚ի զատ , որ միջերկրական ծովուն մէջը արշիպեղազոսին բերանն է) իրր 38 ու 48 լայնութեան ու 33 ու կէս ու 47 ու կէս երկայնութեան աստիճաններուն մէջը : Իր ընդարձակութիւնը հիմայ մինակ 8500 քառակուսի մղոն է :

Ք . Արկիրը ըստ մեծի մասին լեռնային է , ուր բոլոր իրարու հետ միացած լեռանց շարքեր են . բայց մջերնին այնչափ բարձրը չիկայ , որ գլուխը ամէն իժիր ձիւն կենայ : Հիւսիսային արևմտեան գին են Տիւրքիան լեռերը , որոնց մէկ մասը աւստրիայի երկրին մէջն է . բոլոր պօսնիայի մէջ իրենց ճիւղերը կըտարածեն , ու իրենց պինտ բարձր մասն է արնալուալուքին (ալպանիային) մէջը Գարաթաղը (Սոնդէ Նէլուօ , Չիւնիօտու) կամ սև լեռը : Իսոնց հետ կպած են հարաւային արևելեան գիաց Հիւսիս կամ Պալան լեռները , որոնք բոլոր տաճկի Աւրոպային , մանաւանդ բուսակի նահանգին մէջը անուանի են ու կերթան ինչուկ սև ծովուն քովը Իսիւէ պուրնու հրուանդանը : Իրենց ճիւղերուն մէկն է Ստամբոլու մօտ թիւրքի (Էիւրի) րաղըն : Սէլանիքի մէջն է Էլուս կամ Էյնօրդ բարձր լեռը : Թիւսսաղիսի (Թրհալսի) մէջն է Օլիպուս

կամ Լուսն՝ նախնեաց հռչակաւոր լեռը: Կան ուրիշ շատ լեռեր ալ:

Գ. Բոլոր երկիրը մինակ մէկ հատիկ մենծ գետ ունի, որ է Գառնո-Ք՝ կամ Գառնո, որ հոս իր մէջը շատ գետեր կառնէ, որ են՝ Սալմա՝ աւստրիայի սահմանին վրայ, Սօրմալ, Լաւո-Գա՝ կամ Օլգ, Սէրէլ, Բարո-Գ, և այլն, ու տասը բերնով սև ծովը կրմանէ: Տրէն՝ կամ Տրէնայցո, Պոննո՝ կամ Լուսնի, Սիլոպո, Սոննո ու Գառնո, կրմանեն Սալմա գետին մէջը: Սիլոպո, կամ Սիլոպոն, ըստ տաճկաց Եւնի պօլէ սոյն, Սիլոպո ու Սիլոպոն կամ Կիսսալ, Սէլանիքի ծոցը կրմառնեն: Սիլոպո՝ կամ Սիլոպո պալքան լեռանց վրայ կը բխէ ու արշիպեղազոսը կրմանէ: Լաւո-Քո՝ հոռմերէն Լաւո-Քո-Քո-Քո-Քո, կամ Լաւո-Քո թեւասաղիայի Բինտոս լեռնէն կելլէ ու հոռմատանի սահմանին վրայ ազրիական ծովը կրմանէ: Պոննո ու Տրէն՝ կամ Տրէնո ազրիական ծովը կրմանեն: Կան ուրիշ գետեր ալ: Ունի մենծ ու պզտիկ լիճեր ալ, Օնրէլէ լիճը մակերդոնիայի մէջը, որուն բոլորտիքը օրվան մը տեղ է, ունի շատ ձուկ: Գառնո, պզտիկ լիճ է թրհալա գաւառին մէջը Սիլոպոն կամ Պօրոս վիզէ գաւառին մէջը ու Բառնո գանուրի բերաններուն մօտ: Ուլաճ պուղտանի մէջ շատ կան պզտիկ լիճեր:

Գ. Երանակը ընդհանրապէս բարեխառն է. բայց հիւսիսային լեռանց մօտ տեղերուն օդը ցուրտ ու ձմեռը երկայն է. հարաւային դիերուն տաքը սաստիկ ու օդը ծանր է: Պինտ անուշ ու աղէկ երանակը Սէլանիքի դիերն է:

Գետինը պտղաբերութեան դիաց Եւրոպայի մէջ մէկ հատիկ է. ու թէպէտ իր մենծ մասը աղէկ գործըմած չէ, բայց անանկով ալ ունի անբաւ բերքեր. առատ արմաթիք՝ մանաւանդ հիւսիսային դիերը, մարիցորեն, բրինձ, տեսակ տեսակ խաւարտ ու կանանչեղէն, ընտիր ընդեղէն, պատուական ու առատ միրգ, փուրթուգալ, թուրինջ, լիմոն, ձիթենի, շէլէ Կոն-

«**Կ**», ընտիր գինի, առատ մետաքս, բամբակ ու լիւ-լիւն, մատուտակ, հալուէ, ծուծ, աղէկ քթան, կանեփ, տորոն ընտիր, ուսկից բուն անկորուտ կարմիր ներկ կը լսայ, լեղակ, գիտոր, խէժ, ափիոն, անտառներ ու մենժ ծառեր, աղվոր ծաղիկներ, խոտ, և այլն: «**Վարձեալ՝** ընտիր ձի, ուղտ, խոշոր էշ, ջորի, շատ արջառ՝ մանաւանդ հիւսիսային դիերը, գոմէշ, ոչխար մենժ պոչով ու բարակ բուրդով, այծ, խոզ՝ աւելի ուլահ պուղտանի մէջ, ընտանի ու վայրի թռչուններ, արջ, գայլ, քաւթարինէ (ձաշագ), շագաւ, ճագար, և այլն. մեղու ու մեղը՝ մանաւանդ ուլահ պուղտանի մէջ, շատ տեսակ առատ ու ընտիր ծովու ձուկ, և այլն: **Հանքերը** շատ են, այսինքն՝ ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, կապար, ծծումբ, աղ, պաղլեղ, աղբորակ, զանազան հանքային հողեր, աղէկ քարեր՝ մանաւանդ մերմեր, կիր, և այլն. բայց ամէնքն ալ երեսէ ձրգած են. մինակ ուլահ պուղտանի աղի հանքերը աղէկ կը գործըվին:

Է. Եստեղաց բնակիչքն են՝ տաճիկ, որոնք թաթարներու լուրջ ցեղէն առաջ եկած են, թաթար՝ որոնք զանազան ցեղեր կը բաժնըվին, հայ, հոռոմ, ուլահ կամ վալախ ու մոլտովան, պուլղար, սըրֆ, պօսնեցի, խրվաթ, որոնք սլավոնի ազգէն յառաջ եկած են, առնաւուտ՝ կամ ալպանիացի, հրէայ ու չինկեանէ, որոնց ամէնուն թիւը հիմայ իրր 8,600,000 կը սեպվի: Ընդհանուր լեզուն տաճկերէնն է. անկից ետքը ամէն ազգ իր մասնաւոր լեզուն ունի: Ուլահի ու մոլտովանի լեզուն լատիներէնէն ելած է: Հիմակվան հոռոմի լեզուն՝ կամ հոռմերէնը հինէն շատ տարբեր է: Ենաւուտի լեզուն սլավոնի ու հոռոմի լեզուէն խառնած է: Ընդհանուր կրօնքը մահմետական աղանդն է, բայց ամէն մէկ ազգ իր կրօնը կը բանեցընէ *): Երհեստները

*) Կարծիքով այսպէս ինչաշունին աստիկ Եստեղային զա-

այնչափ ծաղկած ու բանուկ չեն. բայց մեկ քանի բարակ ու վարպետական գործվածքներ կրգտնելին. այսինքն՝ երկաթի, պղնձի (դանակի՝ կամ թուրի երկաթ, և այլն), բամպակեղէն կտաւներ, մետաքսեղէն կերպասներ, գորգ, սեկ, թղթ, և այլն: Առուտուրը շատ ծաղկած ու երևելի է, զոր աւելի հայերը, հոռմրները ու հրէաները կրնեն աւտորիայի, Ֆրանսայի, Ինկիլիզի, մոսկովի, իտալիայի, Ասիայի զանազան տեղերուն ու Ափրիկէի հետ:

Եւ Արկրին տէրը թագաւոր մըն է, որ կրսվի Սուլթան՝ կամ փարիշահ (աշխարհապետ), նաև Խննդաւոր. ըստ եւրոպացոց խոյսը՝ նաև Սէթ Գէր: Իր իշխանութիւնը միապետական բացարձակ ու անկոպար է, ու կերթայ յաջորդութեամբ իր մանչ զաւկրներուն ու եղբարըր մէջը: Օննազան նահանգներուն ու գաւառներուն մէջն ալ կան իրեք դուղով ու երկու դուղով*) փաշաներ, միւթէսէլիմներ՝ կամ միւսէլիմներ (փաշայի փոխանորդ) ու գատիններ կամ դատաւորներ: Ինչոր տաճկի Արոպային կամ Բուսէլիին վրայ ընդհանուր կառավար կամ կուսակալ է Բո-Ջէլէ Գաղէտաշէրին, ու անկից ետքն է Պէլլէր Դէլին, որ է բոլոր բուսէլիի առջի փաշան:

Եւ հաճկի Արոպան հիմայ կրբաժնելի վեց նահանգ՝ կամ էյալէթ, որ են Բո-Ջէլէ (Մասնա-որ), կամ

նապան ազգէրը. 2,500,000 Գաճիկ, 260,000 Լաւաթ, 80,000 հայ, 2 Դիլնն հոռոմ, 1,400,000 զանազան սլաւոնի ազգէր, 1,300,000 ուլաճ ու Մալաթիան, 600,000 առնաթուր, 300,000 հրէայ, ու 80,000 չինիլեանէ:

*) Ինչու՞ որ ի՞նչ պատահայ նշան փաշաներուն իւրովի՞ երկայն գաւառան մըն է, որուն վրայէն յիւս առջ մը խելովն է ու անոր գլուխը սվլեւած գնորդի մը կայ:

Սօֆիա, ուր է նաև Ստամպոլ իր յատուկ սահմանովը. () և, որուն մէկ մասը միայն հիմայ տաճկի տակ է. Պօնտ, որուն մէկ մասը՝ կամ գաւառը աւստրիայի տակն է. Սլաւ ու Պոլսիան (Սլաւալիա ու Սնլսովիա), որոնք միայն Ֆրանսիային՝ կամ հարկադրու էրկրնէր են ու Սլեյի արշակաւորներն Եւրոպայի դիու կղզիներովը մէյտեղ, որոնց վրայ մասնաւոր կառավար է ծովապետը կամ գաբուտան փաշան: Եւ կղզիները հիմայ քիչ են, զի շատերը հոռմստանի տրվեցան:

Ստամպոլի սահմանը կամ վիճակը իր մէջը կառնէ Ստամպոլ քաղաքը, անոր արուարձանները ու նեղուցին (պողազ իշիին) երկու դիու գեղերը:

Ստամպոլ՝ կամ Իսլամպուլ, այն է՝ Կոստանդնուպօլիս (Կոստանդնուպօլիս), բոլոր տէրութեան թագաւորանիստ մայրաքաղաքն է երկրի լեզուի մը կամ ցամաքակղզիի մը վրայ մարմարա ծովուն հիւսիսային դին եօթը բլուրներու վրայ շինած, որ Պալատա արուարձանէն կրգատվի իր նաւահանգիստովը, որ է ծովածոց մը, ու Եսիայէն կրգատվի սև ծովուն ու մարմարա ծովուն մէջի նեղուցովը, որ է Չոպուրնն՝ կամ պողազ իշի, մինակ արևմուտքին դիաց ցամաքի հետ կպած է բոլորտիքը իրեք նեմցէի մղոն է՝ պարիսպով պատած որ ունի 26 դուռ: Յամաքակղզիին ձօթը՝ որ կըսվի սարայ պոլսնն է թագաւորին պալատը պարսպապատ: Քաղքին մէջը կան շատ հրապարակներ, 490 մենծ ու պղտիկ մզկիթ՝ կամ ճամի, (որոնց մէկ քանին հին ատենները հոռմի ժամեր էին, ինչպէս Ելիս սօֆիան, իբրևօր ճամի, և այլն) իր 4000 տաճկի աղօթարաններ (մէճիտ), իրեք եկեղեցի հայոց, որոնց մէկն է պատրիարգական իր 20 եկեղեցի հոռմրներու, (որոնց մէկ քանին 1821ին աւրըվեցան) 130 բաղնիք, շատ աղքատանոցներ (իմարէլ), խաներ, որոնց մէջը կան վաճառականներ ու օտարականներու բնակարաններ, երկու մենծ չարչ, անթիւ խանութներ աղնիւ ապրանքներով հինտի, մարրի, Եւ-

րոպայի, և այլն, շատ պաշտօնէր, երկու պէղակաւներ՝ կամ պէղակաւներ, այսինքն՝ ճիւղակէր պէղակաւներ ու ստանալ պէղակաւներ։ 30էն աւելի տաճկի գրքատուն, իրր 500 մենծ դասատուներ տաճկաց, կամ Ֆարսի, ու 1200էն աւելի պղտիկ դասատուներ որ է Ֆարսի. ու զանազան գործարաններ բամպակեղէն ու մետաքսեղէն կտանելու, ոսկեթել կերպաներու, գօտիի, Էմալի, թղթի, ոսկի ու արծաթ գործւածքներու, սուրի, հրացանի, երկաթի, և այլն։ Ոչ տուներուն թիւը ստոյգ կրգիացրիլ, զի փայտաշէն ըլլալուն յաճախ կրակներէն կերին կրքիւնան, ու ոչ բնակչաց թիւը որոշ կրծանուցիլ, ոմանք կրղնեն 500,000. բայց աս թիւը անստոյգ ու քիչ է։ Ըս բնակիչքն են տաճիկ, հոռոմ, հայ, հրէայ, և այլն։ Ըստաւորը շատ ծաղկած է։

Ստամպոլ ունի շատ արուարձաններ Ըսիսի ու Եւրոպայի դին։ Եւրոպայի դին երեւելի են ասոնք Լյէի-ո՛ կամ Լյէի, ստամպոլի նաւահանգիստին մօտ է քեաղէտխանէ գետակին քովը տաճիկ ու հայ բնակիչով։

Վաւալ փաշա արուարձանը Վալթային մօտ է գրեթէ բոլոր տաճիկ բնակիչով, ուր է հին ու նոր նաւարանը (Էրսիսի), գափուտան փաշային դիւանը (Էրսիսի), Գրչիսի՝ կամ նաւային զօրքին բնակարանը, ցորենի շտեմարաններ, և այլն։

Վաւալ, կամ Վաւալ արուարձանը ինքիրմ պարսպապատ քաղաք է ստամպոլու դիմացը՝ կամ հիւսիսային դին, ուր է Վաւալ Գուլիսի գղեակը 146 աստիճաններով։ Ունի իրեք եկեղեցի ու զղափառ լատինացւոց իրենց վանքերովը, 4 եկեղեցի հոռոմներու, մէկ եկեղեցի հայոց ու քանի մը ճամիներ։ Բնակչաց մենծ մասը քրիստոնեայ են, այսինքն հայ, հոռոմ ու եւրոպացիներ. տաճիկ ալ կայ։

Վեյոզլու՝ ըստ եւրոպացոց՝ Բեռն արուարձանը զալթայի հետ կպած է, ուր է Վաւալ սուրայի կրթարանը աղնուական տղոց տաճկաց, զանազան աղգաց դեսպան-

ներուն բնակարանները, 4 եկեղեցի լատինաց (որոնց իրերը ետքի առնները երեցան), և այլն : Իր բնակչաց շատը հայ ու հոռոմ է : Վալաթայի ու Բէռայի մէջ տեղն է ուղղափառ հայոց նորակերտ մայր եկեղեցին փառաւոր ու մենծ շէնքով :

Թոփիանի, գալաթային արուարձանն է տաճիկ բնակիչներով, ուսկից ՚ի վեր կըսկսին նեղուցին քովի գեղերը :

ՈՒՈՒՍՄԻԼԻ (մասնաւոր), կամ ՍՕՖԻԼՆա հանգը ունի 16 գաւառ կամ սանճաք, որ են՝ Սօֆիա (Պուլղարիա), Սելանիք, Բէռայի-Կիլիկի, Լաւի-Կիլիկի (Թեոսոպոլիս), Լաւի-Կիլիկի, Տելեֆի, Լաւի-Կիլիկի, Լաւի-Կիլիկի, Օրբի, Պերդիկի, Սելեուքի, Տաւրի, Լաւի-Կիլիկի ու Սելեուքի, որոնք զանազան գատըրք կամ թեմեր բաժնած են և ունին իրենց համանուն քաղաքները :

Սօֆիա, (Վախտայի) հին Սուրբիլի քաղաքին աւերակներուն մօտ երևելի քաղաք է, ուր կրնստի ուսումելին պէկլէրպէկին : Բնակիչքն են իբր 40,000 տաճիկ, հոռոմ, հրէայ ու հայ վաճառականներ : Լոուտուրը շատ ծաղկած է : Լսիկա հին առենը պուլղարիայի մայրաքաղաքն էր : Լս տեղս կամ ասոր մօտերն էր հին առնները Սուրբիլի կամ, Սուրբիլի ըստ յունաց ու պուլղարաց՝ Վախտայի քաղաքը :

Փիլիպի քաղաքը ունի գործարաններ բրդեղէնի, բամպակեղէնի, մետաքսեղէնի ու կաշիի ու 120,000 հոռոմ, պուլղար, տաճիկ ու (80 տուն) հայ բնակիչ, որոնք աղէկ առուտուր կրնեն :

Լաւի-Կիլիկի (Լաւի-Կիլիկի) մենծ ու անուանի պարբայապատ բերդաքաղաք է Սելեուք գետին քովը, որ ունի 40 մղկիթ, 22 բաղնիք, մենծ շէնքեր, 18 իջևան՝ կամ խան, երկու պէղէսթէն, շուկաներ, շատ խանութներ, գործարաններ մետաքսեղէնի, կաշիի և այլն, ներկարաններ ու 130,000 տաճիկ, հոռոմ ու (600 տուն) հայ բնակիչ : Լատիրնէ Ստամպուլէն ետքը տաճիկ Լաւի-Կիլիկի սոջի առուտուրի քաղաքն է :

Սելանի՛, կամ Թեապոնիէ (Տին Սակեդոնիայի մէջ) անուանի պարսպապատ առուտուրի քաղաք է իր համանուն ծովածոցին՝ որ է Սելանի՛ շէօրֆէղէ, ու Սարտար գետին քովը, ունի 3 ամրոց, շատ մղկիթներ, բաղնիքներ, 30 եկեղեցի հոռմըներու, մէկ եկեղեցի լատինաց, 40 սինովայ ու հռչակաւոր դասատուն մը հրէից, շատ գործարաններ ու 70,000 բնակիչ, որ են տաճիկ, 10,000 հոռոմ, որ ունին մետրապոլիտ, 22,000 հրէայ ու քիչ հայ: Ընդամենը շատ ծաղկած ու անուանի է: Իր քովն է Լեթոս կամ Լեթոսոզ լեւը, որուն վրայ կան 22 հոռմի վանք ու 500 մատուռ:

Սելանի՛ի գաւառն է Տին Սելանի՛ կամ Սելանի՛ Թաղաւորութիւնը, հիւսիսէն սահմանակից է աւստրիայի տէրութեանը: Ունի 700 քառակուսի մղոն երկիր ու 800,000 բնակիչ, որ են սելֆ սլավոններէն առաջ եկած, կրթօսին սլավոններէն ու հոռմի գաւանանքը ունին: Լեթոսք հիմայ 1815 ու 1829ին եղած դաշամը տաճիկն տարեկան աւարք (վրէլ) տալով, մասնաւոր ազգային ազատութիւն առին, ու հիմայ ունին իրենց զատ կառավարութիւնը գլուխը կամ իշխանը, որուն իշխանութիւնը զաւկէ զաւակ պիտի երթայ: Այն հոս տաճիկ ալ:

Վիսաւոր քաղաքն է Պելլեղոս՝ ամուր բերդով ու երկու պարիսպով Սալա գետին Վանուք խառնելու տեղը մաճառքի սահմանին վրայ, ուր է մաճառքի ու տաճիկի առուտուրին գլխաւոր տեղը:

Վանայի վանք, (Վրակոյէ վանք) հոստեղաց իշխանին իշխանանիստ քաղաքն է:

Իստանբուլի (Ստամբուլ՝ կամ Ստամբուլ) համանուն գաւառին՝ կամ Լեթոս-պոլիս (Լեթոսիային) գլխաւոր քաղաքն է Պոլսան գետին քովը ազրիական ծովէն իրեք մղոն հեռու: ունի 16,000 բնակիչ, որ են տաճիկ, հոռոմ ու իրր 600 տուն ուղղափառ, որոնք ունին եպիսկոպոս մը: Ընդամենը աղէկ է:

ներ սեկի, կտաւի, և այլն ու 15,000 (40,000) տաճիկ, հոռոմ, (իրբ 100) հայ ու հրեայ բնակիչ :

Ըս նեղուցին քովը երկու հատ բերդ կամ դղեակ կայ Սեբասթիա ու Վիլիսիա ու Վիլիսիա ըսլած՝ ասիայի գիւղ գում գալէսի ու չանագ գալէսի բերդերուն դիմացը, որոնք պատերազմի ատեն նաւերուն ելումուտքը կը դիտեն՝ կարգելուն : Աւրոպացիք աս չորս բերդերուն կը բնն Բերդք Տարբանիւլէի, ինչպէս նեղուցին ալ կը սեն նեղուց Տարբանիւլէի :

ՊՕՍՆԸ նահանգը, որ ատեն մը մասնաւոր թագաւորութիւն էր, կիյնայ աւստրիայի երկրին՝ կամ մաճառքին, ադրիական ծովուն ու սըրֆի մէջը 730 քառակուսի մղոն լեռնային երկիրով, բնակիչքն են պօսնացի՝ որ շլաւոններէն յառաջ եկած են, կրիստին շլաւոններէն ու իրենցմէ ոմանք հոռմի դաւանանք ունին, ոմանք ալ մահմէտական են : Բոլոր երկիրը իրեք դուրով փաշայի մը տակ է ու կը բաժնըվի հիմայ իրեք գաւառ, որ են՝ Պօնոս կամ Ղաւաթիէ, Ղեբուէ կամ Ղեբուցիօլէն ու Օլօբիէ :

Ըսջի գաւառին մէջն է Սեբասթի Պօնոս՝ կամ Սեբասթիո նահանգին գլխաւոր բերդաքաղաքը, որ ունի իրբ 100 ճամի, գործարաններ հրացանի, թուրի, և այլն, ու 65,000 (18,060) բնակիչ, որոնք աղէկ առուտուր կընեն :

ՈՒԼԸ ՊՈՒՂՏԸՆ, կամ Վալաշիա ու Սեբասթիո՝ հին Ղաւաթիոյ մէջը երկու իշխանութիւններ են տաճիկ հարկատու քրիստոնէ իշխաններու տակ :

ՈՒԼԸ, կամ ՎԸԼԸՎԻԸ, առտեալի, մաճառի պանատ գաւառին, մոլտալի ու Ղանուր գետին մէջը տեղն է, Ղարբադ լեռանց արեւելեան ու հարաւային դին՝ 1100 քառակուսի մղոն ըստ մասին լեռնային երկիրով : Ղանուր գետէն ՚ի զատ ունի ուրիշ պղտիկ գետեր, Սեբեկ, Ընու, Ըլուրա, Տոմպօլէյա, և այլն : Աղանակը ցրտկեկ է ու երկիրը շատ պտղաբեր :

գլխաւոր բերքերն են ցորեն, մարիցորեն, փայտ, արջառ, ոչխար, ձի, անբաւ աղ՝ կամ աղքար, առատ ու բնտիր պտուղ, և այլն:

Բնակիչքն են ուլա՛ կամ ձալա՛, հին հռովմայեցիներէն առաջ եկած հերձուածող հռովմ դաւանանքով, որոնց լեզուն աւրած լատիներէն՝ կամ իտալերէն է: Աննաև մաճառ, հայ, հռոմ, հրէայ, չինկեանէ, և այլն, մէկանց 900,000 հոգի, որոնց վրայ տիրող իշխանը կըսվի հօմբօփօր՝ կամ Պէյ, զոր տաճիկը կըդնէ:

Պոլսէ՛լը, ուլա՛հի իշխանանիստ մայրաքաղաքն է հումպօվիցա գետին մօտ փայտէ կամ գերանէ ճամբաներով ու ըստ մեծի մասին պղտիկ տուներով, ունի 60 եկեղեցի ու 30 վանք ուլա՛հի, 2 եկեղեցի հայոց պղտիկ դասատունով մը, մէկ եկեղեցի ուղղափառ լատինաց, ուր կերթան ուղղափառ հայերն ալ, որոնք քիչ են հոս ու 60,000 բնակիչ, որոնց մենձ մասը ուլա՛հ են:

Չեօնլի՛ւ, պուղարի գեղ է Պուքուէղի մօտ, ուր կայ ուղղափառ լատինի եկեղեցի, ուր է նաև վալաքիայի ուղղափառ լատին եպիսկոպոսը:

Բլա՛նօլու՛նի, առուտուրի քաղաք է Պուքուէղէն առտեալ երթալու ճամբուն վրայ:

Ֆօշա՛ն, քաղաք է Սիլքով գետին քովը՝ որ անկէ կա երկու մաս կըբաժնէ, որոնց մէկը ուլա՛հի երկրին մէջն է ու մէկալը պուղտանի: Ունի 4000 բնակիչ, որոնց մէջը իբր 120 տուն հայ կայ, որ ունին երկու եկեղեցի:

ՊՈՒՂՏԵ՛Ն կամ ՄՈՒՏԵ՛ՎԻԸ, հարաւէն ունի սահման ուլա՛հը, հիւսիսէն ու արևելքէն Բրուգ գետը (Ալէսարավիան), ու արևմուտքէն պուգօվինան ու առտեալը: Պուգօվինան, որ էր պուղտանի մէկ մասը, աւստրիայի անցնելէն ետքը, պուղտան ունի իբր 800 քառակուսի մղոն երկիր, որ աւելի լեռնային է քան ուլա՛հը: Իր գլխաւոր գետերն են Բրուգ ու

Սէրէէ՛: Լճղանակը ցուրտ է: Վետինը շատ աղէկ ու պտղաբեր է, բայց աղէկ գործըված չէ: Իր բերքերը ուլահի հետ նոյն է. ասոր կենդանիները աւելի խոշոր կըլլան: Բնակիչքն ալ նոյն ազգէն ու նոյն լեզուով են, որոնք կըսվին Պոլլոնցի, Դոլլոնցի՝ կամ Դոլլոնցի. կան հայ, հրէայ, մաճառ, նեմցէ ու շինկեանէ ալ, մէկանց 240,000 (ըստ այլոց՝ 360,000): Իր իշխանը ուլահի պէս հօբօբօր՝ կամ Պէյ՝ կըսվի:

Լճու, (ըստ եւրոպացւոց Լճասէ) երկրին իշխանանիստ մայրաքաղաքն է Պահլու գետակին քովը՝ պուքուէշի նման ճամբաներով ու շէնքերով, միայն իբր 300 քարաշէն տներ կան. որոնցմէ ՚ի զատ ունի 43 եկեղեցի ու 26 վանք մօլտավի, ուր և կրնստի իրենց մետրոպօլիտը, մէկ եկեղեցի ու վանք ուղղափառ լատինաց, որոնք ունին հոս եպիսկոպոս մը, ու 25,000 բնակիչ, որոնց մէջը 80 տուն՝ կամ 400 հոգի հայ կայ, որոնք ունին եկեղեցի: Լճուտուրը շատ ծաղկած է:

Պօլլոնցի (Պօլլոնցի), առուտուրի քաղաք է պուգօվինային մօտ 6000 բնակիչով, որոնց մէջը 400 տուն՝ կամ 2060 հոգի հայ են, որ ունին երկու եկեղեցի:

(Էնո, պղտիկ բայց անուանի քաղաք է իր աղքատի հանրին համար. որուն բնակչացը մէջը կան 150 հայ:

Սօմոն, պղտիկ քաղաք է Սօլտավա գետին Սէրէթ խաւնըվելու տեղը: Իր բնակչացը մէջը կան 70 տուն հայ, որ ունին եկեղեցի մը:

Վալլուս (Վալլուս), Վանուր գետին քովը աղէկ նաւահանգիստով առուտուրի քաղաք է 7000 բնակիչով: Հոս կուգան շատ մաճառականներ աւստրիայի երկիրներէն, տաճկէն՝ նաև ստամպօլէն ծովով ու ցամաքով:

ԿԻՐԻՏ, հայերէն Կրէթէ, ըստ եւրոպացոց Վանսի՝ նահանգը մենձ կղզի մըն է միջերկրական ծովուն մէջը արշիպելագոսին բերանը 36 մղոն երկայնութեամբ, 10 մղոն լայնութեամբ ու 197 քառակուսի մղոն լեռնային երկիրով, որ ունի պղտիկ գետեր, ըստ

մասին առողջ եղանակ, շատ ձիթենի, ընտիր ու խոշոր խաղող, գինի, լիմոն, թուրինջ, նուշ, և այլն, ու 240,000 բնակիչ, որոնց իրեք մասին մէկը հոռոմ է ու երկուքը տաճիկ: Բոլոր կղզին կրբաժներով իրեք գաւառ, որ են Գափթէ, Հափթ (Գափթ) ու Ուէլ-Ֆի (Ուէլ-Ֆի), որոնք ունին մէյմէկ փաշայ կառավար ու իրենց համանուն գրեխաւոր քաղքըները: Աս կղզիին անմիջական կառավարութիւնը օսմանցիի թագաւորը հիմայ եգիպտոսի փոխարքային՝ կամ փաշային տուաւ:

Գափթէ, կղզոյն պարսպապատ մայրաքաղաքն է, ունի բերդ, նաւահանգիստ ու 15,000 բնակիչ, որ են տաճիկ, հոռոմ, հրէայ ու հայ, որ ունին եկեղեցի:

Այոցօ ու Իսլամփէ կիրիտին հարաւային ու հիւսիսային դին երկու հատ գրեթէ անբնակ կղզիներ են: Առքինը ունի 3 նաւահանգիստ:

Կ Գ Օ Ի Ն Ե Բ Բ, որ են Սնրմարա ծովուն, Արշիպեղազոսին ու միջերկրական ծովուն (ագ րէնիպէն) մէջը, գարուտան փաշային տակը մասնաւոր նահանգ (Էյուլէ) մը կրսեպովն, որոնցմէ ոմանք Ասիայի դին են (որոնց երեւելներուն վրայ տես տաճիկ Ասիային մէջը) ու ոմանք Արոպայի դին, ուր միջերկրական ծովուն մէջը մինակ կիրիտ կղզին է, իսկ արշիպեղազոսին մէջը տաճիկ տակ հիմայ քիչ կղզիներ կան, որոնցմէ երեւելներն են՝

Սէֆէփթէ, (Սաֆօլթթէ, Սաֆօ), Ստամբուլէն ելած ատենը Արոպայի պինտ առջի կղզին է, որ ունի մէկ աւան, 2 գեղ ու ամրոց ու 1500 տաճիկ ու հոռոմ բնակիչ:

Ասոր մօտ է դէպ ՚ի պողազ հիսարրին ցամարը Իմրօ կամ Իմրօ կղզին 4000 բնակիչով ու աղէկ նաւահանգիստով:

Գաշօ կամ թափօն կղզին ունի առատ մէրմէր 6000 բնակիչ ու իրեք աւան:

Ինթէ կամ Ինթօն (Արաթփէն), կղզին երեւել է

իր մասնաւոր հողին պատճառովը, որ կանուանվի Կա-
լէնէան, ու կըսվի թէ զանազան ցաւերու ու կտորըվածի
նաև օձի խածուածի դեղ կը լայ : Ըս կղզին ունի
համանուն քաղաք մը, գեղեր ու 8000 բնակիչ :

Ըսոնցմէ 'ի զատ կան ուրիշ քանի մը պզտիկ կղզ-
ղիներ :

Գ Լ Ի Ի՛

Յ Ո Ի 'Ն Ե Ս Տ Ե 'Ն :

Մ . Հոռմըները տասը տարիէն աւելի իրր տաճ-
կէն ապստամբ կենալէն ետև 1830ին ազատ աղգ՝ կամ
տէրութիւն եղան ու նոր թագաւորութիւն ունեցան,
որ է հին յունաստանի մէկ մասը : Ըս նոր հոռմստանի
թագաւորութեան սահմաններն են՝ հիւսիսէն տաճկի
Լւերոպան (Թևսսաղիա, Ըննալուալուք, և այլն), արև-
մուտքէն նոյն երկիրը ու յոնիական ծովը, հարաւէն
միջերկրական ծովը ու արևելքէն արշիպեղազոսը, ու
կիյնայ գրեթէ 36 ու կէս ու 39 ու կէս լայնութեան
ու 39 ու 44 երկայնութեան աստիճաններուն մէջը :
Տաճկի սահմանին դին իր սահմանագլուխը լուսն՝ կամ
Գօլուսնի ծովածոցէն ինչպան Ըրբայն ծովածոցը, որ է
'Սարբաս Էօրֆէզէ, գնացող գիծն է : Իր մեծութիւնը
800 քառակուսի մղոն կըսեպվի :

Բ . Լըրկիրը աւելի լեռնային է քան թէ դաշտային :
Գլխաւոր լեռերն են՝ Էրէնս յունայ՝ կամ Հելլէնալանս,
որ իրենց ճիւղերը բոլոր ցամաք երկրին մէջը կըտարա-
ծեն ու ինչուկ ծովու քով հրուանդանները կերթան :
Ըսոնց գլխաւոր մասերն են Օլբաս (Լարս), կամ Գա-
նայիտ՝ հիւսիսային դին, Բասանասոս, ըստ տաճկաց
Պարնաս քաղը՝ Իկվատիայի մէջը . Օլբաս լեռը, Սանէա
լեռները, և այլն : Պինտ բարձր լեռն է Գայլէրէս՝
կամ Սարբէ Լալէայն լեռը մոնսյի մէջը :

Հատ մենձ գետեր չունի. երևելիներն են՝ Լճաւս՝ կամ Լճաւս, որուն միայն մէկ մասը հոս է. ()Ֆէէ՛ կամ ()բֆէու, որ մօռայի Լարթէնի լեռնէն կուգայ ու արգատիայի ծոցը կը մտնէ. Լարուս՝ կամ Իբէս, որ նոյն լեռնէն կինջնայ ու մանեայ ծոցը կը մտնէ: Կան ուրիշ գետեր ալ: Իր լիճերուն մէջը երևելի է Լիւսալայի՛ կամ Գոփուլայի՛ լիճը:

Լաղանակը ընդհանրապէս բարեխառն ու մաքուր է. բայց ցած տեղերուն օդը այնչափ առողջ չէ, մանաւանդ օտարականներու:

Գետինը դեռ աղէկ գործըլած չէ, բայց բերրի է. ունի արմաթք, մսրիցորեն, բրինձ, ընտիր միրգ՝ հասարակ ու ազնիւ, թութ, ձիթենի, դարնի, շէլէ ու յոյնուս, նուշ, լիմոն, փօրթուղալ, խաղող, չամիչ, հասարակ ու ընտիր գինի, քթան, կանեփ, Լի-Լի-ն, տորոն, անտառներ, ձիւթ (գալէրան), մեղր, մետաքս: Լղէկ արջառ, ոչխար, ձի, ձուկ, և այլն: Հանքերէն ունի ընտիր մէրմէր, ուրիշ հասարակ քարեր, արծաթի՛ կապարի ու երկաթի նշաններ, ծծումբ, աղ, պաղլեղ, հանքային ջրեր, և այլն:

Գ. Գլխաւոր բնակիչքն են հոռում՝ կամ յոյն զանազան ցեղեր բաժնած: Լսոնց մէկ ցեղն են մանեացիները հին լակեդեմոնացիներէն առաջ եկած, որոնք Սանէս լեռներուն վրայ կը բնակին, բոլոր կտրիճ ու ուժով մարդիկ են, աւազակութեամբ կապրին: Կան նաև ուլաճ, առնալուտ, հրէայ, քիչ տաճիկ, և այլն: Ընդհանուր լեզուն նոր հոռմերէնն է. տաճիկերէնն ալ շատ բանուկ է: Տիրող կրօնքը հերձուածող հոռմի դաւանանքն է: Լճէն բնակչաց թիւը իբր մէկ միլիոն կը սեպվի, որոնք արհեստներու ու երկրագործութեան մէջ շատ ետք մնացած են, ինչուկ հիմայ ձկնորսութեան, առուտուրի ու նաւարկութեան ետեւէ էին:

()սմանցիին տէրութիւնը 1830ին հոռմներուն ազատութիւնը ընդունեցաւ ու հիմայ (1832ին) իրենց

Թագաւոր մը ընտրելեցաւ, որ է Պապիէոսյի հիմնական
Թագաւորին երկրորդ որդին Լուգովիկոս ()ԹԹ՝ կամ
()ԹԹոն, որուն իշխանութիւնը միապետական՝ բայց
հոռմըններուն ազգային ժողովովը չափաւորած է, ու
պիտի երթայ որդւոց որդի: Տէրութիւնը ունի հիմայ
յատուկ զօրք:

Գ. Իտլոր նոր հունաստան՝ այսինքն ցամաք եր-
կիրը (որուն գլխաւոր մասը Սօսս*) է) ու արշիպե-
ղագոս ծովուն կղզիները մէկանց կը բաժնորվին ըստ հի-
մնական կարգաւորութեան 10 նահանգ՝ կամ կուսակա-
լութիւն. որ են՝ Լարիօն (Լարիօ՝ կամ Լարոս) ու Կո-
րնթոս, Լարոս ու Լարոն (Լարոն, Լարոն), Սիսակոն, Լար-
գոս, Լարգոն, Լարգոն ու Լարգոն, Լարգոն, Լարգոն,
ու Կորնթոս, Լարգոն ու Պարոս, Լարգոն (Լարգոն) ու
Լարգոն ի պէս: Լս նահանգներն ալ կը բաժնորվին
զանազան գաւառներ:

Լարոն նահանգին մէջն է Լարգոն (Լարգոն, Լար-
գոն Կորնթոս) երկրին հիմնական գլխաւոր պարըս-
պապատ քաղաքը, ուր կը նստին Թագաւորը ու երկրին
մեծերը: Ունի 20,000 բնակիչ, նոր դասատուներ,
աղէկ նաւահանգիստ, և այլն:

Կորնթոս (Կորնթոս), հին անուանի քաղաք է մօ-
ռայի կիրճին հարաւային դին, որ ունի 5000 բնակիչ
ու երկու նաւահանգիստ: Ինչուկ հիմայ շատ անշքա-
ցած էր աս տեղը, բայց հիմայ սկսաւ շէննալ:

Լարգոն (Լարոն), վայելուչ քաղաք է հին անու-
անի Լարոն քաղքին տեղը ու Սիսակոնյի աւերակնե-
րուն մօտ:

*) Սօսս՝ կամ Սօրէս՝ ըստ հնոց՝ Պերղոպոնիսոս՝ Բեթ
ցամաքի դէմ ինչ է, որ Բեթսի Կորնթոսի կիրճովը ցո-
մաք Երիւրէն հեթ ի պէս է, ու ինչ ինչ աստիճանով ին-
քսանը ինչ 7 նահանգ. որ են՝ Լարգոն, Լարգոն,
Լարգոն, վերի Սիսակոնիա, վարի Սիսակոնիա, Լար-
գոնիա ու Լարգոնի:

Արայիայի մէջն է Պարէի պարտա (Բարտաս) բեր-
դաքաղաքը Բարտասի՝ կամ Լյնիպոնիի ծովածոցին քո-
վը՝ նաւահանգիստով՝ 10,000 բնակիչով ու աղէկ առու-
տուրով :

Հոս է նաև Հելու-Ֆեճ (Բիւրեհիցա) քաղաքը :

Սիսիիայի մէջ է Լճարին (Լիւճարին, Կոճարին),
ամուր քաղաքը 3000 բնակիչով, որուն նաւահանգիս-
տը յունաստանի պինտ մենծ նաւահանգիստն է :

Սիւլուսի (Սիւլուսի), ամուր քաղաք է 7000 բնա-
կիչով, ուր 1711ին մեր գերապատիւ Սիսիթար արքան
իր առաջի վանքը շինեց, որ հիմայ աւրած է :

Լըրևելի են նաև Լըրթաթի գղեկաւոր քաղաքը,
Գալաթիա բերդաքաղաքը, Լիւրթուսի նոր քաղաքը
ու Սիլիս աւանը՝ որ մանեացիներուն գլխաւոր տեղն է :

Լաֆոնիայի մէջն է Սիլիսթրի (Սիլիսթրի) 15,000
բնակիչով, որ է նախնեաց Լիլիպոնի՝ կամ Սիլիսթրի
քաղաքը :

Հոս է նաև Սիլիպոնի (Սիլիպոնի, Կոթոնի Սիլի-
պոնի) ամուր քաղաքը համանուն կղզիին վրայ, որ
կամուրջով ցամաքին հետ կպած է :

Լիլիպոնի, լեռան մը տակ առուտուրի քաղաք է
10,000 բնակիչով : Լիլիպոնի համանուն երկիրը բուն հին
հռոմատանի (Լիլիպոնի) երկիրն է հիւսիսէն տաճկի եւ-
րոպային սահմանակից :

Լիլիպոնի կամ Լիլիպոնի քաղաքը՝ որ է Լիլիպոնի նա-
հանգին մէջը, հին ատենները աշխարհիս պինտ անուանի
քաղաքն էր, ու նորերս հռոմի տէրութիւնը որոշեց՝
ասիկա հիմակվան նոր յունաստանի թագաւորանիստ
մայրաքաղաքը ընել :

Սիլիսթրի, Լիլիպոնի (Լիլիպոնի, Լիլիպոնի) ու Գալաթի
(Տիլիպոնի), հին ատենները անուանի քաղաքներ էին, որ
հիմայ անշուք տեղեր են :

Ս'նասուլունիէ քաղաքը հոռմըններուն ապստամբութենէ ետքը երևելի եղաւ :

Իյնէպտիւնէ՛ կամ Իէփտիւն տաճկի Լւերոպային սահմանակից է Իյըրիպողին դիմացը, որ ունի համանուն բերդաքաղաք իր անուանակից ծովուն քովը 2000 բնակիչով ու պզտիկ նաւահանգիստով :

Իյըլէպօլ (Ելիւթօնիւ, Իյպէս), արշիպեղագոսին պինտ մենծ կղզին է 60 քառակուսի մղոն երկիրով, որ բարակ նեղուցով մը ցամաքէն զատված է. ունի 40,000 բնակիչ : Իր գլխաւոր պարսպապատ բերդաքաղաքը Իյըլէպօլ (Խալէիս) կղզին հարաւային արևմտեան դին է, ուսկից ցամաքը երթալու համար կարճ կամուրջ մը կայ, զի հոս նեղուցը շատ նեղ է, քաղաքը ունի նաւահանգիստ ու 16,000 բնակիչ :

Հոռմստանի մէկալ կղզիները գրեթէ բոլոր արշիպեղագոսին մէջն են, որոնցմէ հարաւային դիերունները կըսվին Գիլլաթիան (չիլլաթիան), որ մէկ տեղ ժողված՝ կամ շրջանակած ըսել է, զի ասոնց ամենքն ալ իբր թէ իրենցմէ մէկուն բոլորտիքը ման առած են. իսկ հիւսիսային դիերունները կըսվին սիլլաթիան սյսինքն ցրուեալ, զի ասդին անդին ցրված են : Իյրևելիներն են՝

Իյնպտ, արշիպեղագոսին պինտ աղւոր ու բերրի կղզին է, որ ունի գլխաւոր քաղաք աւան Գասպտ (ըստ սյլոց Իյան), զանազան գեղեր՝ ու 12,000 բնակիչ :

Ս'իւրլէիպտ սպտաէ՛ կամ Նիւ, բերրի կղզի է իբր 5000 բնակիչով ու համանուն քաղաքով, որ ունի նաւահանգիստ :

Իսլէիպիւլ՝ կամ Գիլնէ կղզին ունի առատ մետաքս, որուն բնակիչքը՝ իբր 20,000 հոգի՝ ժիր մարդիկ են : Կան հոս նաև շատ ուղղափառներ, որոնք ունին եպիսկոպոս :

Ս'իլիւպօլ, մրգաշատ ու գինեւէտ կղզի է 6000 բնակիչով, որոնք նաւարկութեան մէջը վարպետ են :

Շիլա կղզին ունի բամպակ ու գինի ու իբր 6000 բնակիչ, որոնք աղէկ առուտուր կընեն :

Տէլօ՝ կամ Սիլիլէ, մէկ անունով երկու պղտիկ կղզիներն են Շիրազի ու Սիդիսօզի մէջ տեղը :

Տէլէրճէնէ՛ կամ Սիլ կղզին ունի 7000 բնակիչ, որոնք քաջ նաւաւար են :

Պարս՝ կամ Ռարոս ու Լնփէպարս՝ կամ Իսինճէ պարս, երկու կղզի են, որ ունին ընտիր ճէրմակ մերմեր :

Նարշա՝ կամ Նարսոս, բարեբեր կղզի է 18,000 (10,000) բնակիչով, որոնցմէ 1500 հոգի ուղղափառ են, որ ունին արքեպիսկոպոս, վանք ֆուանչիսկաններու ու դասատուն :

Սանդո-բէն, երևելի կղզի է հրարուխ երկիրով, որ ունի ընտիր գինի, ու իրր 12,000 բնակիչ :

Ըսոնք բոլոր չիզլատեան կղզիներն են :

Սասաբէ՛ կամ Իշիլօս կղզին ունի իրր 300 տուն հողով բնակիչ :

Իլիէ կղզին իր համանուն կամ Ըթինայի ծովածոցին մէջն է, որ ունի ընտիր նուշ :

Չամլո-ճո՝ կամ Շիպրո, պղտիկ՝ բայց մարդաշատ կղզի է, որուն բնակիչքը նաւելու ու առուտուրի մէջ շատ քաջ են, ու աս ետքի ապստամբութեան ատենը շատ անուանի եղան :

Իր համանուն քաղաքը արշիպեղագոսին պինտ հարուստ ու աղէկ քաղաքն է :

Ըսոնք են երևելի սփրսփէան կղզիները :

Մ Ա Ս Ն Ե Ր Ր Ո Ր Դ

Ը Փ Ր Ի Կ Է :

Պ. Ափրիկէ ըստ Հնոց Լէբէոս հասարակածին մէջ տեղը ահագին մենծ ցամաքակղզի մըն է, որ իր արևելեան հիւսիսային զին միայն Սիւլէյիսի պարանոցով Ասիային հետ միացած է, արևելքէն ունի սահման կարմիր ծովը, կամ արաբիայի ծոցը ու հնդկաց ովկիանոսը, հարաւէն ու արևմուտքէն եթէովպացոց ու ազլանդեան ծովը ու հիւսիսէն միջերկրական ծովը: Իր ընդարձակութիւնը (կղզիներն ալ մէկ տեղ առնելով) 530,000, ինչուկ 630,000 քառակուսի մղոն կըսեպփի:

Բ. Արկիրին մեծ մասը մեզի դեռ անծանօթ ըլլալուն՝ իր հանգամանաց վրայ շատ բան չենք գիտեր: Ունի տեղ տեղ բարձր լեռեր, ծանօթներն են՝ Լէբէոս լեռնի, Արլուս լեռը արևմտեան հիւսիսային զին, Սոնօփոսէայ լեռը, և այլն: Արևելեան զին ինչուկ հարաւային ծայրերը կերթայ Լոբոպոս լեռերը:

Գ. Աս տեղաց սահմանակից ծովերն են վերը յիշվածները: Իրեք նեղուց ունի. այսինքն Կեդրուլոսը, կամ Նիլոլուսոսայի, որ և Սեդոպի նեղուցը, որ միջերկրական ծովը ազլանդեան ծովուն հետ կըմիացընէ, ու Պոպիլիէնի կամ Պոպիլիէնի նեղուցը, որ արաբիայի ծովը կարմիր ծովուն հետ կըմիացընէ. ու Սոպոպի նեղուցը, որ Սատակասքար կղզին ամբիկէի ցամաքէն կըզատէ: Իր ծանօթ մեծ գետերն են՝ Ալուս՝ ըստ տաճկաց նիլոպոսի, որ հապէշիստանի լեռանց վրայ կըբխէ ու երկու բերնով միջերկրական ծովը կըմտնէ, Սեոս գետ, որ արևմուտքէն

արևելք կերթայ, Սէնէլու, աղլանդեան ծովը կըմտնէ, Աստուխ, Օսթրո, Աոտո, և այլն: Սենն լճերը ու ծովակներն են Վաստ նիկրիտիայի մէջ, Սարալէ, և այլն:

Գ. Վերիկէ հասարակածին մէջ տեղը պրեցած գօտիին տակը ըլլալով եղանակը չափէ դուրս տաք ու նեղացուցիչ է, միայն միջերկրական ծովուն մօտ տեղերը զով կըլան: Իր շատ լճերը օդը քիչ մը կապականեն: Անասակար քամիներ ալ ունի, խամի, սամէլէ, և այլն:

